

ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



**Հանրահավաք նվիրված ԼՂՀ
անկախության հռչակման օրվան
Երևան 02.09 2022**

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(76-րդ տարի) Թիվ-9 (1667) ————— Սեպտեմբեր 2022

Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Սկրոպյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1- Առաջնորդող

Համահայկական նոր վերագարթունքն ու արցախյան նոր շարժումը (Էջ 1-2)

2- Տարածաշրջանային

Ժաննա Վարդանյան

Հայ-իրանական սահմանը՝ Թեհրանի համար կարմիր գիծ (Էջ 3-5)

Լիանա Պետրոսյան

Իրան-Ադրբեջան հարաբերություններում կրոնաքաղաքական վերջին զարգացումների շուրջ (Էջ 6-7)

3- Աշխարհաքաղաքական

Արաքս Փաշայան

Պարսից ծոցի հայ համայնքները և տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները (հայացք Երևանից) (Էջ 8-13)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

ԱՄՆ քաղաքականությունը ուկրաինական ճգնաժամում (Էջ 14-18)

Ազիզ Աբդրահմով

Կենտրոնական Ասիայում ճևարվորվում է ձգողականության նոր կենտրոն, և դա Ռուսաստանը չէ (Էջ 19-21)

4- Դաշնակցական բեմ

ԱԼՕ Գաթրճեան

Հայ ազատագրական շարժման մեծագույն նուիրեալ Գեորգ Չառուշին ձօնուած երգերը (մաս 1) (Էջ 22-27)

5- Պատմության լուսարձակ

Արարատ Հակոբյան

Դրվագներ Արցախ- Սյունիքի ազատագրական պայքարի պատմությունից (1722-1730 թթ.) (պայքարի սկզբնավորման 300-ամյակի առթիվ) (մաս 1) (Էջ 28-33) (մաս 1)

6- Հայ Կյանք

Անի Մելքոնյան

Չարենցը, «Երկիր Նաիրի»-ն ու Դաշնակցությունը (Մահվան 85-րդ տարեկիցի առթիվ) (Էջ 34-37)

Մարիամ Հովսեփյան

Հայկական հարցը «Մշակի» էջերում («Մշակ» օրաթերթի 150-ամյակի առթիվ) (Էջ 38-42)

7- Ընկերական գրույցներ

Վրէժ-Արմէն

Մեր մամուլի խճանկարը (Էջ 43-44)

Համահայկական նոր վերագարթոնքն ու արցախյան նոր շարժումը

Հայաստանի՝ որպես պետության գոյատևման համար բախտորոշ նշանակություն ունեցող իշխանափոխության գործընթացը, թվում է, թե հայտնվել է փակուղու առաջ: Ընդդիմադիր շարժումն առաջնորդող ուժերը շարունակում են կրկնել, որ պատրաստվում են իշխանափոխությունն իրականացնելու օրինական պայքարի ճանապարհով, իսկ իշխանության պահպանմամբ արդարադատությունից խուսափող ղեկավարությունը փաստում է, որ չի խորշելու անօրինական ու բռնի միջոցներով ճնշել իրեն գահընկեց անելու փորձերը: Իրավիճակի հանգուցալուծման հարցում գլխավոր շահառուն՝ ժողովուրդը, ի դեմս իր մեծամասնության, լուռ և կրավորական պահվածքով հետևում է իրադարձություններին այնպես, կարծես երկրում և նրա շուրջը տեղի ունեցողն իր հետ աննշտություն չունի:

Միսալ կլինի մտածելը, թե ժողովրդի նույն մեծամասնությունը չի գիտակցում իր գլխին կախված լրջագույն սպառնալիքների գոյությունը, չի զգում սոցիալ-անտեսական ծանրացող իրավիճակը, անտարբեր է երկրի դիմագրաված ծանրագույն մարտահրավերների նկատմամբ և չի փափագում արմատական փոփոխությունների, երկրի կորացած մեջքը շտկելու մասին: Ենթակայական ու մասնավոր հարցերը կարևորելով համարժեք չափով՝ պետք է արձանագրենք, որ ժողովրդի կրավորականության հիմնական պատճառներն են խոր հիասթափությունը հերթական իշխանություններից և անորոշությունն ապագայի հարցում: Շոշափելիորեն չպատկերացնելով, թե ինչ է սպասվում երկրին հերթական իշխանափոխությունից հետո, պարզ մարդը հանգում է մակերեսային եզրակացության, թե ընթանում է պայքար իշխանության համար, որի առավելությունները տեսանելի չեն, և միաժամանակ մեծ է հավանականությունը, որ վատ կացությունը կարող է փոխարինվել վատթարագույնով, երկրի դիմագրաված մարտահրավերներին կարող են ավելանալ նորերը: 2021 թ. խորհրդարանական ընտրությունները փաստեցին, որ կրած պարտության և շարունակվող նահանջի տեսանելի իրողությունը ժողովուրդը գերադասեց ընդդիմության առաջարկած լավ ապագայի անորոշ հեռանկարից: Իհարկե, որպեսզի ընդդիմության խոստացած ապագան հնարավորինս սպառնալից ու մոայլ տեսք ունենա, գործող իշխանությունն իր տոտալ քարոզչությամբ, ինչպես և օտարահպատակ իշխանության պահպանմամբ շահագրգիռ արտաքին ուժերը քիչ ներդրում չեն ունեցել:

Հայրենիքի ողբերգական կորուստների ազդեցության ու համապարփակ ճգնաժամի լաբիրինթոսում հայտնված ժողովուրդը ենթագիտակցորեն հասկանում է, որ Հայաստանն ու Արցախը կարող են գոյատևել միայն համընդհանուր վերափոխության պարագայում: Կյանքի հասցրած շննեցնող հարվածներից հետո ողջ



Արթուր Մոսիյան. Սյրեխանակերտ 02.09.2022

մերկությամբ ակնառու դարձավ այն իրողությունը, որ ներկայի ու ապագայի հանդեպ անպատասխանատու, անփույթ ապրված տարիներից հետո հայտնվել ենք ազգային կյանքի համընդհանուր անկման ու ճգնաժամի առաջ: Ցանկացած բնագավառ՝ սկսած կրթությունից ու գիտությունից մինչև տնտեսություն, քաղաքականություն և մանավանդ ազգային արժեքներ ու իդեալներ, քայքայված է, հասցված պարզունակ մակարդակի, խեղված ու արհամարհված: Ի վերջո այսօրվա իշխանությունն էլ երկնքից չընկավ, այլ հարագատ պտուղն է մեր անկումների՝ ազգային և բարոյական նահանջների:

Ակնհայտ է, որ կամ Հայաստանն ու հայությունը վերջնականապես խորտակվելու են՝ կորցնելով պետականության հեռանկարը և վերածվելով ժամանակի մեջ անհետացող համայնքի, կամ բոլոր բնագավառների արմատական բարեփոխմամբ հնարավոր կլինի ձևավորել այն ամուր համակարգը, որն ունակ կլինի դիմագրավելու առկա և ավելի խորացող ու բազմապատկվող մարտահրավերներին:

Իսկ ինչ անել, և որտեղից սկսել ազգային նոր զարթոնքը: 34 տարի առաջ հայությունը մի օր արթնացավ և պարզեց, որ իր առջև ցցված է կենսական մի հարց, որը մինչ այդ կարծես գոյություն էլ չուներ: Հասկանալի դարձավ, որ հայության ապագան կախված է Արցախի խնդրի լուծումից: Պայքարի անհրաժեշտության գիտակցությունը կարճ ժամանակում նպատակի շուրջ ձևավորեց համագաղթի միասնականություն: Եվ այժմ՝ երեք տասնամյակի ճանապարհ անցնելուց հետո, հայտնվել ենք նույն կոտրած տաշտակի առաջ, երբ մի շարք առումներով իրավիճակն ավելի տագնապալի է, քան

Առաջնորդող

այն ժամանակ: Կրկին ակնհայտ է, որ Հայաստանի վերջնական անկումը, ինչին փորձում է հասնել ցեղասպան թշնամին, կլինի Արցախի խնդիրը թաղելուց հետո: Այլ խոսքով՝ բանալին կրկին Արցախում է, և եթե այդ բանալին ընկնի թշնամու ձեռքը, նա կփակի Արցախի դուռը և ապա իր առջև կբացի Հայաստանի դռները՝ որպես միջանցք, որպես անկյալներ, ռազմավարական նշանակության բնակավայրեր և այլ տարածքներ (ըստ էության, այս ծրագիրն արդեն իսկ ընթացքի մեջ է): Յուրաքանչյուր նոր ձեռքբերում թշնամուն դուրս կբերի նոր դռների առջև, և դրանցից ներս մտնելու հավակնությունը կվերանա միայն այն ժամանակ, երբ հայությունը կկորցնի իր վերջին միջնաբերդն ու ինքնապաշտպանության հնարավորությունը: Այս ամենի մասին են վկայում մեր երեքամյա պարտությունն ու նահանջը, որոնցից հետո էլ խաղաղության դիմաց թշնամիները պահանջում են նոր ու կոնկրետ զիջումներ:

2022 թ. սեպտեմբերի 2-ին Արցախի ու Հայաստանի հայությունը ոտքի ելավ՝ կրկին խոսելու Արցախի փրկության, նրա օրինական իրավունքների պաշտպանության մասին: Մենք դատապարտված ենք ևս մեկ անգամ սկսելու Ղարաբաղյան շարժումը, որի միջոցով և որին զուգահեռ կարող են լուծվել ազգային մյուս կենսական հիմնահարցերը, ինչը որ տեղի ունեցավ 1988 թ. Ղարաբաղյան շարժման ժամանակ: Չնոռանանք, որ հենց վերագաղթոնքի այդ շարժման ընդերքից ծնվեց Հայաստանի Հանրապետության վերանկախացման և ազգային նոր վերածնության գործընթացը:

Այսօրվա դիմադրական շարժումը կարող է համազգային ընդգրկում ունենալ, եթե հստակորեն ներկայանա իր գաղափարախոսությամբ և

նպատակներով, իսկ Նիկոլին հեռացնելու ցանկությունը այդպիսի գաղափար և նպատակ չի կարող լինել: Նիկոլն ու նիկոլիզմը՝ որպես չարորակ ուտուցք ազգային օրգանիզմում, որպես ավելորդ և անպիտան գոյացություն, կմեռնեն ու դուրս կշարտվեն, երբ օրգանիզմը սկսի առողջանալ:

Արցախյան շարժումը մեզ դուրս կբերի պարտությունների շրջափուլից և սեղանին կդնի նոր օրակարգ՝ մեր օրակարգը, և մեր օրակարգով Հայաստանը կդառնա իր խոսքն ունեցող և տեսակետը պաշտպանող գործոն: Երբ 1988 թ. սկսվեց Արցախյան շարժումը, արտաքին ոչ մի ուժ դրա նպատակները չէր ընդունում, որովհետև այն գալիս էր խախտելու հաստատված ստատուս քվոն և հավակնում էր ձևավորելու նոր իրականություն: Պայքարի միասնական բռնուցքի վերածված ազգը հատկապես ռազմական հաջողությունների միջոցով ստեղծեց այդ նոր իրականությունը, որի հետ սկսեցին հաշվի նստել օտարները, և որի շնորհիվ Հայաստան-Արցախը հաստատեց հարաբերական խաղաղություն որոշակի ժամանակահատվածի համար:

Ազգային-պետական կյանքի փորձությունների եզրագծին հայտնված հայության հերթական պտոթկումի համար պակասող խայծը ազգային գաղափարն է՝ նպատակը, այդ նպատակին տանող ճանապարհային քարտեզը և այն առաջնորդները, որոնք դրոշը կվերցնեն ու կառաջնորդեն ժողովրդին: Կարող է դիմադրության ներկայիս շարժումը ստանձնել այդ դերը և որդեգրել նոր օրակարգը: Գուցե սխալ է «ներկայիս շարժում» ասելը, որովհետև նրանք, ովքեր կզլխավորեն արցախյան նոր շարժումն ու ազգային նոր գարթոնքը, կսկզբնավորեն դիմադրության համահայկական նոր շարժումը: ■



Հայ-իրանական սահմանը՝ Թեհրանի համար կարմիր գիծ

Ժաննա Վարդանյան
Իրանագետ

Հուլիսի 19-ին Թեհրանում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի¹, այնուհետև նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի² հետ հանդիպումների ժամանակ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին հայտարարեց, որ հայ-իրանական սահմանը հազարամյա վաղեմություն ունեցող հաղորդակցական ճանապարհ է, և Իրանը դեմ է ցանկացած ծրագրի ու քաղաքականության, որը կարող է հանգեցնել դրա փակմանը: Սա Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հայ-իրանական սահմանի գոյությունը կարևորող ամենաբարձր մակարդակի հայտարարությունն էր: Օգոստոսի 10-ին ՀՀ վարչապետի հետ հեռախոսազրույցի ընթացքում հոգևոր առաջնորդի խոսքերը վերահաստատեց նաև Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսին³: Ըստ իրանական կողմի՝ հեռախոսազրույցի ընթացքում նախագահ Ռաիսին շեշտել է, որ հայ-իրանական սահմանը պետք է պահպանվի ցանկացած գնով⁴: Ավելի վաղ՝ հուլիսի սկզբին՝ Հայաստան⁵ և Ադրբեջան⁶ կատարած այցերի ընթացքում, Իրանի համար տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխության անընդունելի լինելու մասին հայտարարել էր նաև ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանին:

Ընդհանուր առմամբ Հայաստան-Իրան սահմանի անփոփոխելիության վերաբերյալ իր դիրքորոշումը Թեհրանն արտահայտում է Արցախյան 44-օրյա պատերազմի օրերից ի վեր: Թեև պատերազմի ընթացքում Իրանը պաշտոնապես հանդես էր գալիս «Ղարաբաղն Ադրբեջանին վերադարձնելու» օգտին, սակայն ռազմական գործողությունների ծավալմանը զուգահեռ, մասնավորապես՝ 2020 թ. հոկտեմբերի վերջին, երբ Ադրբեջանն արդեն օկուպացրել էր Արցախի հարավն ու մոտենում էր Սյունիքին, Թեհրանը սկսեց հայտարարել, որ տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունն իր կարմիր գիծն է՝ նկատի ունենալով հայ-իրանական սահմանը: «Իրանը հարգում է իր հարևան երկրների տարածքային ամբողջականությունը, և սահմանների աշխարհաքաղաքական ցանկացած փոփոխություն Իրանի կարմիր գիծն է»⁷, - հոկտեմբերի 24-ին Արցախին սահմանակից Խոդաֆարինի շրջան կատարած այցի ժամանակ ընդգծել էր Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ցամաքային զորքերի հրամանատար Մոհամմադ Փաքիուրը: Հաջորդող օրերին նմանատիպ հայտարարություններ արեցին բարձրաստիճան այլ զինվորականներ ևս: Այդ ընթացքում Իրանի բանակի և ԻՀՊԿ բարձրաստիճան զինվորականությունը գրեթե ամեն օր այցելում էր Արցախի հետ սահման: Իրանը շարունակում էր նաև զինտեխնիկա կուտակել սահմանին և անցկացրեց մի քանի զորավարժություն⁸:

Իրանական կողմի հայտարարությունները, սա-



կայն, պատերազմի ավարտով չսահմանափակվեցին: Նոյեմբերի 9-ի հրադարարի համաձայնությունից հետո իրանական դաշտում լուրջ մտահոգություն առաջացրեց ՀՀ տարածքով դեպի Նախիջևան, այսպես կոչված, միջանցքի ստեղծման և դրա հետևանքով հայ-իրանական սահմանի հնարավոր վերացման հարցը: Համացանցում հայ-իրանական սահմանի վերացումը պատկերող քարտեզներն Իրանում այնքան մեծ աղմուկ բարձրացրին, որ նոյեմբերի 16-ին Իրանի ԱԳՆ խոսնակ Մայիդ Խաթիրբադեն հայտարարեց. «Կեղծ քարտեզներ են հրատարակվել, որոնք ՋԼՄ-ների քարոզչությունն են: Իրանի սահմանները փոփոխության չեն ենթարկվել և սպազայում էլ չեն փոխվի: Մեր ընկալմամբ՝ դա սովորական տրանսպորտային ճանապարհ է, որի անվտանգության հարցը պետք է քննարկվի: Իրանն ուշադրությամբ հետևում է ինդրին: Ամբողջովին պարզ է՝ ո՛չ սահման է փոխվել, և ո՛չ էլ Իրանն իր հայտարարածից դուրս փոփոխություն կընդունի: Միջանցքը, որ, ստում են, սովորական տրանսպորտային ճանապարհ է, հենց այդ սահմանում ենք ընկալում»⁹: Այնուամենայնիվ, Ադրբեջանի կողմից, այսպես կոչված, «Ջանգեզուրի միջանցքի» շահարկման պայմաններում Իրանի Իսլամական Հանրապետությունը սկսեց ավելի հստակ արտահայտել իր դիրքորոշումները, և արդեն 2021 թ. հունվարին Իրանի ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆը հայտարարեց, որ ՀՀ տարածքային ամբողջականությունը Իրանի կարմիր գիծն է¹⁰:

Այս ուղեգիծն Իրանը պահպանեց նաև հետագայում: Մայիսին Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հանձնաժողովի նախագահ Մոջթաբա Ջոնուրը հայտարարեց. «Իրանի դիրքորոշումը շարժարկ, պարզ և վերջնական է. մենք ոչ մի դեպքում տարածաշրջանի սահմաններում փոփոխություն չենք ընդունի, տարածաշրջանի երկրների տարածքային ամբողջականությունը պետք է պահպանվի: Միաժամանակ մենք չենք ընդունի նաև մեր սահմանների մոտ որևէ արտատարածաշրջանային ուժի փրեղակայումը: Այդ իսկ պարճատուլ, եթե որոշվի, որ պետք է



Ասորանայի ձևաչափով երեք նախագահների հանդիպումը Թեհրանում՝ 19.07.2022

Հայաստանի փարաօրին մի մասը վերցվի, և մեր սահմաններին իրադրությունը փոխվի, այսինքն՝ մենք նոր հարևան ունենանք, մենք դա չենք ընդունի: Մասիկին սահմանները պետք է ամբողջովին պահպանված լինեն, և Իրանի ու Հայաստանի ընդհանուր սահմանը պետք է պահպանվի»¹¹:

Հայ-իրանական սահմանի գոյության և այդ համատեքստում ՀՀ տարածքով անցկացվելիք «միջանցքի» հարցում Իրանի այս դիրքորոշումն էլ Ադրբեջանում հակաիրանական արշավի ուժգնացման և 2021 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Թեհրանի հետ հարաբերությունների սրման պատճառներից մեկը դարձավ: Ֆորմալ առումով հարաբերությունների սրման շարժառիթն իրանական բեռնատարների ելումուտն էր, Արցախի ու Գորիս-Կապան ճանապարհին իրանցի վարորդների ձերբակալությունը: Այս ընթացքում ևս, ինչպես մեկ տարի առաջ, Իրանը նորից գորքեր կուտակեց սահմանին, անցկացրեց զորավարժություններ և նորից հայտարարեց տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխության անթույլատրելիության մասին: «Հարևան երկրների սահմաններում փոփոխությունների կանխումը Իսլամական Հանրապետության ուղղակիություններից է, և մենք համարում ենք, որ փարաօրինում ցանկացած աշխարհաքաղաքական փոփոխություն վստահ է մեր ներքին անվտանգությանը, և դա միշտ կարմիր գիծ ենք հայտարարել: Ըստ այդմ՝ ակնհայտ է, որ անսրբեր լինել չենք կարող»¹², - շեշտել էր ԻՀՊԿ ցամաքային զորքերի հրամանատար Սոհամմադ Փաքիուրը: Իրանի ու Ադրբեջանի միջև լարվածության թուլացումից հետո իրանական մեդիադաշտում լուրեր շրջանառվեցին, որ Ադրբեջանն ու Թուրքիան Սյունիքի վրա հարձակում էին նախապատրաստում, որը կանխվեց Իրանի կոշտ արձագանքի միջոցով¹³:

Խոսելով արդեն բուն «Զանգեզուրի միջանցքի» հարցում Թեհրանի մտահոգությունների մասին՝ պետք է նշել, որ այդ հարցի շահարկման սկզբից ի վեր իրանական լրատվադաշտն ակտիվորեն լուսաբանել է խնդիրը՝ «Զանգեզուրի միջանցքը» անվանելով

պատմական կեղծիք: Իրանցի վերլուծաբանները շեշտում են, որ չպետք է կիրառել «միջանցք» տերմինը, քանի որ դա ադրբեջանական քարոզչություն է¹⁴: Կովկասի հարցերով փորձագետ Ահմադ Քազեմին էլ առաջարկում է կիրառել «Զանգեզուրի կեղծ միջանցք» ձևակերպումը¹⁵: Իրանական կողմը «միջանցքի» հարցը բարձրաձայնել է նաև Ադրբեջանում միջազգային փորձագետների հետ այդ երկրի նախագահի կազմակերպած հանդիպումների ժամանակ:

Իրանցի փորձագետների գնահատմամբ՝ «Զանգեզուրի միջանցքի» ստեղծման դեպքում Իրանի համար առաջանում են հետևյալ խնդիրներն ու մարտահրավերները՝

- հայ-իրանական սահմանի՝ «Իրանի շնչուղու» վերացում, ըստ այդմ՝ Իրանից Եվրոպա երթուղիներից մեկի վերացում,
- Իրանի ու Կովկասի միջև աշխարհաքաղաքական խզվածքի առաջացում,
- Իրանի՝ Նախիջևանն Ադրբեջանին կապող դերի գրոյացում,
- պանթյուրքական աշխարհի միավորում և Իրանի տարածքների նկատմամբ ոտնձգություն,
- տարածաշրջանի էներգետիկ նախագծերից Իրանի դուրսմղում,
- Կովկասին և Կենտրոնական Ասիային Թուրքիայի արագ հասանելիության ապահովում, ըստ այդմ՝ Իրանի տարանցիկ դերի նվազում,
- ռազմական նպատակներով Իսրայելի կողմից միջանցքի օգտագործում,
- կովկասյան տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ազդեցության ընդլայնում:

Հատկանշական է, որ Իրանի ու Ադրբեջանի հարաբերություններում լարվածության թուլացումից և 2021 թ. նոյեմբերի վերջին Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ECO) գագաթնաժողովի շրջանակներում նախագահներ Իլհամ Ալիևի և Էրբահիմ Ռախիսի հանդիպումից հետո մամուլում սկսեցին շրջանառվել լուրեր, թե իբր Իրանը ևս համաձայնություն է տվել «Զանգեզուրի միջանցքի» ստեղծմանը: Այդ լուրերը, սակայն, ծավալուն հրապարակմամբ հերքեց Իրանի կառավարական IRNA լրատվական գործակալությունը¹⁶: IRNA-ն շեշտեց, որ շրջանառվող լուրերն առաջին հերթին քարոզչական նպատակ են հետապնդում: Գործակալությունը նաև մանրամասներ հաղորդեց Ռախիսի-Ալիև հանդիպումից՝ նշելով, որ Աշխաբադում Ադրբեջանի նախագահը որոշ պարզաբանումներ է ներկայացրել Ռախիսին և հաստատել, որ Հայաստանի ու Իրանի սահմանի վերացման ծրագիր չունեն: Իրանի նախագահն իր հերթին ողջունել է տարածաշրջանում «ավանդական հաղորդակցական ուղիների» բացումը: «Իրանը նշված միջանցքի ստեղծման հարցում որևէ կողմի հետ որևէ պայմանավորվածություն չունի և իր ազգային շահերի շրջանակներում որևէ կերպ չի շեղվելու պաշտոնական

սահմանների վերաբերյալ իր սկզբունքային դիրքորոշումից»¹⁷, շեշտադրել է IRNA-ն: Սա նշանակում է, որ այն, ինչն Ադրբեջանն ու Թուրքիան անվանում են միջանցք, Իրանն էլ, Հայաստանն էլ համարում են «ավանդական հաղորդակցման ուղիների» վերագործարկում, որտեղ առանցքային նշանակություն ունի, թե ում վերահսկողության ներքո է լինելու Հայաստանով անցկացվելիք երթուղին: Իրանի դիրքորոշման առանձնահատկությունը հենց սա է. Թեհրանը կարևորում է, որ Հայաստանի տարածքով ստեղծվելիք երթուղին լինի ՀՀ վերահսկողության ներքո, չհանգեցնի աշխարհաքաղաքական փոփոխության և որևէ կերպ չխաթարի հայ-իրանական սահմանի անձեռնմխելիությունը: Ուստի պնդումները, թե Իրանն աջակցում է Ադրբեջանի ու Թուրքիայի պատկերացումների «միջանցքին», տեղին չեն: Եվ առհասարակ ՀՀ տարածքով երթուղու գոյությունը, ինչ ձևաչափով էլ այն լինի, ձեռնտու չէ Իրանին, քանի որ Թեհրանը բախվում է իր տարանցիկ դերի նվազման խնդրին: Տարանցիկ նշանակությունը չկորցնելու տեսանկյունից է նաև Իրանի համար ողջունելի իր տարածքով դեպի Նախիջևան նոր երթուղու գործարկումը, որի շուրջ համաձայնությունը Թեհրանն ու Բաքուն ձեռք են բերել 2022 թ. մարտին: Իսկ «ավանդական հաղորդակցական ուղիների» վերագործարկման հարցում Թեհրանն առաջին հերթին կարևորում է Նախիջևանի տարածքով երկայտուղու գործարկումը: Սա Իրանի համար իր տարանցիկ երթուղիները դիվերսիֆիկացնող նշանակություն ունի և հատկապես կարևորվում է «Հյուսիս-հարավ», Պարսից ծոց-Սև ծով միջանցքների համատեքստում: Կարևորելով ՀՀ-ի հետ սահմանի գոյությունը՝ Թեհրանը փորձում է նաև ակտիվ ներկայություն ապահովել Սյունիքում, ընդ որում՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական, հասարակական-մշակութային: Պատերազմից հետո իրանական մի քանի պատվիրակություն է այցելել Հայաստան՝ քննարկելու «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցմանն Իրանի մասնակցության հարցը¹⁸: Թեհրանը նաև պատրաստակամություն է հայտնել մասնակցելու Գորիս-Կապան ավտոմայրուղուն այլընտրանքային երթուղիների կառուցմանը: Իրանական պատվիրակություններն այցելել են նաև Սյունիք, քննարկել համագործակցության ոլորտներին վերաբերող հարցեր¹⁹:

Սյունիքի նկատմամբ Իրանի հետաքրքրության ամենավաղ դրսևորումը թերևս Կապանում գլխավոր հյուպատոսություն բացելու Թեհրանի որոշումն է: Նախատեսվում է, որ հյուպատոսությունը բացվելու է մինչև 2022 թ. վերջը²⁰: Իրանն արդեն նշանակել է հյուպատոսին: Նա Մորթեզա Աբեդին Վարամինն է, որը եղել է Եմենում Իրանի դեսպանության գործերի հավատարմատարը²¹: Սյունիքում նաև խթանվում են մշակութային նախագծերը: Այսպես, օգոստոսի 10-11-ը Միսիանում անցկացվել է «Նավասարդ» հայ-իրանական խոհանոցային, մշակութային փառատոնը²²:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ Իրանը Հայաստանը դիտարկում է որպես «շնչուղի»՝ դեպի Եվրոպա այլընտրանքային և վստահելի երթուղի, ինչպես նաև պանթյուրքիստական և հակաիրանական առանցքի ձևավորումը կանխող գործոն, ուստի Արցախյան 44-օրյա պատերազմի օրերից ի վեր Թեհրանը հանդես է գալիս միջանցքային տրամաբանությամբ ճանապարհների ստեղծման, դրա կամ ցանկացած այլ գործողության հետևանքով հայ-իրանական սահմանի հնարավոր վերացման դեմ: Միաժամանակ Թեհրանը փորձում է ամրապնդել իր քաղաքական-տնտեսական ներկայությունը Սյունիքում: ■

Աղբյուրը

1. هب و مقطنم و هیروس، هیکرت رضه هب هیروس لامش هب ایماظن لمح St'u، دوب دهاوخ اهتسیرورت عجن، <https://www.isna.ir/news/1401042819070/>, 19.07.2022 (մուսը՝ 22.08.2022):
2. دنوش هندان نوری دایب هیروس رد تاراف قطنم زا امی اکیرا St'u، <https://www.ima.ir/news/84826212/>, 19.07.2022 (մուսը՝ 22.08.2022):
3. یادداشتی ای ایراکمه حطس شایزفا ایارب یزیر مازب ترورض St'u – نارهت رادیاب، <https://president.ir/fa/138735/>, 10.08.2022 (մուսը՝ 22.08.2022):
4. ره هب، نانتسنجرا و نارای ایازرم ظفح رب رومجس یزیر دیکت St'u، <https://www.isna.ir/news/1401052114810/>, 12.08.2022 (մուսը՝ 22.08.2022):
5. رجمن مقطنم کیستلبویز رد ری یغت هب مک ایمادقا ره اب: یناخمش St'u، <https://www.ima.ir/news/84814402/>, 07.07.2022 (մուսը՝ 22.08.2022):
6. ایروشک رادیاب عفانم مدنکن نیمات یتادراو تینما: یناخمش St'u، <https://www.ima.ir/news/84822024/>, 15.07.2022 (մուսը՝ 22.08.2022):
7. بنیرفادخ زرم رد دایب ینیمز یورین زا یمانگی رازقتسا iribnews.ir/fa/news/2879218/, 24.10.2020 (մուսը՝ 22.08.2022):
8. برغ لامش زرم قطنم رد شترا ینیمز یورین تیلو ناقشاع شایمزر St'u، <https://www.isna.ir/news/99080401687/>, 25.10.2020 (մուսը՝ 22.08.2022):
9. تسا هندان عر نارای ایازرم رد یریی یغت چه: هدازیبطخ St'u، <https://www.ima.ir/news/84111903/>, 16.11.2020 (մուսը՝ 22.08.2022):
10. St'u، نانتسنجرا و نارای ایچراخ روما یارزو رظن لدابت و گتفتگ mfa.ir/portal/NewsView/625900/, 27.01.2021 (մուսը՝ 22.08.2022):
11. دمد یمن ای لامش یاه زرم ری یغت ی مزاج نارای: یرولالود St'u، <https://bit.ly/3wIKK6y>, 16.05.2021 (մուսը՝ 22.08.2022):
12. ار ام شایمزر لیدال یرک ره زا رتعب هیاسمه یمتلود: روپکاپ رادرس St'u، <https://bit.ly/3KcuaM5>, 29.09.2021 (մուսը՝ 22.08.2022):
13. St'u، شمشنگ متفهه و د تاشراقانم یدنب عمج و هجیتن، <https://bit.ly/3Cswblx>, 14.10.2021 (մուսը՝ 22.08.2022):
14. St'u، دش خیب موبات از زاقفق نارحب، هایواوخ دایز ربارب یگداتس ای دویب، <https://www.ima.ir/news/84460281/>, 06.09.2021 (մուսը՝ 22.08.2022):
15. St'u، روزگنز یلج رودیوک هسیرس زا یتای ح یمتفتگان khabaronline.ir/news/1580958/, 19.12.2021 (մուսը՝ 22.08.2022):
16. St'u، ری یغت و امروشک تیککاح ضیقن اب تفتلایم رب نارای یرادیاب، <https://www.ima.ir/news/84561205/>, 01.12.2021 (մուսը՝ 22.08.2022):
17. Նույն տեղում:
18. St'u Արտաշատ-Մեղրի ճանապարհ, ներդրումային ծրագրեր, նոր չվերթներ. Իրանի նախարարը ներկայացնում է համատեղ նախագծերը, https://armenpress.am/arm/news/1053306.html?fbclid=IwAR0wJ9Z4mLfrxLOV1JFZ4xaot5oivguN0SPpmOV2YXhjhH8rKFK_2Wmu, 25.05.2021 (մուսը՝ 22.08.2022):
19. St'u، نایجی بگردا و یناری نارانگ هیاسم روضح یارب نانتسنجرا لیمات، <https://www.isna.ir/news/00061682242/>, 25.05.2021 (մուսը՝ 22.08.2022):
20. St'u، Իրանը գլխավոր հյուպատոս է նշանակել Կապանում, <https://armenpress.am/arm/news/1090131.html>, 11.08.2022 (մուսը՝ 22.08.2022):
21. St'u، دوش نانتسنجرا نایاق رد نارای لوسنکوس نیدبایح یضتوم، <https://www.isna.ir/news/1401052215912/>, 13.08.2022 (մուսը՝ 22.08.2022):
22. St'u «ՆԱՎԱՍԱՐԴ», հայ-իրանական մշակութային ու խոհանոցային տոն՝ Սյունիքում, <https://www.civilnet.am/news/670986/>, 13.08.2022 (մուսը՝ 22.08.2022):

Իրան-Ադրբեջան հարաբերություններում կրոնաքաղաքական վերջին զարգացումների շուրջ

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ-ի իրանագիտության ամբիոնի աշխատակից

Ադրբեջանում իսլամական կրոնական և փիլիսոփայական միտքն այսօր ծանր ժամանակներ է ապրում. բարոյական և հոգևոր արժեքներին վերադառնալու փորձերն իրականացվում են գաղափարական լճացման պայմաններում: Սա էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների վրա: Իրանի և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցության համար տարատեսակ գործոններ կան: Արհեստածին Ադրբեջանի Հանրապետության պետական գիտակցության եզակիությունը շիայական մտածելակերպի (միավորող գործոն Իրանի հետ հարաբերությունների համատեքստում) և թյուրքական ազգային հիմքի համակցումն է: Վերջինն էլ խոչընդոտներ է ստեղծում Թեհրանի և Բաքվի միջև հարաբերությունների զարգացման համար: Հատկանշական է, որ երբեմն շիայականության շուրջ հակասություններն էլ ուղեկցվում են պետական մակարդակում փոխադարձ մեղադրանքներով, սպառնալիքներով և հասարակական լոկալ բախումներով: Ասվածի տիպիկ օրինակներից են 2022 թ. օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիայում Ադրբեջանի Հանրապետության դեսպանատան վրա տեղի ունեցած հարձակմանը հաջորդած իրադարձությունները:

Օգոստոսի 4-ին Լոնդոնում գործող «Մահդիի սպասավորների միություն» կոչվող արմատական կրոնական խմբավորման մի խումբ անդամներ շիաների համար կարևոր մուհարամ ամսվա ծիսակատարությունների շրջանում հարձակվել էին Մեծ Բրիտանիայում Ադրբեջանի Հանրապետության դեսպանատան վրա: Դեսպանատան շենք մտնելուց հետո նրանք շենքի պատշգամբում բարձրացրել էին կրոնական դրոշներ, վրասել Հեյդար և Իլիամ Ալիևների դիմանկարները և պատռել Ադրբեջանի Հանրապետության դրոշը՝ բարձրաձայնելով Բաքվի իշխանությունների կողմից երկրի շիա մահմեդականների նկատմամբ իրականացվող հալածանքների մասին: Հատկանշական է, որ կազմակերպությունն իր կայքում պնդում էր, թե ցանկանում է «քաղաքակրթական գերակայություն» հաստատել¹:

Խմբավորման անդամներն անդրադարձել էին ադրբեջանական կառավարության կողմից երկրում որոշ շիա մահմեդականների նկատմամբ հալածանքներին: Գաղտնիք չէ, որ ադրբեջանցիների ճշող մեծամասնությունը շիա մահմեդականներ են, սակայն երկիրը հիմնականում աշխարհիկ պետություն է համարվում, ինչն էլ մտահոգությունների տեղիք է տալիս Իրանի համար, որը աշխարհում շիայականության գլխա-



վոր պաշտպանն է: Պատահական չէ, որ շատ փորձագետներ դեսպանատան վրա հարձակման նախաձեռնությունը կապում են Իրանի հետ, որը բազմիցս զգուշացրել է Բաքվին շիա գործիչների նկատմամբ բռնաճնշումների հետևանքների առումով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դեսպանատան վրա հարձակված «Մահդիի սպասավորների միությունը» հակաիրանական կազմակերպություն է, և դրա առաջնորդ Յասեր ալ-Հաբիբը Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի անձնական թշնամին է: Հենց այդ պատճառով էլ նույն խմբավորումը դեռևս 2018 թ. հարձակվել էր Լոնդոնում Իրանի դեսպանատան վրա²:

Որոշ փորձագետներ առաջ են քաշում այն վարկածը, որ դեսպանատան վրա հարձակումը ծրագրել էին հենց ադրբեջանական իշխանությունները՝ Իրանին մեղադրելու և երկրի ներսում հասարակական բողոքի ալիքը մեղմելու համար: Գաղտնիք չէ, որ վերջին շրջանում Ադրբեջանում ակտիվացել են շիա մահմեդականները՝ փորձելով միջազգային հանրությանը լսելի դարձնել կրոնաքաղաքական բռնաճնշումների և սահմանափակումների մասին, որոնք ադրբեջանական իշխանությունների կողմից կիրառվում են երկրի շիա հասարակության նկատմամբ: Շարժումը սոցցանցերում լայն քննարկման թեմա է դարձել հունիսի սկզբից, երբ Ադրբեջանի Հանրապետության շիաների ամենահայտնի առաջնորդ Թալեհ Բադերգադեն բանտում հացադուլ հայտարարեց³: Ադրբեջանում կարծում են, որ շարժումն իրանական գաղտնի ծառայությունների ծրագիրն է՝ ուղղված Ադրբեջանում աշխարհիկության խարխիլմանը և իսլամական հեղափոխության արտահանմանը:

Վերոնշյալի համատեքստում Ադրբեջանն ու Թուրքիան իրենց հերթին ամեն կերպ փորձում են

Թավրիզի և Ատրպատականի թյուրքախոսների շրջանում հակաիրանական տրամադրություններ սերմանել՝ ազդելով նրանց էթնիկական և կրոնական զգացումների վրա: Շատ դեպքերում այս պետությունները կեղծ տեղեկություններ են տարածում արցախյան հակամարտության հարցում Իրանի կառավարության դիրքորոշման վերաբերյալ: Դրա ազդեցության տակ Իրանում գործող որոշ պանթյուրքիստական խմբեր երբեմն ակտիվանում են՝ լոկալ մակարդակում բախումներ հրահրելով ոստիկանական ուժերի և Իրանում բնակվող մյուս էթնիկ խմբերի միջև: Ասվածի համատեքստում պետք է նկատի ունենալ, որ այս խմբերը համեմատաբար փոքր թիվ են կազմում այն թյուրքախոսների համեմատ, որոնք հավատարմություն են պահպանում իրանական իշխանությունների նկատմամբ: Ասվածի ապացույցն է այն, որ օգոստոսյան դեպքերի ընթացքում մի խումբ ակտիվիստներ, որպես Ադրբեջանում շիա մահմեդականների նկատմամբ հալածանքների դեմ բողոքի նշան, իմամ Հոսեյնի դրոշներ էին տեղադրել Թավրիզում Ադրբեջանի Հանրապետության հյուպատոսարանի մոտ:

Կրոնական գործոնից գատ՝ իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա բացասաբար է ազդել նաև Իսրայելի հետ Ադրբեջանի Հանրապետության մերձեցումը: Ընդհանուր առմամբ ադրբեջանա-իսրայելական երկկողմ հարաբերությունների զարգացմանն ուղղված արտաքին քաղաքական վեկտորը հակասում է Թեհրանի դիրքորոշումներին, քանի որ, ի լրումն արաբա-իսրայելական պատմական հակասությունների, իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա ազդում է Իրանի գլխավոր արտաքին թշնամի ԱՄՆ-ն:

Այս պահին, չնայած զգալի առաջընթացին և նույնիսկ ավելի մեծ ներուժին, անհնար է իրանա-ադրբեջանական հարաբերությունները բնորոշել որպես իսկապես բարիդրացիական: Չնայած այն հանգամանքին, որ երկու պետություններն էլ իսլամի շիայական կրոնական ուղղության հետևորդներ են, ակնհայտ է, որ Ադրբեջանն ավելի ու ավելի է աշխարհիկանում՝ ակտիվորեն մասնակցելով համաշխարհային տնտեսությանը (հաճախ՝ Արևմուտքի ակտիվ աջակցությամբ), մինչդեռ Իրանը, ընդհակառակը, շղթայված է Թեհրանի արտաքին քաղաքականության վրա ազդող խնդիրներով: Դրանցից, իհարկե, պետք է առանձնացնել սահմանադրորեն ամրագրված շիայականության քաղաքականացված գաղափարախոսությունը, որը որոշ հետազոտողներ բնորոշում են որպես «Խոմեյնիի պանիսլամական նեոշիայականություն», ինչպես նաև իրանական միջուկային ծրագրի շուրջ ընթացող քննարկումները:

Ամփոփելով հարկ է նշել, որ իրանա-ադրբեջանական հարաբերությունները դարձել են տարածաշրջանային կայունության և համագործակցության կարևոր գործոն: Սակայն այս փուլում ընդհանուր խնդիրների լուծման ակնկալիք չպետք



Լոնդոնում Ադրբեջանի դեսպանարանի գրավումը

է ունենալ, քանի որ դրանք կրում են բացառիկ խոր, համակարգային բնույթ: Բարոն և Թեհրանը, ինչպես վերը նշվեց, համագործակցության զգալի ներուժ ունեն: Սակայն Իրանը և Ադրբեջանը դժվար թե կարողանան օգտագործել այս հիմքը բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար՝ հաշվի առնելով այնպիսի զսպող գործոնների առկայությունը, ինչպիսիք են չլուծված տարածքային վեճը, Իրանի թյուրքախոսների շրջանում Թուրքիայի և Ադրբեջանի գաղափարական ազդեցությունը: Այս ամենին ավելանում են նաև «կողմնակի» կամ անուղղակի համալիր խնդիրներ՝ Իսրայելի նկատմամբ Իրանի և Ադրբեջանի վերաբերմունքի ակնհայտ տարբերություններ, արցախյան հակամարտություն և Հայաստանի հետ Իրանի սերտ հարաբերություններ, ինչպես նաև «կարմիր գծերի վերաբերյալ» Իրանի հայտարարություններ: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ իրանա-ադրբեջանական հարաբերությունների վերջնական կարգավորումը կախված է ոչ երկկողմանի բազմաթիվ գործոններից և, որպես հետևանք, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային հարաբերություններում շահագրգիռ այլ դերակատարներից: ■

ՌԴՈՄ

1. Տնւ B Лондоне захвачено посольство Азербайджана, <https://www.youtube.com/watch?v=0fZUCR99EMk> (մուտք՝ 28.08.2022);
2. Տնւ Нападение на посольство Азербайджана: почему Великобритания?, <https://vpoanalytics.com/2022/08/18/napadenie-na-posolstvo-azerbajdzhana-pochemu-velikobritaniya/> (մուտք՝ 28.08.2022);
3. Տնւ Талех Баирзаде проводит голодовку в Гобустанской тюрьме, <https://www.meydan.tv/ru/article/taleh-bairzade-provodit-golodovku-v-gobustanskoj-tyurme/> (մուտք՝ 28.08.2022):

Պարսից ծոցի հայ համայնքները և տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները (հայացք Երևանից)

Արաքս Փաշայան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ

Պարսից ծոցի արաբական միապետությունների և տեղի քրիստոնյա, այդ թվում՝ հայ համայնքների ուսումնասիրությունը քաղաքական և գիտական առումներով շատ կարևոր է ոչ միայն մերձավորարևելյան ուսումնասիրությունների, այլև Հայաստանի ազգային անվտանգության շահերի տեսանկյունից: Նախ՝ այն պատճառով, որ տարածաշրջանի պետությունների հետ Հայաստանն ունի սերտացող հարաբերություններ, իսկ վերջիններս միջազգային բարձր վարկանիշ ունեն: Հայաստանը Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ), Քուվեյթի և Կատարի հետ կնքել է բազմակողմ համագործակցության մի շարք պայմանագրեր, որոնք, սակայն, դեռ լիարժեքորեն գործնական դաշտ չեն տեղափոխվել ներքին ու արտաքին առանձին գործոնների ու խոչընդոտների պատճառով: Դրանք կապ ունեն տրանսպորտային ուղիների ոլորտում առկա դժվարությունների, Հայաստանում գերատեսչությունների շատ դեպքերում ոչ ճկուն ու դանդաղ կոտ գործունեության, Հայաստանում մի շարք կարևոր խնդիրների վերաբերյալ ռազմավարական ծրագրերի բացակայության, որոշ դեպքերում ոչ պրոֆեսիոնալ կադրերի ներգրավման, զբոսաշրջության ոլորտում առկա համակարգային խնդիրների, Մերձավոր Արևելքի շատ երկրների՝ Հայաստանն մուտքի արտոնագիր ստանալու դժվարությունների, տարածաշրջանում Հայաստանի արտաքին PR-ի՝ ինչ-որ իմաստով ձախողման և այլնայլ հարցերի հետ: Հայ համայնքներին տեղերում շատ լավ են ճանաչում, իսկ ահա Հայաստանը ճանաչելիության խնդիր ունի: Հայաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ տարբեր ժամանակներում այցելել են Պարսից ծոցի տարածաշրջան (ՀՀ նախագահների այցը Արաբական Միացյալ Էմիրություններ 2007 թ. և 2016 թ., ՀՀ վարչապետի այցը Կատար 2022 թ. և այլն), սակայն մինչ օրս այդ տարածաշրջանից նման մակարդակի բարձրաստիճան պաշտոնյաների այց Հայաստան չի եղել: Փոխարենը եղել են առանձին պաշտոնատար անձանց այցեր, ինչպես, օրինակ, ԱՄԷ-ի Բարձրագույն խորհրդի անդամ, Շարժայի էմիր Սուլթան բին Մուհամմադ ալ-Կասեմիի այցը Երևան 2005 թ.: Իսկ ահա 2013 թ. վերջինիս բարերարությամբ հիմնանորոգվեց և հանդիսավորությամբ բացվեց Հադարձինի վանական համալիրը:

Փաստ է, որ Հայաստանն իրեն պետք է ավելի ինքնավստահ զգա այս տարածաշրջանում, քանի որ Մերձավոր Արևելքի անվտանգային, աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և պատմա-աշխարհագրական համակարգի մի մասն է, և, բացի այդ, Պարսից ծոցի առանձին երկրներում, հատկապես Արաբական Միացյալ Էմիրություններում և Քուվեյթում,



կան հայ համայնքներ, իսկ մնացած պետություններում (Բահրեյն, Կատար, Սաուդյան Արաբիա և Օման) կա հայկական ներկայություն, ինչը կարող է կամրջի դեր կատարել հայ-արաբական հարաբերություններում: Հոդվածում փորձել ենք քննարկման առարկա դարձնել մի կողմից՝ Պարսից ծոցի տարածաշրջանին վերաբերող աշխարհաքաղաքական առանձին իրողություններ, մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի և Հայաստանի հարաբերություններն ու Պարսից ծոցի հայ համայնքները՝ հասկանալու տարածաշրջանի կարևորությունը Հայաստանի համար:

Պարսից ծոցի տարածաշրջանը միջազգային գործընթացների դիտանկյունից Արաբական գարնան համատեքստում

Վերջին տասնամյակների ընթացքում, հատկապես Սաուդյան պատերազմի ավարտից հետո, իսկ ավելի ստույգ՝ Արաբական գարնան դեպքերից ի վեր, Պարսից ծոցի արաբական միապետություններն աստիճանաբար վերածվեցին աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական առումներով միջազգային հանգուցային դերակատարների: Հատկանշական է, որ 2011 թ. Արաբական գարնան դեպքերի շրջանում, երբ Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ազգային անվտանգության համակարգը փլուզվում էր, արաբ երկարամյա շատ ու շատ առաջնորդներ հրաժարական էին տալիս կամ հեռացվում իշխանությունից, Պարսից ծոցի արաբական միապետությունները, չնայած ավտորիտար և պահպանողական քաղաքական համակարգի առկայությանը, կարողացան հաջողությամբ դիմագրավել ազգային անվտանգության դեմ ուղղված մարտահրավերներին և հաղթահարել ճգնաժամը թե՛ սեփական երկրներում,

թե՛ն իրենց երկրամասում: Արաբական առանձին պետություններ, որոնք նախկինում կարևոր դերակատարություն ունեին տարածաշրջանային գործընթացներում, ինչպես, օրինակ, Եգիպտոսը, սկսեցին կենտրոնանալ ներքաղաքական և համակարգային խնդիրների հաղթահարման վրա՝ ճանապարհ հարթելով այլ, առաջին հերթին՝ Պարսից ծոցի պետությունների ակտիվացման համար: Արաբական գարնան դեպքերի շրջանում աշխարհաքաղաքական նոր դերակատարություն ստանձնեց Թուրքիան, որը Կատարի հետ միասին վերջին շրջանում լայնորեն աջակցում էր «Մուսուլման եղբայրներ» շարժմանը Եգիպտոսում, Սիրիայում, Լիբիայում և այլ շրջաններում՝ նրանց տեղերում պատեհ պահի իշխանության բերելու նպատակով: Թուրքիան այդպիսով ոչ միայն ուղիղ կերպով սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերին, այլև խթանում էր հակակառավարական ռազմական և քաղաքական ընդդիմադիր շարժումները՝ առաջ բերելով արաբական մի շարք պետությունների և հասարակությունների փլուզումը: Սիրիայում Թուրքիան լուրջ ջանքեր ներդրեց Սիրիայի քրդերի՝ անկախությանը միտված քայլերը ջլատելու համար և, օգտվելով առիթից, վերջին տարիների ընթացքում օկուպացրեց Սիրիայի հյուսիսային շրջանները՝ ստեղծելով բուֆերային գոտիներ՝ համարելով, որ դա բխում է Թուրքիայի ազգային շահերից և խորքային պետության սկզբունքային գաղափարներից: Արաբական գարնան մեկնարկից հետո աշխարհաքաղաքական ակտիվություն ցուցաբերեց նաև Իրանը, որը 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո լարված հարաբերություններ ուներ Պարսից ծոցի միապետությունների հետ: Վերջիններս համարում էին, որ Իրանը շարունակաբար շահարկում է շիայական գործոնը, միջամտում հարևան պետությունների ներքին գործերին, թշնամական քայլեր անում՝ Պարսից ծոցի արաբական միապետություններում ապրող շիայական համայնքները դարձնելով «հինգերորդ շարայում»: 2003 թ. ԱՄՆ-ի Իրաք ներխուժումից և Իրաքում Սադդամ Հուսեյնի կամ տուննի իշխանության տապալումից հետո Իրաքում իշխանության եկան շիաները, որոնք սկսեցին նոր որակի հարաբերություններ կառուցել Իրանի հետ: Արաբական գարնան գործընթացներին ընդառաջ Իրանն ակտիվացրեց իր վերահսկողության տակ գտնվող պրոքսիների ռազմաքաղաքական գործունեությունը: Իրանը մեծապես շահագրգռված էր Թեհրան-Բաղդադ-Դամասկոս-«Հեզբոլլահ» կապի անխափանությամբ:

Մատոյան Արաբիան՝ տարածաշրջանային խաղացող

Վերը նշված գործընթացները, հատկապես շիայական գործոնի և «Մուսուլման եղբայրների» ակտիվացումը, մեծ տագնապ առաջ բերեցին Մատոյան Արաբիայում և դաշնակից պետություններում: Ծոցի արաբական միապետություններն այս շրջափուլում

աշխարհաքաղաքական բացառիկ ակտիվություն հանդես բերեցին՝ ոչ միայն կանխելու համար ազգային անվտանգության դեմ ուղղված մարտահրավերները, այլև վերաբժնորելու իրենց դերը: Գործընթացների առանցքում իսլամի հայրենիքը համարվող Մատոյան Արաբիան էր, որը տասնամյակներ ի վեր տուննի իսլամի ամենապահպանողական ուղղություններից մեկի՝ վահաբականության արտահանողն էր աշխարհի տարբեր անկյուններ: Թագավորությունը աշխարհի ամենահարուստ երկրներից է՝ ածխաջրածնային ռեսուրսների և մասնավորապես նավթի պաշարներով, որոնց վաճառքից գոյացած հսկայական կապիտալի շնորհիվ սաուդյան միապետությունը բավական ազդեցիկ դիրքեր ունի նաև միջազգային հարաբերությունների համակարգում: Մատոյան Արաբիայի տարածքում է գտնվում ամբողջ աշխարհի նավթի պաշարների մոտ 16-17 տոկոսը այսինքն՝ նավթի պաշարներով երկրորդն է Վենեսուելայից հետո: Ըստ ՕՊԵԿ-ի 2019 թ. տվյալների՝ Մատոյան Արաբիայի տարածքում ավելի քան 258 մլրդ բարել նավթ կա:

Արաբական գարնան սկզբում Մատոյան Արաբիայում ձևավորվեցին անհնազանդության և բարեփոխումների պահանջով հանդես եկող կրոնաքաղաքական և քաղաքացիական առանձին շրջանակներ: Զուգահեռաբար երկրի արևելյան՝ շիայական շրջաններում թափ առան անհնազանդության ակցիաները՝ շիաների իրավունքները հարգելու կոչերով: Թվում էր, թե շատ շուտով սաուդական թագավորական ընտանիքը կկործանվի, սակայն նրան հաջողվեց հաղթահարել ճգնաժամը ոչ այնքան քաղաքական բարեփոխումների, որքան սոցիալական ծրագրերի և անվտանգային կոշտ միջոցառումների շնորհիվ, ինչի ապացույցը շիա խարիզմատիկ գործիչ Նիմր ալ-Նիմրի մահապատիժն էր 2015 թ. հունվարի 2-ին: Հընթացս՝ 2011 թ. մարտին, Մատոյան Արաբիան ռազմական աջակցություն ցույց տվեց Բահրեյնի իշխող ընտանիքին՝ պահպանելու համար իշխանությունը և ճնշելու շիաների քաղաքացիական հուզումները:





ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը Սաուդյան Արաբիայի ԱԳ նախարար Ֆեյսալ բին Ֆարհան Ալ Սաուդի հետ: Մյունխեն 19.02. 2022 թ.

Փաստացի Սաուդյան Արաբիան դարձավ Պարսից ծոցի ազգային անվտանգության երաշխավորը: Հատկանշական է, որ տարածաշրջանային հանգուցային կազմակերպությունները՝ Արաբական պետությունների լիգան, Իսլամական համագործակցության կազմակերպությունը և Պարսից ծոցի համագործակցության խորհուրդը, որտեղ Սաուդյան Արաբիան ազդեցիկ լծակներ ունի թե՛ ֆինանսական, թե՛ քաղաքական և թե՛ վարչական առումներով, դարձան Ռիադի և դաշնակիցների ազգային հետաքրքրությունները պաշտպանելու գործիքակազմը: Նշված կազմակերպություններն ի գործի էրդան ինքնուրույն և անկախ կեցվածք ընդունելու Արաբական գարնան շրջանում: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ, օրինակ, Սիրիան, լինելով արաբական ընտանիքի անբակտելի անդամը, 2011 թ. նոյեմբերին վտարվեց Արաբական պետությունների լիգայից, իսկ 2012 թ. օգոստոսին՝ Իսլամական համագործակցության կազմակերպությունից: Նշենք, որ Սիրիայի նկատմամբ նման մոտեցումն աննախադեպ էր. 1979 թ. Իսրայելի հետ խաղաղության պայմանագիր կնքելու համար «արաբական ընտանիքից» վտարվեց Եգիպտոսը, որը վերականգնվեց միայն 1989 թ.: Իսկ ահա ներկայումս Իսրայելի հետ ամենասերտ համագործակցությունն արաբական աշխարհում ունեն հենց Պարսից ծոցի միապետությունները, որոնք Իսրայելի հետ համագործակցում են ամենատարբեր, այդ թվում անվտանգային ոլորտում՝ համարելով դա Պարսից ծոցի ամենակարևոր խնդիրը:

Սեփական երկրում և հարևանության շրջանում ներքաղաքական լարվածությունը հաղթահարելուց հետո Սաուդյան Արաբիան Արաբական գարնան գործընթացների ծիրում արաբական մի շարք երկրներում մի կողմից հակազդեցություն ցույց տվեց «Մուսուլման եղբայրներ» շարժմանը, մյուս կողմից աջակցություն ցուցաբերեց սալաֆիական ուղղվածությամբ ռազ-

մաքաղաքական խմբերի, իսկ որոշ դեպքերում՝ անդրկրոնական ընդդիմադիր շրջանակների՝ պայքարելու արաբական առանձին վարչակարգերի դեմ, այդ թվում՝ Սիրիայում: 2015 թ. Սաուդյան Արաբիան դաշնակիցների հետ ներգրավվեց Եմենում Իրանի կողմից հովանավորվող շիա հուսիներին ճնշելու ռազմական գործողություններում, հակամարտություն, որը մինչ օրս չի հանգուցալուծվել:

Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականությանը հակոտնյա հավակնություններ ուներ գաճաճ պետություն համարվող Կատարը, որը գազի պաշարներով աշխարհում երրորդն է. տիրապետում է համաշխարհային գազային պաշարների 14 տոկոսին: Բազմաթիվ վերլուծություններ և փաստական նյութեր ապացուցում են, որ կատարական «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունն իր ֆարքիկացված կամ փաստացի հաղորդումներով ծառայել է ոգեշնչելու «արաբական փողոցին», լուսաբանել է հեղափոխություններն ու հակակառավարական գործընթացները որպես համակիր՝ դառնալով Արաբական գարնան տեղեկատվական հարթակը: Մյուս կողմից՝ կատարական վերլուծական կենտրոնները, ըստ առանձին տեղեկությունների, ընդգրկված են եղել հեղափոխությունների մշակման և նախապատրաստման ծրագրերում՝ ամերիկյան համագործակցությամբ: Կատարը, որը, ի դեպ, նույնպես վահաբական կողմնորոշում ունեցող պետություն է, հետևողականորեն աջակցել է «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժմանը՝ առճակատման մեջ մտնելով Սաուդյան Արաբիայի և նրա դաշնակիցների, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրությունների և Եգիպտոսի հետ: Երկու երկրների միջև աճող հակասությունների պայմաններում հետագայում՝ 2017 թ. հունիսին, Պարսից ծոցի միապետությունները Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ խզեցին դիվանագիտական հարաբերությունները Կատարի հետ: Դոհային ներկայացվեց 13-կետանոց վերջնագիր, որը վերաբերում էր պետության արտաքին քաղաքական ուղենիշներին, «Մուսուլման եղբայրներ» շարժմանն աջակցելուն, Թուրքիայի և Իրանի հետ համագործակցությանը, «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերությանը և առնչակից այլ հարցերի: Մինչ օրս Դոհայի և կողմերի միջև խնդիրը նույնպես հաղթահարված չէ:

Այսպիսով, եթե Սաուդ պատերազմի շրջանում տարածաշրջանի հարցերը մեծ մասամբ կարգավորվում էին գերտերությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կողմից, ապա դրա ավարտից հետո տարածաշրջանի երկրները հայտ ներկայացրին ինքնուրույն կարգավորելու եղած խնդիրներն ու հակասությունները: Որպես արդյունք՝ ազդեցության համար սուր մրցակցություն սկսվեց: Հատկանշական է, որ Պարսից ծոցի առաջնորդներն իրավամբ բնութագրվեցին որպես «ուժեղների իշխանություն» («strongman»), որոնք տիրապետում են «փափուկ» և «կոշտ» ուժերի գործիքակազմին: Մշակված ռազ-

մավարության և անհրաժեշտ գործիքակազմերի օգնությամբ Պարսից ծոցի միապետությունները, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիան, իրենց վճռական ազդեցությունն ունեցան միջազգային և տարածաշրջանային վերաձևումների հարցում:

Չնայած ԱՄՆ-ն Սաուդը պատերազմի ավարտից հետո տարիներ շարունակ իմիտացիոն կերպով խոսում էր Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման հեռանկարից, Պարսից ծոցի երկրները, որ աչքի են ընկնում միապետական քաղաքական համակարգով և ռազմավարական սերտ համագործակցության մեջ են նույն ԱՄՆ-ի հետ, նաև Վաշինգտոնի աջակցությամբ կարողացան հաղթահարել մարտահրավերները: Պարսից ծոցի արաբական միապետություններն աչքի են ընկնում քաղաքակրթական, քաղաքական-պետական և հասարակական յուրահատուկ կառուցվածքով, որտեղ միահյուսված են մի կողմից՝ արդիականությունը, մյուս կողմից՝ պահպանողականությունն ու կրոնական ընկալումները, որոնք բացառիկ կարևոր նշանակություն ունեն: Թագավորական ընտանիքների կործանումն իսկապես կարող էր մեծ վակուում առաջացնել տարածաշրջանում՝ հանգեցնելով աղետի:

Սաուդյան Արաբիա-Հայաստանի հարաբերությունների առեղծվածը

Հայաստանը շուրջ երեք տասնամյակ է դիվանագիտական հարաբերություններ չունի Սաուդյան Արաբիայի հետ: Այս խնդիրը՝ որպես առաջնահերթություն, ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում է: Կասկածից վեր է, որ Սաուդյան Արաբիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ոչ միայն կարևոր է Հայաստանի համար, այլև անհրաժեշտ է երկրի արտաքին անվտանգության և ազգային շահերի տեսանկյունից: Չնայած նրան, որ Հայաստանի անկախացումից հետո Սաուդյան Արաբիան հայտարարում էր, որ Երևանի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի պատերազմով և Ադրբեջանի՝ որպես մուսուլմանական պետության տարածքային ամբողջականությունը վերականգնելու հրամայականով (մասնավորապես, 2009 թ. ապրիլին նման հայտարարություն է արել Ադրբեջանում Սաուդյան Արաբիայի դեսպան Ֆահդ բին Ալի ալ-Դուսերին), երկկողմ հարաբերություններում որոշակի ձնհալ սկսվեց մի քանի տարի առաջ, երբ կողմերը սկսեցին շտրկավորել միմյանց պետական տոների առթիվ: Բացի այդ՝ տեղի ունեցավ մի հետաքրքիր դեպք. 2019 թ. ապրիլի 9-ին Լիբանանում Սաուդյան Արաբիայի դեսպան Ուալիդ Բուխարին այցելեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարան և հանդիպում ունեցավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հետ: Սաուդյան Արաբիայի դեսպանը հուշարձանի մոտ հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Սաուդյան Արաբիայի ու Հայաստանի հարաբերությունների հնարավոր ջերմացումն ու միջպետական կապերի սերտացումը կարող են միանգամայն շահեկան լինել Հայաստանի համար, ինչի շտրիկով պաշտոնական Երևանը կընդլայնի իր աշխարհաքաղաքականությունը Մերձավոր Արևելքում հնարավորություն ունենալով հակազդելու Թուրքիայի ու Ադրբեջանի քայլերին, որոնք ուղղված են Հայաստանի մեկուսացմանն իսլամական աշխարհում, ինչպես նաև Հայաստանի վարկանիշի անկմանը: Հայտնի է, որ շուրջ երեք տասնամյակ է, ինչ Իսլամական համագործակցության կազմակերպությունը դարաբաղյան հակամարտության վերաբերյալ Ադրբեջանին սատարող և Հայաստանին ամենակոշտ հետորաբանությամբ քննադատող դիրքորոշում է որդեգրել՝ հիմնվելով իսլամական համերաշխության գաղափարի վրա: Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1994 թ. կազմակերպությանը մեղադրել է միակողմանի և ոչ անաչառ կողմորոշում որդեգրելու մեջ: Հետխորհրդային անկախության շրջանում Բաքուն Թուրքիայի աջակցության շտրիկով դարձավ կազմակերպության ամենաակտիվ անդամներից մեկը: Չնայած աշխարհիկ բնույթին՝ միջազգային իսլամական միջավայրում Ադրբեջանը ներկայանում է որպես ումմայի անքակտելի անդամ: Ի դեպ, միջազգային ընտանիքի տարբեր հատվածների համար Ադրբեջանն ունի իր օրակարգը: Արտաքին իսլամական ուղղությունն Ալիևները լավագույնս օգտագործեցին պետության ազգային շահերն առաջ մղելու համար՝ իսլամական աշխարհ արտահանելով դարաբաղյան հարցը: Ադրբեջանը շահարկում է ամենազգայուն հարցերից մեկը՝ մզկիթների խնդիրը՝ իսլամական աշխարհում Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու համար: Բաքուն իր տարածքում ֆալսիֆիկացնում է հայկական մշակութային արժեքները՝ դրանք ներկայացնելով իբրև աղվանական, իսկ պարսկականը՝ իբրև ադրբեջանական: Հընթացս Իսլամական համագործակցության կազմակերպությունը շարունակում է հետևողականորեն Հայաստանին մեղադրել մզկիթները քանդելու մեջ՝ անտեսելով Հայաստանի հավաստիացումները, Արցախում մզկիթների վերանորոգմանն ուղղված ջանքերը, ինչի ապացույցը Շուշիի Գոհար տիկնոջ վերին մզկիթն է, որի վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին 2019 թ. հոկտեմբերին: Իսլամական համագործակցության կազմակերպության շրջանակներում Ադրբեջանին սատարել է, ինչպես նշեցինք, նաև Սաուդյան Արաբիան, որի հարաբերությունները Թուրքիայի հետ մասնավորապես Արաբական գարնան դեպքերից հետո ոչ միանշանակ են ոչ միայն «Մուսուլման եղբայրների» և Ջամալ Խաշոկջիի գործի, այլև Թուրքիա-Կատար հարաբերությունների և այլևայլ հարցերի պատճառով: Սաուդյան Արաբիայում 2020-2021 թթ. տարածում ստացավ թուրքական ապրանքների ոչ պաշտոնական բոյկոտը: Սակայն թե որքան

կշարունակվի լարվածությունը թուրք-սաուդական հարաբերություններում, դժվար է ասել՝ հաշվի առնելով Թուրքիայի ճկուն արտաքին քաղաքականությունը: Ամեն դեպքում Հայաստանը չի կարող թուրքական գործոնով պայմանավորել արաբական երկրների հետ հարաբերությունները կերպավորվող տարածաշրջանում:

Սաուդյան Արաբիա-Հայաստան անգործության պայմաններում 2021 թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ նախագահ Ա. Սարգսյանը Սաուդյան Արաբիայում հանդիպեց թագաժառանգ՝ փոխվարչապետ, պաշտպանության նախարար Մուհամմադ իբն Սալման ալ-Սաուդի հետ, որը համարվում է երկրի ամենաազդեցիկ դեմքը: Սա հայ բարձրաստիճան պաշտոնյայի առաջին պետական այցն էր Սաուդյան Արաբիա, որտեղ քննարկվեցին երկու երկրների միջև հարաբերությունները զարգացնելու անհրաժեշտությանն առնչվող հարցեր: Հատկանշական է, որ դարաքաղյան վերջին պատերազմի օրերին արաբական մի շարք երկրներ հանդես եկան հայտարարություններով: Սաուդյան Արաբիայի տարածած հայտարարությունը, ի դեպ, բավական հավասարակշռված էր. կոչ էր արվում կողմերին նստելու բանակցությունների սեղանի շուրջ: Նշենք, որ սաուդական լրատվամիջոցները, այդ թվում՝ «Ալ-Արաբիան», արցախյան 44-օրյա պատերազմի օրերին մեծ տեղ հատկացրին հայկական կարծիքների լուսաբանմանը: 2022 թ. փետրվարին Մյունխենում ԱԳ նախարար Ա. Միրզոյանը հանդիպեց սաուդցի իր գործընկերոջ՝ Ֆեյսալ բին Ֆարհան ալ-Սաուդի հետ: Զրուցակիցները մտքեր փոխանակեցին Հայաստանի ու Սաուդյան Արաբիայի միջև հարաբերությունների ու համագործակցության հաստատման հեռանկարների շուրջ՝ պատրաստակամություն հայտնելով աշխատանքներ իրականացնելու երկու երկրների միջև երկկողմ և բազմակողմ օրակարգերի ձևավորման գործում: Վերը նշված փաստերն ու հիմնավորումները ապացուցում են Սաուդյան Արաբիայի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Որքան էլ զարմանալի կարող է հնչել, Սաուդյան Արաբիան կարող է լինել Հայաստանի բնական դաշնակիցը:

Պարսից ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի իրողություններ ու մարտահրավերներ

Պարսից ծոցի արաբական երկրների հայ համայնքների ձևավորման գործընթացը սկիզբ է առել 1950-ականներից, սկզբում՝ Քուվեյթում, իսկ ավելի ուշ՝ այլ երկրներում: Այն ուղիղ կապ ուներ տարածաշրջանում նավթարդյունաբերության զարգացման և աշխատանքի նոր շուկաների ձևավորման հետ: Համայնքների կորիզն արաբական տարբեր երկրներից՝ Սիրիա, Լիբանան, Իրաք և այլն, նաև Իրանից ներգաղթածներն ու նրանց սերունդներն էին: Ժամանակի ընթացքում այստեղ են հաստատվել

հայեր ԱՄՆ-ից, Կանադայից, Հայաստանից, իսկ Արաբական գարնան դեպքերից հետո վերստին աճեց ներգաղթը արաբական երկրներից, առաջին հերթին՝ Սիրիայից: Քուվեյթում և Պարսից ծոցի այլ երկրներում 20-րդ դարի կեսերից ձևավորված հայ համայնքները, ի տարբերություն Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի, Իրաքի և մի շարք այլ երկրների հայ համայնքների, սփյուռքահայության վերարտադրության և ներքին գաղթի արդյունք են: Տարածաշրջանը հրապուրիչ էր աշխատանքային ներգաղթյալների համար. այստեղ բիզնեսի, բարձր վարձատրվող աշխատանքի ու որակյալ կրթության հնարավորություն կար: Արաբահայերին ժամանակի ընթացքում հաջողվեց հարմարվել տարածաշրջանի յուրահատկություններին, և, չնայած ոչ տեղաբնիկների համար Պարսից ծոցի միապետությունների տեղական օրենքներում ամրագրված սահմանափակումներին, այդ թվում՝ քաղաքացիություն ձեռք բերելու արգելքին, հայերը, այնուամենայնիվ, աստիճանաբար ստեղծեցին համայնքային կառույցներ: Մասնավորապես, Քուվեյթում և Արաբական Միացյալ Էմիրություններում հայերին հնարավորություն տրվեց կազմակերպելու իրենց ազգային կյանքը, ինչն իրականություն դարձավ հայկական կրոնական և աշխարհիկ կազմակերպությունների ու ազգային միությունների գործունեության շնորհիվ: Էլ-Քուվեյթը, Շարժան, Դուբայը և Աբու Դաբին դարձան այն հիմնական շրջանները, որտեղ հաստատվեցին հայերը՝ արձանագրելով հայկական ակտիվություն: Ի տարբերություն Քուվեյթի, որտեղ ազգային կառույցների ձևավորումը սկսվել էր դեռևս 1960-ականներից, ԱՄԷ-ի հայ համայնքը սկսեց ակտիվորեն կազմակերպվել 1980-ականներից: 1992 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հիմնեց Քուվեյթի և Պարսից ծոցի արաբական երկրների թեմը (առաջնորդանիստը՝ Էլ-Քուվեյթի Սուրբ Վարդանանց եկեղեցի): Այդ կառույցի հենքի վրա հետագայում ձևավորվեցին երկու թեմեր՝ Արաբական Միացյալ Էմիրությունների, Կատարի և շրջակա երկրների, ինչպես նաև Քուվեյթի և շրջակա երկրների: Ազգային գործընթացի հաջողությունը փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի նկատմամբ տեղի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի ապացույցն է: Հայերը դիտարկվում են որպես կրոնադավանական փոքրամասնություն՝ որոշակի իրավունքներով: Ծագումով հայ շատ ու շատ գործիչներ տարածաշրջանում որոշակի ճանաչում ունեն: Կան թագավորական ընտանիքների հետ սերտ կապեր ունեցող և հասարակական առանձին շրջանակների հետ համագործակցող հայեր ևս:

Իր անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի, Արաբական Միացյալ Էմիրությունների, ավելի ուշ Կատարի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը դրական դերակատարում ունեցավ տեղի հայ համայնքների և ՀՀ-ի միջև կապերի ամրապնդման հարցում: Ծոցի հայ համայնքների

նարաստիվը շատ հետաքրքիր է. այստեղ սփյուռքացումն ընթանում է յուրահատուկ կերպով: Փաստորեն, հայերը հաստատվել և ազգային կառույցներ են հիմնել այնպիսի երկրներում, որտեղ քաղաքացիություն ստանալու իրավունք չունեն և մոտ ու հեռու ապագայում հազիվ թե ունենան: Բնականաբար, նրանք ընտրելու և ընտրվելու հնարավորություն նույնպես չունեն: Քրիստոնեական, այդ թվում՝ հայկական եկեղեցիների վրա խաչ դնելու իրավունք չկա: Որոշակի սահմանափակումներ կան բիզնես գործունեության մեջ. պարտադիր է տեղացի գործընկեր ունենալը և այլն: Ինչո՞ւ օտարներին Պարսից ծոցի երկրներում չի տրվում քաղաքացիություն: Խնդիրն այն է, որ օտարներն այստեղ ավելի մեծ թիվ են կազմում, քան տեղացիները: Քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում նրանք կարող են ավելիին հասնել, քան տեղացիները, և փոխել պատկերը: Սակայն հայերը հակված են շարունակելու իրենց և իրենց զավակների կյանքն ու գործունեությունը՝ համարելով, որ Պարսից ծոցի պետություններն աչքի են ընկնում բարձր կենսամակարդակով, ամենատարբեր ոլորտներում զարգացման բարձր ցուցանիշներով, ինչից կարելի է օգտվել: Չնայած ժամանակավոր բնակության փաստին՝ հայերը չեն զլացել ինստիտուցիոնալացնելու ազգային կյանքը: Պարսից ծոցի արաբական երկրների հայ համայնքների շրջանում բազմաթիվ խնդիրների թվում հայապահպանությունն օրակարգային է: Այստեղ հայերն աչքի են ընկնում ընդգծված հայկական ինքնությամբ, իսկ ավելի լայն իմաստով՝ բազմակի ինքնությամբ (multiple identity): Օրինակ՝ Սիրիայի հայկական Քեսապ գյուղաքաղաքից Արաբական Միացյալ Էմիրություններ տեղափոխված հայերն իրենց համարում են նախ քեսապցի, ապա՝ սիրիահայ, մինևույն ժամանակ՝ նաև տեղաբնակ: Շատերն ունեն նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, հետևաբար նաև հայաստանյան ինքնություն: Ի դեպ, մասնավորապես սիրիահայերն Արաբական գարնան դեպքերից հետո սիրիական անձնագրերով ճամփորդելու խնդիր ունեին, հետևաբար Հայաստանի Հանրապետության անձնագրերը նրանց ոչ միայն փրկեցին պատերազմի արհավիրքից, այլև օգնեցին տեղաշարժվելու և հաստատվելու այլ երկրներում, այդ թվում՝ Պարսից ծոցի:

Հայերն ընդհանուր առմամբ այս կամ այն կերպ կապ ունեն հայկական ազգային կառույցների հետ, թեև շատ դեպքերում հայկական համայնքների մեջ ներքին տարանջատումներ կան՝ հայաստանցիներ, հալեպցիներ, բեյրութցիներ և այլն: Մինևույն ժամանակ կան շատերը, որոնք տարբեր պատճառներով խզել են կապը ազգային կառույցների հետ, սակայն սերտ կապեր ունեն Հայաստանի կամ տարբեր հայկական շրջանակների հետ: Շատերը պարզապես դժգոհ են կամ հիասթափված հայկական ազգային կառույցների՝ ազգապահպանությանն ուղղված քայլերից և օգտագործվող գործիքակազմից՝ համարելով այն ոչ արդի կամ ոչ արդյունավետ: Ազգային կյանքից հեռանալու պատճառ են նաև գյուրալի-

զացիայի հարաճուն տեմպերը, խառը ամուսնությունները, տեղերում հայկական տարրական և միջնակարգ դպրոցների բացակայությունը, օտար կրթությունը, հայերենի օգտագործման ծավալների անկումը, ծնողների՝ ընտանիքներում հայկական դաստիարակության նկատմամբ ոչ պահանջկոտ կամ ոչ հետևողական կեցվածքը, ազգային կառույցների կամ եկեղեցիների՝ բնակության հիմնական վայրերից հեռու գտնվելը, հայության կամ Հայաստանի գաղափարի ոչ այնքան գրավիչ լինելը և այլն: Ամեն դեպքում ազգային կառույցները կամ համայնքների դեկավար անձինք, այդ թվում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեն համայնքներում հայապահպանությանն ուղղված աշխատանքները նոր հունով առաջնորդելու կամ արդիականացնելու համար, չնայած Սփյուռքի շուրջ տարաբնույթ քննարկումներ միշտ էլ ծավալվում են:

Գաղտնիք չէ, որ Հայաստանից դուրս հայ մնալու ջանքերը երկարաժամկետ կտրվածքով աստիճանաբար թուլանալու են կամ դատապարտվելու են ձախողման: Հետևաբար Պարսից ծոցի երկրներում ևս հայերը երկարատև հեռանկար չունեն: Սակայն ներկայումս Պարսից ծոցի բոլոր երկրներում կան համեմատաբար երիտասարդ հայկական կյանք և հայկական միջավայր՝ իրենց բնորոշ ատրիբուտներով: Այլ կերպ ասած՝ կա հայկական ինքնությունը պահպանելու անդրդվելի ձգտում: Քուվեյթում կա հայկական դպրոց, Արաբական Միացյալ Էմիրություններում՝ հայկական կիրակնօրյա դպրոցներ: Երկուսում էլ կան հայկական եկեղեցիներ: Հայ մնալու ցանկությունը և այդ ճանապարհին դժվարությունների հաղթահարման պատրաստակամությունը պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ հայերն այստեղ են եկել Սփյուռքի ավանդական համայնքներից՝ իրենց հետ բերելով հայության հավաքական կյանքի կազմակերպման փորձառությունն ու մեխանիզմները: Մյուս կողմից՝ հայապահպանությունն ուղիղ կապ ունի Հայաստանի, նրա ապագայի և, ինչպես նշեցինք, հայ լինելու գրավչության հետ:

Հակված ենք ենթադրելու, որ երկարաժամկետ կտրվածքով Հայաստանի Հանրապետությունը պետք է սերտ և բարեկամական հարաբերություններ ձևավորի և զարգացնի Պարսից ծոցի տարածաշրջանի հետ ամենատարբեր ոլորտներում: Ընդհանրապես Հայաստանի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղությունը պետք է դառնա պրոակտիվ: Համագործակցության մյուս թիրախը պետք է լինեն տեղի համայնքները, նրանց ներուժը կարող է ծառայել թե՛ որպես հայ-արաբական հարաբերությունների կամուրջ, թե՛ որպես կարևոր ռեսուրս Հայաստանում: Հայերից շատերն անշարժ գույք են գնել Հայաստանում և հայրենիքում հաստատվելու ցանկություն ունեն: ■

ԱՄՆ քաղաքականությունը ուկրաինական ճգնաժամում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Ուկրաինան, լինելով Եվրոպա մայրցամաքի երկրորդ խոշոր պետությունը, իր ռազմավարական դիրքով և աշխարհաքաղաքական նշանակությամբ դարձել է Ռուսաստան-Արևմուտք պայքարի կովախնձոր: Երկիրը մշակութային և պատմական թելերով կապված է Ռուսաստանի հետ: Այն դեպի Արևմուտք տանող Ռուսաստանի խոշորագույն դարպասն է: Ուստի Ուկրաինայի «արևմտականացումը» Մոսկվան մշտապես դիտարկել է որպես վտանգ՝ ուղղված երկրի ազգային անվտանգությանը:

Միացյալ Նահանգները մշտապես գիտակցել է Ուկրաինայի կարևորությունը Ռուսաստանի համար: Այդ մասին բարձրաձայնել են ԱՄՆ բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք եղել են ամերիկյան արտաքին քաղաքականության և անվտանգության ճարտարապետները: Նրանց թվում է ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ջրիգեն Բեզգինսկին, ով շեշտել է, որ, «առանց Ուկրաինայի, Ռուսաստանը դադարում է կայսրություն լինելուց, բայց ստորադասված, իսկ հետո ենթակայության տակ առնված Ուկրաինայով Ռուսաստանն ինքնաբերաբար դառնում է կայսրություն»¹: Նույն կարծիքին էր նաև ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Բիսինգերը, որի պնդմամբ՝ «Ռուսաստանի համար Ուկրաինան երբեք չի կարող պարզապես օտար երկիր լինել. ռուսական պատմությունը սկսվել է Կիևյան Ռուսիա կոչվող վայրից: Այդտեղից է տարածվել ռուսական կրոնը: Ուկրաինան դարեր շարունակ եղել է Ռուսաստանի կազմում, և այդ ժամանակից ի վեր նրանց պատմությունները միահյուսվել են»²:

Ներկայումս Ուկրաինայում ընթացող պատերազմը Ռուսաստան-Արևմուտք պայքարի վատ դրսևորումներից է, երբ Ռուսաստանը պատրաստ չէ բաց թողնելու Ուկրաինային և հանդուրժելու Արևմուտքի ներկայությունն իր անմիջական հարևանությամբ: Արևմուտքն էլ իր հերթին փորձում է ընդլայնել սեփական ազդեցությունը՝ մուտք գործելով Ռուսաստանի պատմական ազդեցության գոտի, և իր կառույցներում ընդգրկել Ռուսաստանի ռազմավարական հարևաններին: Այնուամենայնիվ, կան կարմիր գծեր, որոնք Ռուսաստանը թույլ չի տա Արևմուտքին հատել:

Ինչպես նշում է Բիսինգերը, «Խաղաթղթի վրա է ուկրաինական հարցը. Ուկրաինան կմիանա Արևելքին, թե՛ Արևմուտքին: Բայց եթե Ուկրաինան ցանկանում է գոյատևել և զարգանալ, նա չպետք է լինի կողմերից մեկի ֆորպոստը մյուսի դեմ, նա պետք է գործի որպես կամուրջ նրանց միջև»³:

Պարզելու համար, թե որն է ԱՄՆ-ի դերը ուկրաինական ճգնաժամում, անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղ են թաքնված ճգնաժամի արմատները, ինչ ջանքեր է ԱՄՆ-ն գործադրում Ուկրաինայի «արևմտականացման» հարցում, և ինչպես է աջակցում ԱՄՆ ներկայիս վարչակազմը Ուկրաինային:



Ճգնաժամի սկիզբը

Սառը պատերազմի ավարտից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը դադարել էր հավակնոտ լինելուց, ինչպիսին էր Խորհրդային Միության տարիներին: Ռուսաստանը չունեւ նախկին հզորությունը՝ բացեիքաց հակամարտելու Արևմուտքի դեմ: Միջազգային հարթակում նրա դիրքերի թուլացումն ուղեկցվում էր ԱՄՆ-ի և իր արևմտեվրոպական դաշնակիցների դիրքերի ամրապնդմամբ ու միաբևեռ աշխարհակարգի գաղափարների տարածմամբ:

Այս իրավիճակում Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ) դարձավ լուրջ գործիք Արևմուտքի ձեռքում՝ սեփական դիրքերն ամրապնդելու և միջազգային թատերաբեմում Ռուսաստանին անմրցունակ դարձնելու համար: Ուստի սկսվեց դաշինքի ընդլայնման գործընթացը: Այն ըսկսվեց 1999 թ. և ընդգրկեց Չեխիան, Հունգարիան և Լեհաստանը, ապա շարունակվեց 2004 թ.՝ ներառելով Բուլղարիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան և Սլովենիան՝ դաշինքի սահմանները մոտեցնելով Ռուսաստանին: Թեև Մոսկվան գործընթացի հենց սկզբից արտահայտեց իր դժգոհությունը, այնուամենայնիվ, նա չունեւ նախկին հզորությունը՝ կասեցնելու այն⁴:

Շրջադարձային պահը դարձավ միջազգային ասպարեզում Ռուսաստանի ներկայիս հավակնոտ արտաքին քաղաքական («պոտինյան») ուղղության ազդարարման սկիզբը՝ 2007 թ. փետրվարը, երբ Մյունխենի անվտանգության համաժողովի ժամանակ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն իր ելույթով ազդարարեց Ռուսաստանի՝ գերտերության կարգավիճակի հավակնության և միաբևեռ աշխարհակարգին հակազդեցության մասին:

Հենց այդ ելույթի ժամանակ Պուտինը դեմ արտահայտվեց ՆԱՏՕ-ի ընդլայնմանը. «Կարծում եմ՝ ակնհայտ է, որ ՆԱՏՕ-ի ընդլայնումը ոչ մի կապ չունի բուն դաշինքի արդիականացման կամ Եվրոպայում անվտանգության ապահովման հետ:

Ընդհակառակը՝ դա լուրջ սադրանք է, որը նվազեցնում է փոխվստահությունը: Եվ մենք իրավունք ունենք հարցնելու՝ ում դեմ է ուղղված այդ ընդլայնումը»⁵:

Ելույթին հաջորդող տարվա ընթացքում Բուշի վարչակազմը Ամերիկայի եվրոպացի դաշնակիցների հետ վարում էր բազմաթիվ միաժամանակյա քաղաքականություններ, որոնք ուղղված էին անդրատլանտյան անվտանգության ամրապնդմանը և ՆԱՏՕ-ի ընդլայնմանը: Այդ ժամանակ ՆԱՏՕ-ն մոտ էր Ալբանիային, Խորվաթիային և Մակեդոնիային անդամակցության հրավերներ տրամադրելուն: Իսկ երբ դաշինքը սկսեց նախապատրաստվել 2008 թ. ապրիլի Բուխարեստի իր գագաթնաժողովին, նրա անդամները քննարկում էին, թե ինչպես հնարավոր կլինի Ուկրաինային և Վրաստանին ներգրավել կազմակերպության մեջ⁶: Այդ գագաթնաժողովի ժամանակ ԱՄՆ-ն ամեն ջանք գործադրեց իր գործընկեր երկրներին համոզելու Ուկրաինային և Վրաստանին ավելացնել ՆԱՏՕ-ին անդամակցության գործողությունների պլանում, սակայն այդ գաղափարն աջակցություն չստացավ գործընկերների կողմից (Գերմանիան, Ֆրանսիան և Իտալիան դեմ եղան այդ քայլին՝ վախենալով, որ այն Ռուսաստանի հետ անտեղի թշնամանքի առիթ կլինի): Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ճնշման տակ վերջնական փաստաթղթում նշվեց, որ Ուկրաինան ու Վրաստանը կդառնան ՆԱՏՕ-ի անդամ պետություն, երբ համապատասխանեն կազմակերպությանն անդամակցության բոլոր պահանջներին⁷:

ԱՄՆ-ի այս քաղաքականությունն անընդունելի էր Ռուսաստանի համար, և Պուտինի պատասխանը սպասել չտվեց: Բուխարեստում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում և դրան հաջորդած մամլո ասուլիսի ժամանակ Պուտինի ելույթները կարելի է համարել նախազգուշացում ԱՄՆ-ին և իր գործընկեր եվրոպական պետություններին՝ միտված դեպի Ուկրաինա և Վրաստան ՆԱՏՕ-ի ընդլայնումը կանխելուն: Գագաթնաժողովում ունեցած ելույթում կարելի է գտնել Ուկրաինայում դեպքերի հետագա զարգացման բոլոր նախազգուշացումները:

Պուտինն ընդգծում է. «Մեր սահմաններին հզոր ռազմական դաշինքի հայտնվելը, դաշինք, որի անդամների գործողությունները կարգավորվում են նաև Վաշինգտոնի պայմանագրի 5-րդ հոդվածով, մենք դիտարկում ենք որպես ուղիղ սպառնալիք մեր երկրի անվտանգությանը: Պնդումը, թե այս գործընթացը (ՆԱՏՕ-ի ընդլայնումը) ուղղված չէ Ռուսաստանի դեմ, բավարար չէ: Ազգային անվտանգությունը հիմնված չէ խոստումների վրա: Իսկ դաշինքի նախորդ ընդլայնման ակիբներին նախորդած հայտարարությունները պարզապես հաստատում են դա»⁸:

Գագաթնաժողովում ելույթի ժամանակ Պուտինը Ուկրաինան անվանեց «բարդ պետական կազմավորում», որի բնակչության 1/3-ը ազգությամբ ռուսներ են: Պուտինի պնդմամբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ուկրաինան իր տարածքները ստացել է Լեհաստանից, Չեխոսլովակիայից, Ռու-



Ջո Բայդեն և Վլադիմիր Չելնսկի

մինիայից, ինչպես և հսկայական տարածքներ է ձեռք բերել Ռուսաստանից: Ըստ նրա, եթե Ուկրաինայում մտցվեն «ՆԱՏՕ-ին առնչվող հարցեր և այլ խնդիրներ, այն կարող է ընդհանրապես կանգնել պետականության կորստի եզրին»: Իր ելույթում Պուտինը հստակ շեշտեց Ուկրաինայում ռուսական շահերի առկայությունը՝ նկատի ունենալով Ղրիմը, որը «Ուկրաինային է հանձնվել ԽՄԿԿ Կենտկոմի քաղքյուրոյի որոշմամբ»: Այս ելույթով, այդ հարցի շուրջ Ռուսաստանի հավասարակշռված քայլերի դիմաց, ՌԴ նախագահն իր արևմտյան գործընկերներից պահանջեց նույնախիսի հավասարակշռություն իրենց քայլերում⁹:

ԱՄՆ-ն Ուկրաինայի «եվրոպականացման» ճանապարհին

Չնայած Ռուսաստանի բազմաթիվ նախազգուշացումներին՝ Ուկրաինայի «եվրոպականացման» մեկնարկը տրված էր: Միացյալ Նահանգները մշտապես մեծ նշանակություն է տվել ժողովրդավարական պետության անցման Ուկրաինայի հաջողությանը: Այս առումով ԱՄՆ քաղաքականությունը կենտրոնացած է «ժողովրդավարական, բարգավաճ և ապահով Ուկրաինայի ամրապնդման ու զարգացման վրա, որն ավելի սերտորեն է ինտեգրված եվրոպական և եվրատլանտյան կառույցներում»¹⁰:

Ուկրաինայի ժողովրդավարացումը խթանելու նպատակով ԱՄՆ-ն վարել է եռուղի քաղաքականություն՝ ՆԱՏՕ-ի ընդլայնում, ԵՄ ընդլայնում և Ուկրաինայի՝ ամերիկամետ լիբերալ ժողովրդավարական պետության վերածում¹¹:

Ակնհայտ է դառնում, որ ուկրաինական ճգնաժամի հիմքում ընկած է հենց ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցը, ինչն էլ Ուկրաինային Ռուսաստանի ուղեծրից հեռացնելու և Արևմուտքի հետ ինտեգրելու ավելի լայն ռազմավարության մի մասն է: Մինևույն ժամանակ ԵՄ ընդլայնումը արևելյան ուղղությամբ և Արևմուտքի աջակցությունը Ուկրաինայում ժողովրդավարական շարժումներին՝ սկսած Նարնչագույն հեղափոխությունից մինչև Եվրամայդան, այդ ռազմավարության կարևորագույն բաղադրիչներն են: «Եվրոպականացումը» հաճախ դրսևորվում էր արևմտամետ անհատների և կազմակերպությունների ֆինան-

սավորմամբ: ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական Վիկտորյա Նուլանդը 2013 թ. դեկտեմբերին գնահատել է, որ Միացյալ Նահանգները 1991 թ. ի վեր ավելի քան 5 միլիարդ դոլար է ներդրել՝ օգնելու Ուկրաինային հասնելու «այն ապագային, որին արժանի է»¹²: Իսկ Ուկրաինայի հարցում Ռուսաստան-Արևմուտք պայքարի հետևանք Նարնջագույն հեղափոխությունը և Եվրամայդանը պատճառ դարձան ներքին հարցերում Ռուսաստանի ազգայնական մոտեցումների աճին և առավել հակամարտային գլոբալ քաղաքականության որդեգրմանը¹³:

Ճգնաժամի ռազմականացված փուլը

Ինչպես արդեն նշվեց, 2000-ական թթ. առաջին տասնամյակից սկսած՝ Ռուսաստանը բացեփրաց մատնանշել է իր ազգային անվտանգության կարմիր գծերը Ուկրաինայի հարցում՝ որպես դրանց խախտման հետևանք ակնարկելով Ուկրաինայի պետականության կորստի հավանականությունը: Այնուամենայնիվ, Ուկրաինային եվրոպական և եվրատլանտյան կառույցներում ինտեգրելու ջանքերը շարունակվեցին մինչև 2014 թ. Ռուսաստանի կողմից Ղրիմի անեքսիան: Այս գործընթացը տարբեր կերպ որակվեց Ռուսաստանի և Արևմուտքի կողմից: Եթե ՌԴ նախագահ Պուտինը այն ներկայացնում է որպես Ղրիմի բնակիչների համար պատշաճ պայմանների ապահովում «իրենց կամքն ազատորեն արտահայտելու համար»¹⁴, ապա Ուկրաինան և Արևմուտքը այն ներկայացնում են որպես Ուկրաինայի տարածքային ամբողջականության խախտում:

Այս հակամարտության հետևանքը եղավ Ուկրաինայում էթնիկ բաժանումը, և կարճ ժամանակ անց Ուկրաինայի Դոնեցկի և Լուգանսկի շրջաններում ռուսամետ անջատողականները հանրաքվե անցկացրին Ուկրաինայից անկախություն հռչակելու համար: Դա հանգեցրեց տարածաշրջանում զինված հակամարտության Ռուսաստանի կողմից աջակցություն ստացող ուժերի և ուկրաինացի զինվորականների միջև¹⁵:

2014 թ. սեպտեմբերից մինչև 2015 թ. փետրվարը Ռուսաստանը, Ուկրաինան, Ֆրանսիան և Գերմանիան ստորագրեցին, այսպես կոչված, Մինսկի պայմանավորվածությունները, որոնք ի վերջո դադարեցրին զորքերի առաջխաղացումը և զգալիորեն նվազեցրին կոիվները: Բայց այդ պայմանավորվածություններն այդպես էլ կյանքի չկոչվեցին, և կոիվը վերածվեց խրամատային պատերազմի¹⁶:

Ճգնաժամի լայնամասշտաբ պատերազմական փուլը սկսվեց 2022 թ. փետրվարի 24-ին, երբ Ռուսաստանը ներխուժեց Ուկրաինա և լայնամասշտաբ պատերազմ սանձազերծեց՝ հանուն «Ուկրաինայի ապառազմականացման, ապանացիստականացման և չեզոք կարգավիճակի հաստատման»¹⁷: Ռուսաստանի կողմից նախագոյազրույցումները նախորդել էին բուն պատերազմական փուլին: Դեռ 2021 թ. նոյեմբերին

նախագահ Պուտինը կոչ էր անում ԱՄՆ-ին և նրա արևմտյան գործընկերներին «լուրջ, երկարաժամկետ երաշխիքներ տրամադրելու, որոնք կապահովեն Ռուսաստանի անվտանգությունն այս ոլորտում (ՆԱՏՕ-ի ընդլայնում), քանի որ Ռուսաստանը չի կարող անընդհատ մտածել, թե ինչ կարող է տեղի ունենալ այնտեղ վաղը»¹⁸: Իսկ դեկտեմբերին եղավ ռուսական առաջարկը՝ պայմանագրի նախագծի տեսքով, որով նախատեսվում էր, որ ՆԱՏՕ-ն պետք է գրավոր երաշխիքներ ներկայացնի, որ չի ընդլայնվի արևելք՝ դեպի Ռուսաստան, և կդադարեցնի բոլոր ռազմական գործողությունները նախկին խորհրդային հանրապետություններում: Առաջարկների թվում էր նաև ՆԱՏՕ-ի պարտավորությունը, որ Ուկրաինային անդամակցություն չի առաջարկի: Դրանք անմիջապես մերժվեցին ՆԱՏՕ-ի պաշտոնյաների կողմից: Նրանք նաև ընդգծեցին, որ ՆԱՏՕ-ի երկրները չեն կարող բացառել Արևելյան Եվրոպայի որևէ երկրի, այդ թվում՝ Ուկրաինայի ապագա անդամակցությունը կառույցին¹⁹: Ներկայումս պատերազմը շարունակվում է՝ պատճառ դառնալով երկու կողմերից էլ բազմաթիվ զոհերի:

ԱՄՆ ներկայիս վարչակազմի մոտեցումը ուկրաինական ճգնաժամի հարցում

Բայդենի վարչակազմի՝ իշխանության գալը աշխարհաքաղաքական առումով փոփոխություն էր, քանի որ կանխատեսվում էր ԱՄՆ-ի առավել ակտիվ ներգրավվածություն արտաքին քաղաքական հարթակում, քան նախագահ Թրամփի օրոք էր, որն իր ջանքերը հիմնականում կենտրոնացրել էր երկրի ներքաղաքական և տնտեսական հարցերի վրա:

Թեև ԱՄՆ ներկայիս վարչակազմի համար արտաքին քաղաքական առաջնային սպառնալիք է դիտարկվում Չինաստանը, բայց դիտարկվում է նաև Ռուսաստանից եկող վտանգը ԱՄՆ ազգային շահերի համար, և իրականացվում է վերահսկելի հակազդեցություն՝ ներատեղով երկխոսությունը:

Ուկրաինական ճգնաժամի հարցում Միացյալ Նահանգների վարչակազմը շարունակում է աջակցել Ուկրաինայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանմանը: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը Ուկրաինայի անկախության 30-ամյակին նվիրված ուղերձում նշել է. «Ուկրաինայի հետագիծը դեպի իր եվրատլանտյան ապագան պարզ է, և ուկրաինացի ժողովուրդը կարող է հպարտանալ իր ձեռքբերումներով: Այս ողջ ընթացքում Միացյալ Նահանգները ձեռնկողնի են եղել»²⁰:

ԱՄՆ նախագահ Զո Բայդենը ուկրաինական ճգնաժամի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև վերջերս «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակված իր հոդվածում, որում հստակ ուղերձներ է հղել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին: Նա գրել է. «Ամերիկայի նպատակը հստակ է. մենք ցանկանում ենք տեսնել ժողովրդավարական, անկախ, ինքնիշխան և բարգավաճ Ուկրաինա, որն ունակ է զայելու և պաշտպանվելու հետագա ագրեսիայից»²¹:

Այստեղ Բայդենի կողմից բառերի ընտրությունը՝ «ժողովրդավարական, անկախ, ինքնիշխան և բարգավաճ Ուկրաինա», որին աջակցում է Ամերիկան, պատահական չէ: Քանի որ «ժողովրդավարական Ուկրաինան» այն Ուկրաինան է, որը կշարունակի իր 30 տարվա անկախության ընթացքում ձևավորած ավանդույթը՝ ունենալու ազատ և արդար ընտրություններով ձևավորված կառավարություն: «Անկախ և ինքնիշխան Ուկրաինան» այն է, որը պահպանում է իր ապագա ուղին ընտրելու իրավունքը, ներառյալ Եվրամիությանը կամ ՆԱՏՕ-ին հնարավոր անդամակցությունը: «Բարգավաճ Ուկրաինան» այն է, որը գերծ է իր տնտեսության վրա ռուսական ազդեցությունից²²:

Այս հայտարարություններին զուգահեռ՝ նախագահ Բայդենը նաև հստակեցրել է, որ Ռուսաստանի դեմ ուղիղ առճակատման չի գնալու. «Մենք ուղիղ ձևով չենք ներգրավվի այս հակամարտության մեջ՝ Ուկրաինայում կռվելու համար ամերիկյան զորքեր ուղարկելով կամ հարձակվելով ռուսական ուժերի վրա, քանի դեռ Միացյալ Նահանգները կամ մեր դաշնակիցները հարձակման չեն ենթարկվել»²³:

Բայդենի հոդվածից ակնհայտ է դառնում, որ թեև Միացյալ Նահանգները զորք չի տրամադրի Ուկրաինային Ռուսաստանի դեմ պատերազմելու համար, այնուամենայնիվ կտրամադրի և ներկայումս տրամադրում է զգալի օգնություն հետևյալ ուղղություններով.

• Զինամթերք: 2021 թ. հունվարից սկսած՝ ԱՄՆ-ն Ուկրաինային տրամադրել է 10.6 միլիարդ ԱՄՆ դոլարի ռազմական օգնություն, որից 9.9 միլիարդը՝ այն պահից, երբ Ռուսաստանը պատերազմ սանձազերծեց Ուկրաինայի դեմ: 2014 թ. ի վեր Միացյալ Նահանգները տրամադրել է ավելի քան 12.7 միլիարդ ԱՄՆ դոլար անվտանգության ոլորտին՝ վերապատրաստման և սպառազինության համար՝ օգնելու Ուկրաինային պահպանելու իր տարածքային ամբողջականությունը, ապահովելու իր սահմանային անվտանգությունը և բարելավելու ՆԱՏՕ-ի հետ փոխգործակցությունը²⁴:

• Տնտեսական պատժամիջոցներ: 2021 թ. դեկտեմբերից սկսած՝ Միացյալ Նահանգները նախագրուշացրել է Ռուսաստանի դեկավարությանը, որ Ուկրաինայի վրա նոր հարձակումը կհանգեցնի նոր խիստ պատժամիջոցների կիրառմանը: Բայդենի վարչակազմը 2022 թ. փետրվարի 21-ից կիրառել է ամբողջական արգելափակող պատժամիջոցներ (ներառյալ գործարքների սահմանափակումները և ԱՄՆ-ում գտնվող գույքի հասանելիության արգելափակումը) Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի, վարչապետ Միխայիլ Միշուստինի, Անվտանգության խորհրդի և վարչակազմի անդամների, այդ թվում՝ արտաքին գործերի, պաշտպանության, ֆինանսների և տնտեսական զարգացման նախարարների ու զինված ուժերի ղեկավարի, Պետդոմայի և նրա անդամների մեծ մասի, Ռուսաստանի վեց խոշորագույն բանկերի, ռուսական խոշոր արտադրողների և կազմակերպությունների,



Վլադիմիր Պուտին, Վլադիմիր Զելենսկի

Կրեմլի հետ կապված Ռուսաստանի բիզնես էլիտայի անդամների (օլիգարխների) նկատմամբ և մի շարք այլ սահմանափակումներ²⁵:

• Հումանիտար օգնություն: Միացյալ Նահանգները Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո՝ 5 ամսվա ընթացքում, Ուկրաինային տրամադրել է ավելի քան 1.45 միլիարդ ԱՄՆ դոլարի հումանիտար օգնություն՝ Ուկրաինայում գտնվող մարդկանց և հարևան երկրներում ապաստանած փախստական ուկրաինացիների կարիքները հոգալու համար, որից մոտ 952 միլիոն ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) միջոցով²⁶:

• Դաշնակիցների ջանքերի միավորում: Ուկրաինական ճգնաժամի սկզբից ԱՄՆ նախագահը ՆԱՏՕ-ի, Եվրամիության և իր մյուս գործընկերների հետ միասին մշտապես պահել է լիարժեք համագործակցության և գործողությունների համակարգման հստակ գիծը: Դեռ ավելին՝ այս առումով նախագահ Բայդենը պարբերաբար շեշտում է «ՆԱՏՕ-ի տարածքի յուրաքանչյուր թիզը» ՆԱՏՕ-ի ողջ հզորությամբ պաշտպանելու պատրաստակամության մասին²⁷: Պատժամիջոցներ սահմանելու առումով դաշնակիցները նույնպես դրսևորել են միասնականություն. ԵՄ-ն, Միացյալ Թագավորությունը, մի շարք ոչ ԵՄ երկրներ Եվրոպայում (ներառյալ Շվեյցարիան), Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Մինգապուրը և Թայվանը, ի թիվս այլոց, Ռուսաստանի նկատմամբ կիրառել են պատժամիջոցներ, որոնցից շատերը նույնական են կամ նման ԱՄՆ պատժամիջոցներին: Այլ գործընկերների հետ ԵՄ-ն և Միացյալ Նահանգները ստեղծել են աշխատանքային խումբ՝ ապահովելու պատժամիջոցների արդյունավետ կիրառումը: 2022 թ. մարտին նախագահ Բայդենը պարտավորվել է օգնել ԵՄ-ին նվազեցնելու կախվածությունը ռուսական գազից: Էներգետիկ անվտանգության հարցերով ԱՄՆ-ԵՄ նոր աշխատանքային խումբը պետք է կյանքի կոչի այս և այլ նպատակներ²⁸:

Ինչ վերաբերում է ճգնաժամի հաղթահարմանը, ապա Միացյալ Նահանգները տեսնում է խնդրի դիվանագիտական լուծում: Այսպես՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը նշել է. «Մենք գերադասում

ենք դիվանագիտական ճանապարհը և խնդրի դիվանագիտական լուծումը»²⁹:

Ուշադրության է արժանի նաև ուկրաինական ճգնաժամի հարցում ԱՄՆ նախկին պետքարտուղար Հենրի Բիսինցերի (համարվում է 1970-ականներին ԽՍՀՄ-ի հետ լարվածության թուլացման և ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների կարգավորման ճարտարապետը) առաջարկը՝ հնչեցված 2022 թ. մայիսի վերջին Դավոսում կայացած համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ: Ըստ նրա՝ պատերազմի ավարտի լավագույն տարբերակը «ստատուս քվո անտե»-ին վերադարձն է, ինչը նշանակում է վերականգնել իրերի նախկին դրությունը: Քիսինցերի նշած «ստատուս քվո անտե»-ն վերաբերում է այն դրության վերականգնմանը, երբ Ռուսաստանը պաշտոնապես վերահսկում էր Ղրիմը և ոչ պաշտոնապես Ուկրաինայի արևելյան երկու շրջանները՝ Լուգանսկը և Դոնեցկը³⁰: Նա նշել է. «Այս պատերազմն ավարտելու համար լավագույն բաժանարար գիծը կլինի «ստատուս քվո անտե»-ն, ինչը նշանակում է երկրի 93 տոկոսը... Եթե մեկը «ստատուս քվո անտե»-ն նախանշում է որպես նպատակ, դա նշանակում է, թե (Ռուսաստանի) ագրեսիան չի հաջողվել: Այսպիսով՝ խոսքը փետրվարի 24-ին շվեդական գծի երկայնքով հրադադարի հաստատման մասին է: Իսկ դեռևս Ռուսաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքը, որը կազմում է Ուկրաինայի տարածքի մոտ 2.5 %-ը Դոնբասում, ինչպես նաև Ղրիմի թերակղզում, կդառնա ընդհանուր բանակցությունների մաս»³¹:

Ճգնաժամի հանգուցալուծման հետևանքները վերահսկելի դարձնելու համար Քիսինցերն առաջարկեց Միացյալ Նահանգներին և Արևմուտքին չձգտել Ռուսաստանի համար ամոթալի պարտության Ուկրաինայում՝ զգուշացնելով, որ դա կարող է խաթարել Եվրոպայի երկարաժամկետ կայունությունը³²: Այս առաջարկին հաջորդած «Նյու Յորք Թայմս»-ում³³ հրատարակված նախագահ Բայդենի հոդվածի նպատակների մեջ չկար Ռուսաստանի նկատմամբ որևէ սպառնալից ակնարկ: Դրանք ուղղված էին միայն Ուկրաինայի կայունացմանը, այլ ոչ թե Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքի թուլացմանը:

Այսպիսով՝ Ռուսաստանն այս պատերազմի միջոցով ցույց տվեց, որ թույլ չի տա ԱՄՆ-ին և իր արևմտյան գործընկերներին հաշվի չստել իր շահերի հետ, հատկապես երբ դրանք ազգային անվտանգության սպառնալիք են դիտարկվում Ռուսաստանի կողմից, հակառակ պարագայում նա պատրաստ է դիմելու ուժի կիրառմանը: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա վերջինս ուղիղ առճակատման չի գնա Ռուսաստանի հետ այս հարցում, և միջուկային գերտերությունների ուղիղ առճակատում տեղի չի ունենա: Իր խոստմանը հավատարիմ՝ ԱՄՆ-ն կշարունակի ռազմապես աջակցել Ուկրաինային՝ չստիպելով նրան բանակցությունների համար գնալ տարածքային զիջումների՝ այնուամենայնիվ առաջնային կարևորություն տալով խնդրի բանակցային կարգավորմանը: ■

Չղումներ

1. . Zbigniew B., The Premature Partnership, Foreign Affairs, vol. 73, no. 2, 1994, pp. 67–82.
2. . Kissinger H., To settle the Ukraine crisis, start at the end, “The Washington Post”, March 5, 2014, https://www.washingtonpost.com/opinions/henry-kissinger-to-settle-the-ukraine-crisis-start-at-the-end/2014/03/05/46dad868-a496-11e3-8466-d34c451760b9_story.html?fbclid=IwARlzxQSVfPj0Mj0B0AhzP15nrP_B3Myk26xXAGBT3sWJXoGG0lscCD4TbSA (22.08.2022).
3. . Նույն տեղում:
4. . Stiu Mearsheimer J., Why the Ukraine Crisis Is the West’s Fault: The Liberal Delusions That Provoked Putin, “Foreign Affairs”, 2014, vol. 93, no. 5, էջ 77-89:
5. . Stiu Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy, en.kremlin.ru/events/president/transcripts/copy/24034 (22.08.2022):
6. . Stiu Fata D., Putin Announced His Manifesto Against the West Fifteen Years Ago. His Story Hasn’t Changed, <https://www.thebulwark.com/putin-announced-his-manifesto-against-the-west-fifteen-years-ago-his-story-hasn-t-changed/> (22.08.2022):
7. . Stiu Федоровская И., Грузия и НАТО, Хроника, События, Комментарии, Москва, 2017, էջ 117-124:
8. . Press Statement and Answers to Journalists’ Questions Following a Meeting of the Russia-NATO Council, en.kremlin.ru/events/president/transcripts/24903 (23.08.2022).
9. . Stiu Выступление Владимира Путина на саммите НАТО (Бухарест, 4 апреля 2008 года), <https://www.unian.net/politics/110868-vystuplenie-vladimira-putina-na-sammite-nato-buharest-4-aprelya-2008-goda.html> (23.08.2022):
10. . U.S.-Ukraine Relations, <https://ua.usembassy.gov/our-relationship/policy-history/> (23.08.2022).
11. . Stiu Chotiner I., Why John Mearsheimer Blames the U.S. for the Crisis in Ukraine, <https://www.newyorker.com/news/q-and-a/why-john-mearsheimer-blames-the-us-for-the-crisis-in-ukraine> (23.08.2022):
12. . Mearsheimer J., նշվ. աշխ.:
13. . Dickinson P., How Ukraine’s Orange Revolution shaped twenty-first century geopolitics, <https://www.atlanticcouncil.org/blogs/ukrainealert/how-ukraines-orange-revolution-shaped-twenty-first-century-geopolitics/> (23.08.2022).
14. . Direct Line with Vladimir Putin, en.kremlin.ru/events/president/news/20796 (24.08.2022).
15. . Conflict in Ukraine, <https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/conflict-ukraine> (24.08.2022).
16. . Conflict in Ukraine’s Donbas: A Visual Explainer, <https://www.crisisgroup.org/content/conflict-ukraines-donbas-visual-explainer> (24.08.2022).
17. . Kirby P., Why has Russia invaded Ukraine and what does Putin want? <https://www.bbc.com/news/world-europe-56720589> (24.08.2022).
18. . Russia Lays Out Demands for a Sweeping New Security Deal With NATO, <https://www.nytimes.com/2021/12/17/world/europe/russia-nato-security-deal.html> (24.08.2022).
19. . Նույն տեղում:
20. . Blinken A., Ukraine National Day – 30 Years of Independence, <https://ge.usembassy.gov/ukraine-national-day-30-years-of-independence/> (24.08.2022).
21. . Biden J., President Biden: What America Will and Will Not Do in Ukraine, <https://www.nytimes.com/2022/05/31/opinion/biden-ukraine-strategy.html> (25.08.2022).
22. . Stiu Taylor W., The United States Speaks Clearly on Russia’s Ukraine War, <https://www.usip.org/publications/2022/06/united-states-speaks-clearly-russias-ukraine-war> (25.08.2022):
23. . Biden J., նշվ. աշխ.:
24. . Stiu U.S. Security Cooperation with Ukraine: Fact Sheet, <https://www.state.gov/u-s-security-cooperation-with-ukraine/> (25.08.2022):
25. . Stiu Russia’s 2022 Invasion of Ukraine: Overview of U.S. Sanctions and Other Responses, “Congressional Research Service”, <https://crsreports.congress.gov/product/pdf/IN/IN11869> (26.08.2022):
26. . Stiu The United States Announces Additional Humanitarian Assistance to Ukraine, <https://www.usaid.gov/news-information/press-releases/jul-18-2022-united-states-announces-additional-humanitarian-assistance-ukraine> (26.08.2022):
27. . Stiu Joe Biden’s Tweet, <https://twitter.com/potus/status/1502353759455821833> (26.08.2022):
28. . Stiu Russia’s Invasion of Ukraine: European Union Responses and Implications for U.S.-EU Relations, “Congressional Research Service”, <https://crsreports.congress.gov/product/pdf/IN/IN11897> (26.08.2022):
29. . Secretary Antony J. Blinken and German Foreign Minister Annalena Baerbock at a Joint Press Availability, <https://www.state.gov/secretary-antony-j-blinken-and-german-foreign-minister-annalena-baerbock-at-a-joint-press-availability/> (26.08.2022).
30. . Stiu Bella T., Kissinger says Ukraine should cede territory to Russia to end war, <https://www.washingtonpost.com/world/2022/05/24/henry-kissinger-ukraine-russia-territory-davos/> (26.08.2022):
31. . “There Is No Good Historical Example” for War in Ukraine, <https://www.spiegel.de/international/world/interview-with-henry-kissinger-for-war-in-ukraine-there-is-no-good-historical-example-a-64b77d41-5b60-497e-8d2f-9041a73b1892> (26.08.2022).
32. . Stiu Bella T., նշվ. աշխ.:
33. . Stiu Biden J., նշվ. աշխ.:

Կենտրոնական Ասիայում ձևավորվում է ձգողականության նոր կենտրոն, և դա Ռուսաստանը չէ

Ազիզ Աբդրախմով

Ուկրաինայում և Թայվանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների խորապատկերին մոտրակի այլ անկյուններում տեղի ունեցող իրադարձությունները շատերի համար տեղի են ունենում անսկաստ: Մինչդեռ դրանցից մի քանիսը վկայում են այն մասին, որ միջազգային համակարգի և առևտրային հարաբերությունների վերաբաշխումը տեղի է ունենում ոչ միայն հիմնական ուղղություններով: Մասնավորապես, աշխարհաքաղաքական իրականության տրանսֆորմացիա է տեղի ունենում Կենտրոնական Ասիայում, որտեղ Չինաստանի հետ մեկտեղ ավելի ու ավելի մեծ դեր է խաղում Թուրքիան, որը ձգտում է տարածաշրջանում իր իշխող դիրքն ապահովելու, այդ թվում՝ ուղղակի կամ անուղղակի, Ռուսաստանի հաշվին:

Այդ գործընթացի ապացույցներից մեկը Կենտրոնական Ասիայի և Թուրքիայի ներկայացուցիչների հաճախակիացած հանդիպումներն են: Օրինակ՝ մայիսի սկզբին Թուրքիայի և Ղազախստանի նախագահները Անկարայում ստորագրեցին ռազմավարական գործընկերության մասին հուշագիր և ևս 14 համաձայնագիր: Խոսքը, ի թիվս այլ հարցերի, վերաբերում էր նաև մաքսային հսկողության պարզեցմանը, ռազմական հետախուզությանը, տեղեկատվական տեխնոլոգիաներին, տրանսպորտային-տարանցիկ գործընկերության ամրապնդմանը, ինչպես նաև Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղու (կամ «միջին միջանցքի») ներուժի «առավել արդյունավետ օգտագործմանը»: Այդ ժամանակ էլ հայտարարվեց, որ երկրները ծրագրում են երկու անգամ ավելացնել ապրանքաշրջանառությունը՝ հասցնելով մինչև 10 մլրդ դոլարի:

Հուլիսի 21-ին արդեն Ստամբուլում կայացավ Թուրքիայի, Պակիստանի և Ադրբեջանի խորհրդարանների խոսնակների հանդիպումը, որի ընթացքում ստորագրվեց Ստամբուլի հռչակագիրը: Համաձայն դրա՝ երկրները հաստատել են համագործակցության շարունակումը տարածաշրջանային ինտեգրմանը, տրանսպորտի, առևտրի և էներգետիկայի զարգացմանը նպաստող, ինչպես նաև ժողովուրդների միջև հարաբերությունների, կրթության, մշակութային փոխանակման և զբոսաշրջության ոլորտներում: Եվս վեց օր անց Բաքվում հավաքվեցին Ադրբեջանի, Ղազախստանի և Թուրքիայի արտաքին գործերի և տրանսպորտի նախարարները, որպեսզի քննարկեն Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղու զարգացման հարցը:

Օգոստոսի 2-ին տեղի է ունեցել ևս մեկ հանդիպում, որը խոստանում էր դառնալ ուղենշային: Տաշքենդում հանդիպել են Ուզբեկստանի, Ադրբեջանի և

Թուրքիայի արտաքին գործերի, էկոնոմիկայի, առևտրի և տրանսպորտի նախարարները, որոնք քննարկել են բազմաթիվ հարցեր՝ սկսած տնտեսական համագործակցությունից մինչև տարածաշրջանային և համաշխարհային անվտանգությունը:

Հանդիպման արդյունքը տաշքենդյան հռչակագիրն է, որում նախանշվել են երեք երկրների միջև համագործակցության հիմնական առաջնահերթությունները մոտ հետևյալն է: Փաստաթղթում ներառված են 14 դիրքորոշումներ, որոնց վերաբերյալ Տաշքենդը, Անկարան և Բաքուն հայտնել են իրենց միասնությունը և մտադիր են թափ հաղորդել համագործակցությանը: Այստեղ նաև «փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային և միջազգային հարցերի շուրջ փոխգործակցությունն է», և «միմյանց տարածքային ամբողջականության լիակատար հարգումը իրենց միջազգայնորեն ճանաչված սահմաններում», և «միջազգային իրավունքին համապատասխան աջակցությունը միմյանց ջանքերին՝ ընդդեմ այն գործողությունների, որոնք սպառնում են ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը», ինչպես նաև «միջազգային կազմակերպությունների շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ համագործակցության շարունակումը»: Բացի այդ՝ մասնակիցները հայտարարել են, որ պատրաստ են «համատեղ ջանքեր գործադրելու տնտեսության, առևտրի, ներդրումների և տրանսպորտի ոլորտներում համագործակցության ներուժի լիարժեք իրացման համար, ներառյալ տրանսպորտային և տարանցիկ հաղորդակցությունների բոլոր տեսակները»: Դրա



Թուրքիայի և Ղազախստանի նախագահները ստորագրեցին «Ռազմավարական գործընկերության մասին» Հռչակագիր: Անկարա 10.05 2022 թ.

Աշխարհաքաղաքական

համար ծրագրվում է ակտիվորեն օգտագործել Բաքու-Թբիլիսի-Ալյալքալաք-Կարս երկաթուղու հնարավորությունները, ներառյալ Թուրքիայի և Ադրբեջանի նավահանգիստները, ինչպես նաև «Հյուսիս-հարավ» և «Արևելք-արևմուտք» տրանսպորտային միջանցքները:

Բացի այդ՝ կողմերը կարևորել են Ուզբեկստանի նախաձեռնությունը Թերմես-Մազարի-Շարիֆ-Քարուլ-Փեշավար երկաթուղագծի կառուցման հարցում և պաշտպանել Ուզբեկստան-Ղրղզստան-Չինաստան երկաթուղու կառուցումը: Ի հավելումն այս ամենի, ինչպես հայտարարել է Ուզբեկստանի ԱԳ նախարարի պաշտոնակատար Վլադիմիր Նորովը, երեք երկրները, բացի տարանցիկ գործառույթներից, ծրագրում են տրանսպորտային երթուղիների երկայնքով ստեղծել «արտադրական-լոգիստիկ կայաններ՝ արտաքին շուկաներ բարձր ավելացված արժեքով արտադրանք մատակարարելու համար»: Եվ այս ամենը, եթե նայենք երկրների աշխարհագրությանը, պետք է տեղի ունենա՝ շրջանցելով Ռուսաստանը, բայց Թուրքիայի անմիջական մասնակցությամբ, որը սրընթաց գնում է վերածվելու Կենտրոնական Ասիայի երկրների համար ձգողականության կենտրոնի: Մասնավորապես, Թուրքիան սկսել է լուրջ ջանքեր գործադրել Տրանսկասպյան երթուղու զարգացման ուղղությամբ, որը ոչ միայն երթուղի է, այլև գլոբալ մուլտիմոդալ տրանսպորտային միջանցքի մի ամբողջ հայեցակարգ, որը կապում է Չինաստանն ու Եվրոպան՝ շոշափելով Կենտրոնական Ասիան, Հարավային Կովկասը՝ Վրաստանով և դրան հարող տարածաշրջաններով: Այն մշակվել է 2014 թ. Ղազախստանի, Ադրբեջանի և Վրաստանի կողմից՝ «Պատմական մեծ մետաքսի ճանապարհի վերածնունդի» պաշտոնական հայեցակարգի շրջանակում: Ընդ որում, Ռուսաստանի դեմ այդ տարի սկսված պատժամիջոցների ճնշման հետ կապված նախագծի իրական նպատակը բեռների

փոխադրումն է՝ շրջանցելով ՌԴ-ն: Հենց այդ պատճառով այդ գաղափարը պաշտպանել են Թուրքիան և Ուկրաինան, իսկ նախագծի ասոցացված անդամների թվում հայտնվել են Չինաստանից լոգիստիկ օպերատորները: Որպես արդյունք՝ «միջին երթուղին» դարձել է նաև առևտրային ընկերություն, որի կենտրոնակայանը գտնվում է Նուր Սուլթանում, որտեղ մոտ 20 տրանսպորտային և լոգիստիկ օպերատորներ կան, ինչպես նաև տասնյակ նավահանգիստներ:

Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղու մաս է կազմում Բաքու-Թբիլիսի-Ալյալքալաք-Կարս արդեն հիշատակված երկաթուղին: Այն բացվել է 2017 թ., և այսօր ոչ ոք չի թաքցնում, որ հակառուսական պատժամիջոցների պայմաններում տվյալ տեղամասը դիտարկվում է որպես Ռուսաստանի Դաշնության տարածքի ապրանքային հոսքերի շրջանցման տարբերակներից մեկը: Հարկ է նշել, որ ավելի վաղ Մոսկվան հետաքրքրություն էր ցուցաբերել «միջին միջանցքի» նախագծին մասնակցելու հարցում, սակայն հետագայում ծրագրերից այն կողմ գործն այդպես էլ չանցավ: ՌԴ-ում երկար ժամանակ հատուկ անհրաժեշտություն չեն տեսել ներդրումներ անելու այս նախագծում, մանավանդ որ դրա նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունը ևս մեծ չէր: Պեկինում կարողանում են գումար հաշվել, առավել ևս, որ «միջին միջանցքի» թողունակությունը բավականին փոքր է. 2020 թ. այն գնահատվում էր 200-300 հազար TEU, ինչը 20 անգամ պակաս է, քան «Գոտի և ուղի» հիմնական երթուղու դեպքում:

Սակայն ներկայիս հակառուսական պատժամիջոցները կարող են ամբողջովին փոխել իրավիճակը՝ Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային երթուղին գրավիչ դարձնելով նրանց համար, ովքեր մտադիր են հրաժարվել կամ կրճատել ՌԴ-ի հետ համագործակցությունը: Այսպես, օրինակ, արդեն հայտ է ներկայացրել ֆիննական «Nurminen Logistics»-ը, որը մարտին փակել է ներկայացուցչությունը Ռուսաստանում և պայմանագիր կնքել «Ղազախստան երկաթուղիների» հետ: Այս ամենը, ինչպես նաև Մոսկվայի բավականին դանդաղկոտ դիրքորոշումը միջազգային միջանցքի հարցում միայն մղում են Անկարային ավելի վճռական գործողությունների, քանի որ Թուրքիայի մայրաքաղաքում հասկանում են, որ տարածաշրջանում իր կարգավիճակը բարձրացնելու նման այլ հնարավորություն, այդ թվում՝ այստեղ Մոսկվայի ազդեցության նվազեցման հաշվին, նա կարող է և այլևս չունենալ:

Թուրքիայի նման պահվածքը, որով ձևականորեն արտահայտվում է Ռուսաստանի հանդեպ նրա բարյացակամությունը, չի կարելի անսովոր համարել: Անկարայի համար Կենտրոնական Ասիան ոչ միայն Չինաստանի և տարածաշրջանի երկրների հետ առևտրային ճանապարհի կարևոր բաղադրիչ է, այլև մոտ տեղակայված Կովկասի, կասպյան և սևծովյան ավազանների, Բալկանների, Արևելյան Միջերկրականի և Մերձավոր Արևելքի նկատմամբ



Ուզբեկստանի, Թուրքիայի և Ադրբեջանի ԱԳ նախարարները ստորագրում են տրանսպորտային հոշակապիտը: Տաշքենթ 2.08.2022

պատմական «պատասխանատվության» մի մասը: Անկարայի նման հավակնությունները վաղուց գաղտնիք չեն և նույնիսկ նեոսուսնիզմի քաղաքականության հատուկ անվանում են ստացել: Դրա շրջանակներում Թուրքիան ձգտում է անմիջական ազդեցություն ունենալու Կովկասի և Կենտրոնական Ասիայի հետխորհրդային պետությունների իրավիճակի վրա, ինչն իր հերթին շոշափում է Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի շահերը: Եվ այս դեպքում Անկարան գործում է ամենատարբեր միջոցներով: Օրինակ՝ տարածաշրջանում մեծացնում է իր տնտեսական ներկայությունը, թեև ոչ այն տեմպով, որ ցանկալի կլինեի թուրքական իշխանություններին, լոգիստիկայի խնդիրների և այնտեղ զարգացած ենթակառուցվածքների բացակայության պատճառով: Այսպես՝ 2010-2020 թթ. Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև ապրանքաշրջանառությունն աճել է՝ 5.5 մլրդ դոլարից հասնելով 6.3 մլրդ դոլարի, ինչը կազմում է թուրքական արտաքին առևտրաշրջանառության ընդհանուր ծավալի 1.5 տոկոսը: Ամենից շատ Թուրքիան առևտուր է անում Ուզբեկստանի և Ղազախստանի հետ. նրանցից յուրաքանչյուրի հետ ապրանքաշրջանառությունը գերազանցում է 2 մլրդ դոլարը: Ճիշտ է, այդ հանրապետությունների առևտրային գործընկերների ցուցակում նա դեռևս առաջատարների եռյակում չէ: Ուստի պատահական չէ, որ Անկարան այդքան հետաքրքրվեց «միջին միջանցքով», հատկապես Ռուսաստանի խնդիրների պայմաններում: Չի բացառվում, որ Թուրքիան դառնա այդ նախագծի հիմնական խաղացողներից մեկը, այդ թվում՝ Ռուսաստան մատակարարումների, այսպես կոչված, գուգահետ ներմուծման պատրվակով:

Կարելի է նաև հիշել, որ Անկարան ձգտում է դառնալու Եվրասիայի «էներգետիկ բորսան»՝ մոնոպոլիզացնելով արևելքից արևմուտք եկող էներգետիկ հոսքերը: Այսպես՝ մինչև 2021 թվականը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով, որը շահագործվում է «Բրիթիշ պետրոլիում»-ի կողմից, Բաքվի մոտ գտնվող Սանգաչայի տերմինալից ընդհանուր առմամբ ավելի քան 500 մլն տոննա նավթ է տեղափոխվել Թուրքիա: Այսօր նախագիծ է մշակվում նաև Ադրբեյջան-Թուրքիա-Եվրոպա էներգետիկ միջանցքի համար, որը, ըստ Բաքվի, կարող է ավարտվել մինչև 2025 թվականը:

Բացի այդ՝ չպետք է մոռանալ նաև, որ առաջին տարին չէ, որ Թուրքիան ամրապնդում է ռազմական և քաղաքական հարաբերությունները Կենտրոնական Ասիայի երկրների հետ, իսկ անցած տարիներին նույնիսկ հնչել է թյուրքական պետությունների մասնակցությամբ «Թուրանի բանակ» ստեղծելու գաղափարը: Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև ռազմական համագործակցության ամրապնդումը մեծ թափ է առել 2020 թ. դարաբաղյան հակամարտության վերսկսումից հետո: Այս ամենը, ինչպես նաև Անկարայի մի շարք այլ՝ ոչ այնքան նկատելի, բայց այդ պատճառով ոչ պակաս կարևոր

գործողությունները վկայում են այն մասին, որ Թուրքիան լրջորեն որոշել է առաջատար տեղ գրավել Կենտրոնական Ասիայում՝ դրա համար օգտագործելով ինչպես դիվանագիտական, քաղաքական մեթոդներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական և հումանիտար լծակներ:

Կենտրոնական Ասիայի և Կովկասի թյուրքալեզու պետությունների քաղաքական ինտեգրումը դեռ չի ավարտվել: Առայժմ հետխորհրդային տարածաշրջանի երկրների մեծամասնության համար Ռուսաստանի հետ համագործակցությունը մնում է առաջնային ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական անվտանգության հարցերում: Դա չի նշանակում, սակայն, որ Թուրքիայի ներկայիս ակտիվությունը և Արևմուտքի աճող ճնշումը Ռուսաստանի վրա տեսանելի ապագայում չեն կարող փոխել իրավիճակը: Այդ առումով արժե, որ Մոսկվան ավելի ուշադիր լինի իր ասիական «գործընկերոջ» քաղաքականությանը և չհրաժարվի Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական հնարավոր ոչ մի նախագծից: Հակառակ դեպքում, եթե ոչ Թուրքիան, ապա Չինաստանը կամ Իրանը միանգամայն ունակ են ամբողջությամբ խլելու նախաձեռնությունը տարածաշրջանում, ինչը Ռուսաստանի համար լուրջ խնդիրներ կստեղծի արևելյան սահմաններում: ■

<https://www.ritm Eurasia.org/news--2022-08-10--v-centralnoj-azii-formiruetsja-novyj-centr-prijazhenija-i-eto-ne-rossija-61381>

Ռուսերենից թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի



Ուզբեկստանի, Թուրքիայի, և Ադրբեյջանի ԱԳ, Տրանսպորտի, Էկոնոմիկայի և առևտրի նախարարների հանդիպումը: Տաշքենդ 2.08.2022 թ.

Հայ ազատագրական շարժման մեծագոյն նուիրեալ Գէորգ Չաուոշին ձօնուած երգերը (մաս 1)

Աւօ Գայթրճեան

Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

Մուտք

1890-ական թուականներու սկիզբները Արևմտեան Հայաստանի մէջ նոր թափ ստացած էին ազատագրական շարժումը, զինուած ելոյթներն ու ինքնապաշտպանական մարտերը՝ պայմանաւորուած հայ ազգային կուսակցութիւններու՝ «Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութիւն» և «Հայ Յեղափոխական(ների) Դաշնակցութիւն», ստեղծումով:

Եւ քանի որ ազգային կուսակցութիւնները ծնած էին հայ ժողովուրդի ազատագրական պայքարի հետևանքով, և անոնց հիմնական նպատակն էր Հայկական հարցի լուծումը՝ Արևմտեան Հայաստանի ազատագրումը, ուստի պէտք է համագործակցելին այնտեղ գործող հայդուկային խումբերու հետ՝ շարժումին տալով համազգային բնոյթ: Սկիզբէն իսկ կուսակցութիւնները ֆետայիները համարած են իրենց մարտական ուժը, իսկ ֆետայիները պատրաստ էին ընդունելու ազգային կուսակցութիւններու գաղափարական ղեկավարութիւնը: Հայդուկային շարժումը, որ սկզբնաւորուած էր անկախ հայ քաղաքական կուսակցութիւններէ, հետագային զարգացաւ անոնց ղեկավարութեամբ:

Արևմտահայերու ազգային-ազատագրական զինուած պայքարին մէջ մեծ դերակատարութիւն ունեցաւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութիւնը:

Առաջին հայդուկներէն Աղբիւր Սերոբի, Հրայր Դժոխքի կողքին կը գործէր նաև Գէորգ Չաուոշը: Ան մարտնչած էր բազմաթիւ խումբերու մէջ: Իր անձնագոհութեամբ և սխրանքներով չէր զիջէր Աղբիւր Սերոբին, սակայն անմոռնչ կը կատարէր անոր հրամանները: Գէորգ մղած է բազմաթիւ կռիւներ՝ Մազրայի, Շենիկի, Բերդակի, Պնաի մարտերը, որոնք բոլորն ալ աւարտած էին յաղթանակով: Անոնցմով ան սիրտ կու տար հայութեան, ներշնչում ֆետայիներու նկատմամբ, իսկ քիւրտ ու թուրք շահագործողները կը վախճային Գէորգի պատիժէն: Ան դարձած էր անորսալի վրիժառու: Կառավարութիւնը ուժեղացուց զինք հետապնդելու ճիգերը, և 1907 թ. Սուլուիսի (այժմ՝ Մուրատկէօրէն, թրք. Muratgören) կռիւին Գէորգը զոհուեցաւ, բայց անոր անունը մնաց ժողովուրդի սրտին մէջ իբրև անձնագոհութեան և նուիրումի վսեմ օրինակ:

Հայ յեղափոխական շարժումը, յեղափոխական, ֆետայական գործողութիւնները և անձնագոհ մարտիկները յարգելու և անմահացնելու նպատակով յորինուած են տասնեակներով յեղափոխական և ազգային երգեր, որոնցմով միաժամանակ սերունդներ դաստիարակուած են. ժողովուրդը մինչև այսօր ալ կ'երգէ ուրախառիթ թէ թախծոտ երգերը հայ



յեղափոխութեան:

Գէորգ Չաուոշի հերոսական կերպարը պատճառ դարձած էր, որ նախ իր մասին տարբեր լեզուներով երգեր հիւսուին, լեռ մը իր անունով կոչուէր, մշակոյթի և արուեստի բնագաւառներուն մէջ, երգերէ գատ, լոյս տեսնէին յօդուածներ, բանաստեղծութիւններ, գիրքեր, վէպեր, ստեղծուէին քանդակներ (յուշարձան, հարթաքանդակ, արձան, կիսանդրի և այլն), նկարչական գործեր, թատրերգութիւններ, ՀՀի մէջ դպրոցներ իր անունը կրած են: 1980-ական թուականներուն ՀՀ Արագածոտնի մարզի Աշնակ գիւղին մէջ հիմնուած է Գէորգ Չաուոշի թանգարանը:

Յատկապէս յեղափոխական գրականութեան մէջ կը հանդիպինք Գէորգ Չաուոշին առնչուած բազմաթիւ նիւթերու: Անոր մասին առաջին փոքր գրքոյկը՝ «Գէորգ Չաուոշ» խորագրով (1907, Ժընև), գրուած է Ռուբէն Զարդարեանի կողմէ՝ նահատակութենէն քանի մը ամիս ետք: Նոյն տարին Ժընևի մէջ լոյս տեսած է Ալլանի՝ «Գէորգ Չաուոշ» խորագրով գործը՝ Չաուոշի համառօտ կենսագրականը: Աւօ Թումայեան «Գէորգ Չաուոշ» (Պէյրութ, 1972) գիրքը պատրաստած է տարբեր վկայութիւններ մէջբերելով և համարեայ ամբողջական պատկերը տալով Գէորգի կենսագրութեան: Գէորգի գործունէութեան մասին կը կարդանք նաև Ռուբէն Տէր-Մինասեանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գիրքին 2-րդ, 3-րդ և 4-րդ հատորներուն մէջ:

Գէորգ Չաուոշի մասին առաջին վէպը եղած է Կարօ Սասունիի «Մարերու ասլանը», որ լայնօրէն յայտնի է Սփիւռքի մէջ, որուն վրայ հեղինակը աշխատած է շուրջ 40 տարի: Գիրքը առաջին անգամ հրատարակուած է 1966 թուականին Պէյրութի մէջ, իսկ երկրորդ անգամ՝ 1983 թուականին Թեհրան: Վէպը հասկնալի պատճառներով արգիլուած էր Խորհրդային Հայաստանի մէջ: Ամբողջութեամբ Գէորգ Չաուոշի կեանքին է նուիրուած նաև հայր և որդի Ստեփան և Կարօ Պողոսեաններու հեղինակած «Ինձ բահ տուէք...

(Գեորգ Չաուշ)» փաստավաերագրական գիրքը: Գեորգ Չաուշը նաև գործող անձ է Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպին մեջ, թեև վեպին գլխավոր հերոսը հայդուկ Մախլուտոն (գորավար Սմբատ) է: Գեորգ Չաուշի մասին պատում գրած է նաև բանասեր-բարբառագետ Սուրեն Սահակեանը իր «Հերոսապատում» (Երևան, 1990) գիրքին մեջ:

Կան նաև բազմաթիվ տպատրուբիաններ, յուշագրություններ և խորհրդածություններ Գեորգի մասին: Բնականաբար, Գեորգ Չաուշ անհատին ճշգրիտ ու ամբողջական բնութագրումը տուած է Ռուբեն: Շուրջ մեկ տարի ապրելով ու գործելով Գեորգին հետ՝ Ռուբեն կրցած է լսապէս ճանչնալ Գեորգը և զայն ներկայացնել իր յուշերուն մեջ:

Այսպիսով՝ Գեորգ Չաուշի անունը լայն տարածում գտաւ նախ արուեստի բնագաւառին մեջ զանազան ստեղծագործություններու ճամբով, իսկ միւս կողմէ՛ ալ անոր անունով կոչուեցան բազմաթիւ կեդրոններ, կառոյցներ, վայրեր և այլն:

Գեորգ Չաուշի գործունէութիւնը վարակիչ եղած է թէ՛ կենդանութեան և թէ՛ նահատակութենէն ետք: Հետևաբար հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի պատմութեան մեջ մեծ է տեղը Գեորգ Չաուշին: Ան, գլուխը անցնելով հայկական ֆիտայական խմբաւորումներուն, պաշտպանած է հայկական գիւղերը, ամէնէն դժնդակ ու ծանր պայմաններուն մեջ անգամ չէ լքած իր ժողովուրդը և քաջաբար դիմադրած է թրքական բանակներու ներխուժումներուն:

Արդարև, կատարուած ինքնապաշտպանական և հերոսական արարքները, գործողութիւններն ու պատմությունները նկարագրուեցան երգերով նաև: Այդ երգերը ժամանակի ընթացքին տարբեր բնոյթ ստացան, այդ իսկ պատճառով ատոնց տրուեցան «յեղափոխական երգեր», «ռազմական երգեր», «ազգային-հայրենասիրական երգեր» կամ «ազգագրական երգեր» բնութագրումները: Անոնք պատճառ դարձան, որ յիշողութիւնները վերածուին ամէնօրեայ ապրումի:

Այդ երգերուն մեծամասնութեան Սփիւռքը տուաւ «յեղափոխական երգեր» անուանումը: Հարկ է ընդգծել, որ ատոնք մեծ մասամբ մեզի բանաւոր աւանդումով հասած են մեր հորմէն և մեծ հորմէն ու մեծ մօրմէ: Այդ երգերը, անկասկած, նախ յիշողութիւններ են, ապա՝ պատմութիւն նկարագրող, բայց միննոյն ժամանակ դաստիարակչական ու քարոզչական մեծ աշխատանք՝ ծանօթացնելու կատարուած սխրագործութիւնները, նշելու դէպքերն ու դէմքերը:

Առանձնացնելով Գեորգ Չաուշին դիպաշարը՝ նորութիւն ըսած չենք ըլլար, եթէ նշենք, որ անիկա ամէնէն մեծ ժողովրդականութիւն վայելող ու քաջութեան կերպար մըն էր ըստ ամենայնի: Անոր այս յատկութիւնները հիմք էին, որ հազարաւոր հայդուկներուն մեջ դառնար իւրայատուկ: Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ մինչև մեր օրերը տակաւին անոր մասին երգ կը յօրինուի, և ամէնէն շատ երգ «ունեցող» ֆետայիներէն է Գեորգ



Գեորգ Չաուշ

Չաուշը:

Գեորգ Չաուշի սխրագործութեանց պատճառով հայ ժողովուրդը և յատկապէս յեղափոխականներ ծնունդ տուին Չաուշը նկարագրող բազմաթիւ երգերու, որոնք հիստուած են անոր գործունէութեան ու նահատակութեան շուրջ: Կը նկարագրուին Առաքելոց վանքի կոհիւր, Սուլուխի կոհիւր, Նորշէնի կոհիւր և Գեորգ Չաուշի յիշատակները և այլն: Սակայն այդ երգերուն առանցքը կը կազմէ Սուլուխի կոհիւր:

Այս աշխատասիրութեան մեջ իբրև հիմնական նիւթ լուսարձակի տակ կ'առնենք հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի սիրուած կերպարներէն հերոս Գեորգ Չաուշի կեանքին ու դիւցազնական գործունէութեան ձօնուած 17 երգերը: Այն երգերը, որոնք Չաուշի ապրած օրերուն և նահատակութենէն անմիջապէս յետոյ յօրինուած են, աներկբայօրէն մաս կը կազմեն «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան մշակութային և պատմական ժառանգութեան: Իսկ բաւական վերջ յօրինուածները ցոյց կու տան Գեորգ Չաուշ երևոյթի այժմէականութիւնն ու հրատապութիւնը:

Գեորգ Չաուշի հմայքն ու գաղտնիքը տպատրոդ երգերը

Գեորգ իր անձնական կեանքով ու հայրենասիրական գործունէութեամբ վայելած է ինչպէս իր զինակից ընկերներու, այնպէս ալ հայ ժողովուրդի լայն խաւերու սէրն ու յարգանքը, բարոյական ու նիւթական աջակցութիւնը, ներշնչանքի աղբիւր դարձած է թէ՛ նշանաւոր ստեղծագործություններու, թէ՛ ժողովրդական երգիչ-երգահաններու համար:

Այս ամենը բնականաբար կը փաստէ Չաուշի վայելած ժողովրդականությունն ու վարկը: Երջանիկ գուգադիպությունամբ ժողովրդական-վիպական հերոսի գաղափարական պատկերացումները համընկած են պատմական իրողություններու հետ:

Չաուշի հերոսական արարքներն ու նահատակությունը պատճառ դարձան, որ մայիս ամսուն նիւթը առաջին հերթին յիշատակուի յօդուածներու ընդմէջէն, ապա յօրինուած երգերը տեղադրուին մամուլի և երգարաններու մէջ: Քանի մը տասնեակ տարիներ ետք յատկապէս Սփիւքի տարածքին, Չաուշի տարողութեան հարցը աչքի առաջ առնելով, ընթացք առաւ ձեռնարկներով զինք յիշատակելը ևս: Այդ ձեռնարկներուն տեղի ունեցած գեղարուեստական յայտագիրներուն բնականաբար մաս կը կազմեն Գէորգ Չաուշին նուիրուած երգերը: Շարունակուելով ասոնք տակաւին կը սփռուին ձայնասփիւքի կայաններէ, ինչպէս նաև կ'երգուին բանակումներու, միութենական խրախճանքներու կամ այլ հաւաքոյթներու առիթով:

Գէորգ Չաուշին նուիրուած երգերը գովքի երգեր են անկասկած: Որոշակի փաստերու, դէպքերու հենքի վրայ, որոնք կը տրուին ընդհանուր գիծերով, կ'արժևորուի Չաուշի գործունէութիւնը, իսկ չափանիշը ազատագրական պայքարին անոր բերած նպաստն է, հայրենիքին մատուցած ծառայութիւնը. անոր առաքիւնութիւնը կ'իմաստաւորուի այդ չափանիշով: Երգերուն հեղինակները, ըլլան անոնք հայ կամ քիւրտ, իրենց ստեղծագործութիւններու մէջ անպայման մակդիր մը տուած են Գէորգ Չաուշին: Այս մէկը մօտեցում մըն է, գիծ մը, որ կու գայ հինէն, և այդ մէկը կ'ընդգծուի բանասիրական ստեղծագործութիւններու, մասնատրապէս՝ երգի մէջ: Այդ երգերուն մէջ կ'ընդգծուին, կը փառաբանուին Գէորգի առաքիւնութիւնը և ապա՝ քաջութիւնը, նուիրուածութիւնը, պատուասիրութիւնը, անոր ընդունակութիւնը՝ կռուի կոչելու, խրախուսելու իր զինակից ընկերները, ոտքի հանելու ժողովուրդը:

Միս կողմէ՛ խիստ կարևոր է ընդգծել, որ մեր ժողովուրդը և քիւրտերը ֆետային գովերգելու ընթացքին չմոռցան նաև յիշել ոռուական արտադրութեան, սակայն ՀՅԴ զինագործարաններու մէջ որոշ փոփոխութիւններէ յետոյ և Դաշնակցութեան զինանշանի կնքումով գործող նշանաւոր «Մոսին» հրացանը՝ ֆետայիին անբաժան ընկերը: Մեծ թիւով ժողովրդական երգեր, որոնք նուիրուած են «Մոսին» հրացանին, կը փաստեն անոր կարևոր դերը և զգացական կապը մեր ժողովուրդին և ֆետայիներուն հետ: Այդ իսկ պատճառով Գէորգ Չաուշին նուիրուած երգերուն մէջ՝ հայերէն կամ քրտերէն, մեծ մասամբ պիտի հանդիպիք «Մոսին» հրացանի յիշատակման նաև:

Ստորև կը ներկայացնենք Գէորգ Չաուշին նուիրուած 17 երգերը, որոնք մեր ուսումնասիրութեան առարկայ դարձած են: Այս երգացանկէն դուրս կը մնան բնականաբար այն երգերը, որոնց մէջ կան Տարօնի հայդուկապետին մասին ակնարկութիւններ:

Երգերը՝

1. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻԻԸ (Պաշարման մէջ է թարգմանչաց սուրբ վանք),
2. ՆՈՐՇԷՆ ԳԻԻՂԻ ԵՐԳԸ (Հազար ին հարիւր մէկ թուականին),
- 3.ՏԷ ԼԷԽԸՆ, ԼԷԽԸՆ, ՊՐԱՆՕ ԼԷԽԸՆ (Տէ գարկէք, գարկէք, եղբայրներ, գարկէք),
4. ՇԸՌ Է ՏԸ ԿՐԱՆ Է ԿՈՒՐԱԽՈՒ Է,
5. ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ԵՐԳԸ (Թուրքը լսաւ անունդ Չաուշ),
6. ՍԱՐՍԱՓՆ ԱՀԱԽՈՐ, ՍՈՍԿՈՒՄՆ ԱՀԱԳԻՆ,
7. ՍՈՒԼՈՒԽ ԳԻԻՂԻ ԿՌՈՒԻ ԵՐԳԸ (Մոսկումն ահաւոր պատեց Մշոյ դաշտ),
- 8.ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (Հազար ին հարիւր եօթ թուականին),
- 9.ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ԽԱՂԸ (Հազար ինը հարիւր եօթ թուականին) [տարբերակ],
10. ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ԵՐԳԸ (1907 թուականին) [տարբերակ],
11. ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻՆ (Մայիս ամսու մէջ),
12. ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒՆ ՄԷՁ (Մայիս ամսուն մէջ վարդերն են բացուեր) [տարբերակ],
13. ԳԷՈՐԳԻ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ (Տասն և եօթը տարի վսեմ սուրբ գործիչ),
14. ՏՂԷՔ ՁԱՆ, ՏՂԷՔ (Առաւօտ, դէմ արշալոյսին),
15. ԵԼԻՐ, ԳԷՈՐԳ, ԵԼԻՐ (Սուլուխէն ստացանք յուրեր ահաւոր),
16. ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻՆ (Աստուքից մի ժայռ պոկուեց),
17. ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ (Գէորգ Չաուշը ո՛ր է):

Յիշողութիւններով մէկտեղուած այս երգերու պատմական հիմքը կը մնան լեռներու առիծ Գէորգ Չաուշի ասպետական նկարագիրը, բռնատէր թուրք կառավարութեան դէմ կատարած քաջագործութիւնները, հայ ֆետայիին նկարագիրը, հայ հերոսին կամքն ու պատգամը և անոր հերոսական նահատակութիւնը, մէկ խօսքով՝ հայկական դիւցազնապատումը:

Այս ուսումնասիրութեան նպատակը թէև Գէորգ Չաուշի ֆետայական փոթորկալի կեանքի ու յեղափոխական գործունէութեան արդիւնքով հիւսուած երգերը լուսարձակի տակ առնել է, բայց և այնպէս խիստ կարևոր է ներկայացնել նախ անոր համառօտ կենսագրականը, որպէսզի կարելի ըլլայ այդ երգերը պարզաբանելու ընթացքին դէպքերու և իրադարձութիւններու պատմական հենքը պահել:

Գէորգ Չաուշ (Գէորգ Արոյի Ղազարեան, Սարհատ)՝ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆետայի, ՀՅԴ կուսակցութեան անդամ: Ծնած է 1870 կամ 1871 թուականին Սասունի Փասնաց գաւառի Մլիթնք գիւղը: Չաուշի հայրը Արոն էր, իսկ հօրեղբայրը՝ իշխան Ղզրոն: Ունէր երկու եղբայր՝

Մինաս և Օհան:

Մանկության Գեորգ գիտին ամենն անհանդարտ տղան էր՝ լեռնականի նկարագրով, արկածալից ու ըմբոստ: Ծաղկները զինք կ'ուղարկեն Մշոյ Ս. Առաքելոց վանքը՝ օտար մթնոլորտի մեջ զսպելու, ուսում ստանալու և քահանայ ձեռնադրուելու համար: Վանքի շրջապատին մեջ Գեորգ կը հանդիպի Արաբոյին և ընկերներուն, հոգևին կը կապուի անոնց, վանքէն հաց կը տանի անոնց թաքստոցը, կը դառնայ անոնց հաւատարիմ սուրհանդակն ու օժանդակը:

14 տարեկան հասակին Գեորգը, տեսնելով, թէ ինչպէս 4-5 քիւրտ հայ գիւղացիներ կը կողոպտեն, քարեր կը շարտէ անոնց վրայ, իսկ հայերուն կոչ կ'ընէ պաշտպանուիլ:

1888-ին Գեորգ վանքէն կը հեռանայ աւելի ըմբոստ ու խիզախ: Կ'ուզէ միանալ Արաբոյի խումբին, բայց Արաբօ արդէն ձերբակալուած էր: Յուսահատ կը վերադառնայ տուն, ուր հայրը կ'արգիլէ ձեռքը զէնք աննել: Դժգոհ հորը ընթացքէն՝ կը մեկնի Հալէպ՝ զէնքի դրամ կամ զէնք ճարելու համար:

Վեց ամիս կը մնայ Հալէպ: Ազգականները կը գնեն իր հանած զէնքը և կը ճամբէն գայն Մկրտէք: Շուտով կ'անցնի Կելիեկուզան: 1890-1894-ին կը գործակցի հնչակեաններ Միհրան Տամատեանի և Համբարձում Պոյաճեանի (Մեծն Մուրատ) հետ թրքական բռնակալութեան դէմ հայ ժողովուրդի մղած պայքարին:

Աղբիւր Սերոբի սպանութենէն (1899) յետոյ կազմակերպած է մատնիչ Աւէի (1900), ապա Անդրանիկի հետ՝ Խալիլ պէյի սպանութիւնը:

Մասնակցած է Սասունի 1891-1894-ի ինքնապաշտպանական մարտերուն (յատկապէս աչքի ինկած է Տալտրիկի 1893-ի կռիւներուն), ձերբակալուած և արգելափակուած է Պիթիսի, ապա՝ Մուշի բանտերու մէջ: 1896-ին կը յաջողի փախուստ տալ բանտէն և կ'ապաստանի Սասուն, ապա կը միանայ Գուրգէնին (Պաղտասար Մալեան) և Հրայր Դժոխքին:

1900-1901-ին մղած է շարք մը կռիւներ (Բերդակի, Նորշէնի և այլն), որոնք կարևոր տեղ կը գրանեն հայդուկային շարժման պատմութեան մէջ:

Գեորգ Չաուշ ղեկավար մասնակցութիւն կ'ունենայ 1901-ի նոյեմբերին Առաքելոց վանքի կռիւին, 1904-ի Սասունի ապստամբութեան (Սասունի հարաւային ճակատի հրամանատար): Ապստամբութեան պարտութենէն յետոյ անցած է Վան, սակայն 1904-ի օգոստոսին տեղի կ'ունենայ Աղթամարի կռիւը: Աղթամարի կղզիի վրայ կը կայանայ վերջին զինուորական խորհուրդը: Հոն ՀՅԴ ղեկավար գործիչներու ժողովի որոշումով Չաուշ խումբ մը մարտիկներով ճամբայ կ'ելլէ՝ վերադառնալու Սասուն: Ան կը հասնի Սասուն և կը շարունակէ պայքարը թրքական իշխանութիւններու դէմ՝ դառնալով ՀՅԴ Դուրան-Բարձրաւանդակի (Մուշ-Սասուն) ներկայացուցիչը և Մուշ-Սասունի հայդուկներու ղեկավարը՝ հայդուկապետը:

Պատմական կարևորութեան համար հարկ է

արձանագրել, որ Գեորգ Չաուշ իր կեանքին մէջ մէկ անգամ լուսանկարուած է՝ 1904 թուականին՝ Վանայ լիճի Աղթամար կղզիին վրայ Անդրանիկի հետ բաժանման յուզումնալից օրը:

1905-ին Գեորգ Չաուշ կ'ամուսնանայ տարիներ առաջ՝ 16 տարեկան հասակին ճանչցած Եղսոյին (Շեղիսէ) հետ:

Շեղիսէ իշխան Վարդանի միակ դուստրն էր: Ան Գեորգին սիրահարուած էր 11 տարեկանին: Երբ Գեորգը կ'ընդունի հայդուկութեան ուղին, Եղսոն կը կանչէ իր մօտ և կ'ըսէ, որ իրենց միջև ամէն ինչ վերջացած է, քանի որ ինք ամուսնացած է զէնքի հետ: Աղջիկը չի դադարի Գեորգը սիրելէ, նոյնիսկ այն ժամանակ, երբ անոր հարազատները բռնի ուժով կ'ամուսնացնեն զինք ուրիշի մը հետ:

1905-ին Եղսոն կը փախչի իր տունէն և Ստեփան վարդապետին կ'ուղարկէ Գեորգի հետ հանդիպումի: Եղսոն որոշած էր կեանքին վերջ տալ, քանի որ առանց Գեորգի իր կեանքը իմաստ չունէր, բայց կ'ուզէր մինչ կեանքին վերջ տալը տեսնել Գեորգը: Գեորգը կտրականապէս կը մերժէ առաջարկը, բայց Սպաղանաց Գալէն ու Խարսայ Յակոն (Ակօ) կը խնդրեն տեսակցիլ Եղսոյին հետ: Գեորգը կը համաձայնի, ու այդ օրն իսկ հարսանիք կ'ընեն: Բոլոր ֆետայական օրէնքներուն հակառակ՝ Գեորգը կ'ամուսնանայ այն աղջկան հետ, զոր կը սիրէր դեռ շատ առաջ:

Եղսոյին, որպէս հարսանեկան նուէր, Գալէն ատրճանակ կը նուիրէ: Իսկ Գեորգը կ'աւելցնէ. «Եղսօ, իմ ընկերներու նուիրած ատրճանակը ամենաթանկ նուէրն է: Հայդուկի զէնքը խիզախ ոգի կը սիրէ: Այդ սուրբ զէնքով խփէ թշնամին, խփէ, ուր ալ որ ըլլայ: Իսկ եթէ ստեղծուի վիճակ, երբ կրնաս թշնամիի ձեռքը իյնալ, չվարանիս ատրճանակի փողը քունքիդ մօտեցնելու...»:

Գեորգ Չաուշի մարտական խումբը 1905-1907 թուականներուն Խարս գիւղի, Աստղի, Արքավանքի և այլ շրջաններու մէջ հերոսական մարտեր մղած է թրքական զերագանցող ուժերու դէմ:

1906-1907-ին գործած է Ռուբէն Տէր-Մինասեանի հետ: Մեծ ջանքեր գործադրած է հայ-քրտական գործակցութեան ստեղծման համար: Գեորգ Չաուշի մղած հայդուկային կռիւները (շուրջ 40) ընթացած են կազմակերպուած և գրեթէ միշտ աւարտած են յաղթանակով:

1907 թուականին մայիս ամսուն ֆետայիները, թուրքերու հետապնդումներէն խուսափելով, կու գան Մշոյ դաշտի Սուլուխ գիւղը: Անոնք 3 օր կը մնան այդտեղ և նոյնիսկ պահակ չեն նշանակեր: Հայդուկները կ'որոշեն քեֆ ընել և ճանապարհել Ռուբէն Տէր-Մինասեանը: 27 մայիսին թրքական զօրքերուն կը յաջողի շրջապատել Գեորգ Չաուշի զօրաջոկատը: Սուլուխը մարտ վարելու համար նպատակայարմար վայր չէր, քանի որ ոչ մէկ բարձունք կար, այլ ամբողջը հարթավայր էր:

Ֆետայիները ստիպուած էին մարտնչել: Գեորգը Յակոյին և քանի մը ֆետայիներու կը հրահանգէ

կեանքի գնով պահել Սուլուխի կամուրջը: Անհուսաար կոնի կը սկսի: Գեորգը Գալէի հետ կը բարձրանայ տան տանիք մը և այնտեղէն կը կռուի: Օրուան առաջին կէտը հայերը լաւ դիրքերու մէջ էին: Նոյնիսկ սպանուած էր Քէօսէ Պինպաշին: Կռուի ընթացքին կը գոհուի Գալէն, իսկ քիչ անց կը փճանայ Գեորգի հրացանի զսպանակը: Մինչ Գեորգը հրացանը կը կարգաւորէր, թշնամիի գնդակը կը դպնայ անոր ծունկին և կ'անցնի թիկունքէն:

Թուրքերը այդ օրը 150 սպանուած և 250 վիրաւոր կու տան: Անոնք Մուշէն թնդանօթ կը բերեն: Հայերը կը հեռանան Սուլուխէն: Գալէի և Յակոբի դիակները կ'իջեցնեն Մուրատ գէտ: Իսկ Գեորգը կը ձգեն Արածանիի ափին՝ կամուրջին մօտ, և երկու սուլուխցի հոն կը մնան՝ հսկելու: Չաուշը իր ընկերներուն կը պատգամէ. «Ինձ թողէք էստեղ, իսկ դուք անցէք գնացէք: Եղան (Գեորգ Չաուշի կինը – Ա. Գ.) ու Վարդգէսը (Չաուշի որդին – Ա. Գ.) ձեզ ամանաթ»:

Յաջորդ օրը՝ մայիսի 28-ին, Գեորգին մահամերձ վիճակին մէջ կը գտնէ քիւրտ ցեղապետ Ջայնալ պէրը: Գեորգը ջուր կը խնդրէ և ջուր խմելէ յետոյ կը մահանայ պէկի ձեռքերու վրայ: Չաուշի դիակը կը տարուի Մուշի Կողոմ թաղի գերեզմանատուն՝ Մաջքի դուրանի վրայ: Այդտեղ կը թաղուէին այն ֆետայիները, որոնց դիակները կ'իյնային սուլթանի զինուորականներու ձեռքը, և յուղարկուորումներուն կը մասնակցէին նաև թրքական իշխանութիւններու ներկայացուցիչները: Այսպիսով թուրք պետութիւնն անգամ յարգեց Չաուշի դիակը:

Ռուբէն Տէր-Մինասեան Գեորգի յուղարկուորութիւնը այսպէս կը նկարագրէ. «Իմ աչքի առաջ Գեորգին իջեցրին գերեզման, և Տարօնի արևը մայր մտաւ...»:

Հարկ է նշել խիստ կարևոր իրողութիւն մը, որ Գեորգ Չաուշ միակ հայդուկապետն էր, որ երբեք չլքեց Արևմտեան Հայաստանն ու երբեք չդադրեցուց պայքարը Օսմանեան կայսրութեան դէմ: Քսան տարի անընդմէջ Չաուշ ունեցաւ փոթորկալի կեանք մը և եղաւ Մասնոյ ու Տարօնի աշխարհին անվեհեր առիւծը:

Գեորգ Չաուշ ունէր արժանապատուութեան և կարգապահութեան բարձր գիտակցութիւն: Անիկա կ'ատէր փառասիրութիւնը, կը մերժէր իր կոնիներուն մասին խօսիլ և չէր սիրէր իրեն ձօնուած ժողովրդային երգերը լսել:

Չաուշի նկարագիրը կարելի է տալ քանի մը տողերով, որ կռուի ատեն, երբ աչքի կ'իյնար իր մարտավարութեամբ և կազմակերպչական ձիրքով, կը շեշտուէին անոր մէջ, բնականաբար, զինուորական և յեղափոխական յատկութիւնները միևնոյն ժամանակ: Յեղափոխական տիպար մըն էր՝ առողջ միտքով և յանդգնութեամբ, գերազանցօրէն խելքով տաղանդ մը, իսկ յանդգնութեամբ՝ հանճարեղ:

Գեորգ Չաուշը հայ ազգային-ազատագրական շարժման փառաբանուած հերոսներէն է: Ժողովուրդը երգեր հիւսած է անոր մասին, որոնք մինչև օրս կ'երգուին, և անոնց կը միանան նորերն ալ:

Երբ իր մասին կենդանութեան ժամանակ երգ կը գրէին ու կ'երգէին, Չաուշ հետևեալը կ'ըսէր. «Ինձ վրա երգեր մի՛ գրէք, լաճ, ես պոստանճու տղայ, պոստանճի եմ, ինձ բան տուէք»:

Համիտեան արինտու վարչակարգի դէմ ոտքի ելած հայ ֆետայական շարժման առաջին սերունդի ակնառու դէմքերէն և հայ ժողովուրդի ազատագրման գործին նուիրուած անձնագոհ մարտիկ Գեորգ Չաուշին ձօնուած երգերու մասին կը սկսինք «Առաքելոց վանքի կոհիւր» երգով, սակայն նախ անդրադառնանք դէպքին:


3 նոյեմբեր 1901-ին Անդրանիկը Գեորգ Չաուշի և 25-27 հայդուկներու հետ կը փակուի Մշոյ Սուրբ Առաքելոց վանքին մէջ, որ նաև կը կոչուէր Թարգմանչաց վանք: Անդրանիկը նախօրօք լաւ մշակած էր իր մարտավարութիւնը և վանքը ընտրած էր քանի մը նկատառումներով: Նախ՝ ան յայտնի վանք էր, և հաստատ օտարները ուշադրութիւն պիտի դարձնէին այդ կռուին: Վանքի բակը թաղուած էին Փաւստոս Բուզանդն ու Մովսէս Խորենացին: Բացի այդ՝ վանքը ունէր ամուր պարիսպներ և ջուրի աղբիւր, իսկ սնունդն ու ռազմամթերքը ֆետայիները նախօրօք բերած էին:

Դէպքին 4-րդ օրը թրքական կառավարութիւնը կ'առաջարկէ կամ անձնատուր ըլլալ, կամ լքել վանքը: Անդրանիկ 3 օր մտածելու ժամանակ կ'ուզէ, բայց թուրքերը չեն համաձայնիր և յարձակումի կ'անցնին՝ այդպէս ալ առանց ոչ մէկ արդիւնքի հասնելով:

Անդրանիկ կ'ուզէր իր կամքը թելադրել սուլթանին, որ պէտք է ստիպուած ըլլար զիջումներու երթալ: Սակայն 7 նոյեմբերին թուրքերը կը պաշարեն վանքը 3000-ոց բանակով: Պաշարումը տևեց օրեր: Թրքական բանակին մէջ 20 օրուայ ընթացքին ժանտատենդէ (թիֆոյիտ) շատ զինուորներ մահացան: Թուրքերը բանակցութիւններ սկսան պաշարման 17-րդ օրը:

1901 թուականի նոյեմբերի 27-ի գիշերը ֆետայիները սպիտակ սաւաններով աննկատ կը ճեղքեն վանքի պաշարումը և կը հեռանան:

Առաքելոց վանքի կոհիւն մասին կը հիւսուի «Առաքելոց վանքի կոհիւր» երգը: Ան ամբողջական



Մասնու. Գեորգ Չաուշի ծննդավայր Մլիթենք գյուղը

պատումն է օրուան իրադարձութեան:

«Առաքելոց վանքի կոնիւր» երգը տեղ գտած է շատ մը երգարաններու մէջ, ինչպէս՝ «Նոր քնար» (էջ 179-180), որի հրատարակութեան վայրն ու թիւը չեն նշուած:

Ահաւասիկ այդ երգը.

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՈՒԻՒՐ

Պաշարման մէջ է թարգմանչաց սուրբ վանք,
Որ զնա պատեց թուրք զօրաց փաղանգ,
Ահա կը լսուի որբոց աղաղակ,
Ահա օգնութեան կոչ է մեզ գանգակ:

Պաշարուած են հոն Անդրանիկ, Գէորգ,
Վաթսուն որբերով անտէր և անոք,
Ելէք, ճի, հայեր մի մնաք չէգոք,
Չքանդեն զվանք թուրքեր անողոք:

Ջանգակի հնչիւն հասաւ մինչ Սասուն,
Օգնութիւն կանչեց զբաշ Յարութիւն,
Որ իր հետ առաւ զկալեցի Ղազար,
Ձայնեց Համբարձման՝ ելի՛ր, ճի եղբայր,

Աւնդ, այն առեն չկար Համբարձում,
Կնքած էր իր կեանք, ննջած ի շիրմում,
Մի փոքրիկ խումբով հն ի հն ելան,
Գագաթ Սիւս սարին, անդր վար իջան:

Ձայնեց վանքի մէջ պաշարեալ եղբայր,
Քաջ եղէք, ահա, կ'օգնէ ձեզ Աստուած,
Քաջին հրացան գոռաց ի բարձունս,
Դէպի վանք դիմեց հետ իր ընկերաց:

Պատահեցան հոն զօրաց շղթային
Երեք զօրք մէկէն գլորին գետին,
Տրուեցան զօրքեր, մօտեցան վանքին,
Բայց վիրաւորուած հասան փափագին:



Գևորգ Չավուշի տունը Մկրտնք գյուղում



Ինկաւ և նոյնպէս կալեցի Ղազար,
Անտոքա քաջեր, ոնկնդիր եղբարք,
Բայց վանքի կողմէն տեղացուց գնդակ,
Տիրուցան ըրաւ թշնամու բանակ:

Յաղթութիւն, գոչեց, առինք յաղթանակ,
Հայի փրկութեան կանգնել դրօշակ,
Կամ մտնինք, չըլլանք մենք ազգին ծանակ,
Կամ յաղթենք, լինինք հայ ազգին պարծանք:

Երկրորդ երգը Մշոյ դաշտի Նորշէն գիւղի մէջ տեղի ունեցած կոնիւն մասին է՝ «Նորշէն գիւղի երգը» խորագրով:

Նորշէնի կոնիւր տեղի ունեցած է 1901 թուականի դեկտեմբեր 22-ին (այլ տուեալներով՝ 23-ին) Գէորգ Չաւուշի ֆետայիներուն և թրքական զօրքին միջև:

Նորշէն (այժմ՝ Սուսկու) գիւղը կը գտնուի Արևմտեան Հայաստանի Պիթիս նահանգի Մշոյ գաւառին մէջ՝ Մուշ քաղաքէն 11 քմ արևելք՝ Մշոյ դաշտի արևելեան կողմը, Մեղրագետի ձախ ափին՝ անոր ակունքին շրջանը:

Գիւղը ճանապարհէն հեռու ինկած էր և ունէր ամուր դիրք: Ան կը գտնուէր Մեղրագետի երկու վտակներու միջև, որոնք, գարնան վարարելով, Նորշէնը կը վերածէին թերակղզիի:

Նորշէն հայ կաթուղիի գիւղ եղած է, կը բաղկանար 7 թաղերէ: Օրին ունեցած է Սուրբ Աստուածածին եկեղեցին, ինչպէս նաև Սուրբ Սովիա կիսաքանդ եկեղեցին: Գիւղի եկեղեցիի կողքին Մխիթարեան միաբանութեան կողմէ հիմնուած է վարժարան մը:

Իր անստիկութեան պատճառով Նորշէնը քիչ ենթարկուած է թուրքերու ու քիւրտերու յարձակումներուն:

Նորշէնը Մուշի ամենահարուստ գիւղն էր: Բնակչութեան քանակով կը զիջէր միայն Խաս գիւղին: Գիւղը այնքան ընդարձակ էր ու մեծ, որ բնակիչներէն շատերը իրար չէին ճանչնար:

20-րդ դարու սկիզբը ունէր 400-500 տուն՝ 3500-4000 հայ բնակիչով:

Նորշէնը ունէր ընդարձակ ու արգաւանդ հողեր: Բնակչութիւնը կը զբաղէր այգեգործութեամբ, բանջարաբուծութեամբ, երկրագործութեամբ, անասնապահութեամբ, արհեստներով և առևտրով: ■

Դրվագներ Արցախ- Սյունիքի ազատագրական պայքարի պատմությունից (1722-1730 թթ.)

(պայքարի սկզբնավորման 300-ամյակի առթիվ) (մաս 1)

Արարատ Հակոբյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մուտք

Այս տարի լրանում է Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի սկզբնավորման երեք դարը: Ինչպես հայտնի է, այն կապված է ռուսաց կայսր Պետրոս Մեծի՝ 1722 թ. ամռանը կազմակերպած Կասպիական արշավանքի հետ: Ռուսական զորքերի մուտքը կովկասյան տարածաշրջան ոգևորություն առաջ բերեց հատկապես արցախահայության շրջանում, որը, հույս ունենալով ռուսական զենքի օգնությամբ ազատագրվելու պարսկական լծից, պաշտպանական ամրություններ (սղնախներ) ու զինյալ խմբեր ստեղծելով, նաև գործակցելով հարևան վրաց Վախթանգ 6-րդ թագավորի զինուժի հետ, 1722 թ. սեպտեմբերին (ուղիղ 300 տարի առաջ) ոտքի կանգնեց և ընդառաջ գնաց ռուսական բանակին: Այդ նույն տարում ոտքի կանգնեց նաև Սյունիք-Կասպի հայությունը, որի նման քայլի գլխավոր շարժառիթներն էին Պարսկաստանում տիրող ռազմաքաղաքական անկայուն իրավիճակը, աֆղանների ավերիչ արշավանքը, մայրաքաղաք Սպահանի գրավումը, շահ Մուլթան Հուսեյնի գահընկեցությունը և այլն: Ահա արտաքին քաղաքական այդ երկու իրադարձություններն էլ խթան հանդիսացան, որ հայոց միջնադարյան թագավորությունների (Բագրատունյաց և Կիլիկյան) անկումից դարեր անց հայ ազատագրական շարժման ու պայքարի այս երկու նշանավոր շրջանները՝ Արցախը (Ղարաբաղ) և Սյունիքը, դիմեն զինված պայքարի՝ ակնկալելով թոթափել պարսկաթուրքական լուծը և, վերջին հաշվով, վերականգնել հայոց պետականությունը:

Սույն հրապարակմամբ փորձ կարվի ցույց տալու, թե երեք դար առաջ ինչպիսի հերոսական էջեր է գրել այդ երկու շրջանների խիզախ հայությունը՝ պայքարի անփոխարինելի առաջնորդներ Եսայի Հասան-Ջալալյանի, Դավիթ Բեկի և մյուսների առաջնորդությամբ: Պատմավավերագիր նյութերի վրա հիմնված այս հրապարակումը պատմական փորձի և քաղաքական դասերի առումով ևս արդիական է և ուսանելի, մանավանդ երբ նկատի ենք ունենում, թե մեր ժամանակներում ինչ բարդ գործընթացներ են ծավալվում մեր հայրենիքի այս նույն հատվածի շուրջ:

Մաս առաջին

1. Ազատագրական պայքարը Արցախում:
Եսայի Հասան-Ջալալյան
«Յամէն գեղ մին բերթ այ»:
Իվան Կարապետ



18-րդ դարի առաջին քառորդին հայ ազատագրական պայքարի ամենախոշոր կենտրոնները դարձան Ղարաբաղը (Արցախ) և Սյունիքը (Կասպան): Անշուշտ, 18-րդ դարասկզբին քաղաքական կողմնորոշման՝ Արևմուտքից դեպի Ռուսաստան անցման առաջին խոշոր քայլը կատարած՝ հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու (1659-1711)՝ դեպի Այրկովկաս ու Իրան առաքելությունն իր նպաստը պիտի բերեր Արցախ-Սյունիքի ազատագրական շարժման ու պայքարի ակտիվացման գործում: Դարասկզբին Արցախի մելիքների քաղաքական դեկավարը դարձավ Գանձասարի (Աղվանքի) կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (1702-1728): Նրան կարելի է համարել հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման գլխավոր դեմքերից մեկը, եթե ոչ՝ առաջինը: Հայոց դեսպան Ի. Օրու՝ Աստրախանում 1711 թ. անսպասելի մահից հետո Եսայի կաթողիկոսը վերադարձավ հայրենիք: Նա Ի. Օրու հետ Ռուսաստան էր մեկնել՝ փորձելով բանակցել ռուսական կառավարության և Պետրոս Մեծի հետ: 18-րդ դարի սկզբներին բռնկված հայ ազգային-ազատագրական շարժումների մթնոլորտում Եսայի կաթողիկոսը և Արցախի մելիքները Հայաստանի ազատագրության հույսը սկսեցին մեծապես կապել Ռուսաստանի հետ: Այդ կապակցությամբ խորհրդային պատմաբան Զ. Արզումանյանն ընդգծում է, որ Եսային մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց հայ ազատագրական պայքարին ու դրա ռուսական կողմնորոշմանը¹:

Դեռ 1710-ական թթ. տարածաշրջանում քաղաքական դրությունը սրվում է. պարսից սեֆյան արքունիքի դեմ բորբոքվում են քրդերի, լեզգիների և հատկապես աֆղանների ապստամբական ելույթները: Նման պայմաններում հայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ սկսում են հայացքներն ավելի ու ավելի շատ ուղղել դեպի հյուսիս՝ Ռուսաստան՝ այնտեղից ակնկալելով օգնություն: Դրան նպաստեց

նան այն հանգամանքը, որ հետախուզական նպատակով Պետրոս ցարը 1715 թ. Իրան գործուղեց ռուսական մի նոր դեսպանություն՝ Արտեմի Վոլինսկու գլխավորությամբ²: Ա. Վոլինսկուն հրահանգվել էր նան հայերի մասին տեղեկություններ հավաքել, նրանց հետ քաղցրությամբ վարվել և բարեկամություն հաստատել³: Այլ խոսքով՝ ռուսական կառավարությանը իր ռազմավարական հեռագնա շահերի տեսանկյունից հետաքրքրում էր հայության հարցը: Ռուսաց դեսպան Ա. Վոլինսկին ժամանեց և հաստատվեց Շամախիում: 1717 թ. նա մեկնեց Սպահան և ռուս-պարսկական առևտրական գործունեություն ծավալելու անվան տակ գործնականում նախապատրաստում էր Պետրոս Մեծի Կասպիական արշավանքը:

18-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Եսայի կաթողիկոսը նամակներով ու աղերսագրերով փորձում էր ռուսաց ցարին ամեն կերպ խրախուսել արշավելու տարածաշրջան՝ պատրաստականություն հայտնելով տեղում սեփական զինուժերով ընդառաջ գնալու և դիմավորելու ռուսական զորքին: Մասնավորապես ուշագրավ է կաթողիկոսի 1716 թ. օգոստոսի 10-ի հայերեն նամակը՝ ուղղված Պետրոս Ալեքսեևիչ ցարին: Ի. Օրու քարտուղար Մինաս վարդապետ Տիգրանյանի միջոցով «քաջագոր» Պետրոս ցարին ուղարկված այդ աղերսագիր-նամակում մասամբ կարդում ենք հետևյալը. «...մեք պատրաստ ենք ընդ առաջ քո ըստ իմում կարողությունս, և մեր նահանգիս մեկիքովք մեծամեծովք և փոքումք և ցորժամ կամեսցի հզոր և մեծ թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն այ՛ (Աստծո - Ա. Հ.) յայնժամ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ»⁴: Այլ խոսքով՝ Եսայի կաթողիկոսը հասկացնում էր, որ ցարի կողմից ազդանշան լինելուն պես իրենք ուղի կկանգնեն: Կաթողիկոսի նամակը ռուսերեն թարգմանությամբ Պետական դեսպանական պրիկլազ է հասել ու գրանցվել 1717 թ. մարտի 14-ով⁵: Ռուսական թևարկությանը (հովանավորությանը) անհամբեր սպասող Գանձասարի կաթողիկոսը նմանաբովանդակ մի նամակ էլ գրել է 1718 թ. սեպտեմբերի 25-ին⁶: Ավելի ուշ՝ 1724 թ. փետրվարի 5-ին, Եսայի կաթողիկոսը և այս անգամ նան Ղարաբաղի մելիքները կրկին նամակ են հղում ռուսաց կայսրին՝ ակնկալելով, որ նա կգա օգնության, և նշելով, որ իրենք կովում են մուսուլմանների դեմ ու զենքի պակաս ունեն և այլն⁷:

Եսայի Հասան-Ջալալյանի ռուսական կողմորոշման (արևելման) առնչությամբ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը եզրակացնում էր. «Ակներն է, որ Ռուսաստանի զինական միջամտությունը և քաղաքական հովանավորությունը Եսային այս տարիներին դիտում էր որպես միջոց հայ ժողովրդի քաղաքական ազատությունը վերականգնելու համար (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»⁸: Դարձյալ, Ա. Հովհաննիսյանի դիտարկմամբ, Եսայի կաթողիկոսը արտահայտել է նան Ղարաբաղի մելիքների ու ազգաբնակչության քաղաքական տրամադրվածությունը Ռուսաստանի նկատմամբ⁹:

Այդ նույն ժամանակ հայ քաղաքական-ազատագրական պայքարի գործուն թատերաբեմ է դառնում Սյունիք-Կասպանը: Պատմահամեմատական զուգահեռ

անցկացնելով Արցախի և Սյունիքի ազատագրական շարժման ու պայքարի միջև՝ կարելի է տարանջատել երկու դիրքորոշում (արևելում): Եթե Եսայի կաթողիկոսը և մելիքները ժողովրդի մեծամասնության հետ ավելի հակված էին դեպի Ռուսաստանը՝ նրա հովանավորության տակ անցնելու, անգամ նրան միացվելու ակնկալիքով, ապա Սյունիք-Կասպանի ազատագրական պայքարում հարկ է ընդգծել մի շատ էական առանձնահատկություն, այն է՝ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարի գերակա նպատակը, ինչպես նկատել է Ա. Հովհաննիսյանը, ոչ թե «հայկական զավառները Ռուսաստանին միացնելն» էր, այլ **ազատությունը և անկախությունը**¹⁰: Այլ խոսքով՝ դավիթբեկյան ազատագրական պայքարը գործնականում շատ ավելի արմատական, նշանակալի ու հեռագնա էր, քան Ի. Օրու, նրա քարտուղար Մինաս վարդապետի կամ Եսայի կաթողիկոսի ծրագրերը, հղած դիմումները, վարած բանակցությունները: Ուստի պատահական չպետք է համարել դրանից երկու դար անց Դավիթ Բեկի գլխավորած պայքարից հոգևոր սնունդ ստացած և, փաստորեն, նրա գաղափարների ու գործի շարունակող Մեծն Գարեգին Նժդեհի ու նրա զինվորների՝ 1920 թ. օգոստոսի 25-ին Կասպանի Կավարտ գյուղի եկեղեցում տված դավիթբեկյան ուխտերը՝ «Կովել մինչև վերջին շունչը», «Հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար»¹¹: Ի միջի այլոց, նա իր քաջարի վաշտերը մկրտել էր Դավիթբեկյան անունով, որոնք ունեին իրենց առանձին դրոշմ՝ պատշաճ մակագրությամբ, կրում էին միատեսակ հագուստ, կարմիր կտորից գոտի և այլն¹²: Գ. Նժդեհի գլխավորած գնդի նշանաբանն էր «Հանուն հայրենիքի Դավիթբեկաբար»¹³: Դավիթբեկյան ուխտերի օրինակով էր, որ Գ. Նժդեհը հետագայում ստեղծեց ցեղակրոն ուխտերը և այլն:



Եսայի Հասան Զալալյան

Մաս երկրորդ

2. Պետրոս Մեծի Կասպիական արշավանքը և արցախահայության ակնկալիքները

1721 թ. օգոստոսի 30-ին Նիտշտադտում կնքված հաշտության պայմանագրով ավարտվեց Հյուսիսային պատերազմը, ինչն էլ արձակեց Պետրոս Մեծի ձեռքերը՝ կազմակերպելու խոստացված Կասպիական արշավանքը: Նույն տարվա դեկտեմբերին Պետրոս կայսրը պատասխանում է իր դեսպան Պ. Վոլինսկուն. «Քո նամակը ստացել եմ, որում գրում եք Դաույթ Բեկի (խոսքը լեզգիների առաջնորդի մասին է – Ա. Հակոբյան) գործերի մասին, և որ 1722 թ. գարնանը մեր զորքերը կմեկնեն Աստրախան»¹⁴: Եվ 1722 թ. մայիսին սկսվեց ռուսական զորքերի Կասպիական կոչված ռազմարշավը: Օգոստոսին ռուսական զորքերը մտան Դերբենդ: Հայտնի են այդ արշավանքի նախօրեին ու դրա ընթացքում վրաց Վախթանգ 6-րդ թագավորի 30-հազարանոց և Եսայի կաթողիկոսի գլխավորած հայկական ընտրովի 12-հազարանոց միացյալ զորքերի անորոշ սպասումները Գանձակի մոտ՝ Չոլակ կոչված վայրում:

Մինչ այս նշանակալի իրադարձությունը՝ 1721 թ. օգոստոսին, հատկապես արցախահայության համար մշտական սպառնալիք ներկայացնող ապստամբ լեզգիները իրենց առաջնորդ Դաույթ Բեկի գլխավորությամբ գրավել էին Հարավային Կովկասի առևտրական կենտրոն հանդիսացող Շամախի քաղաքը, ինչն ուղեկցվել էր կոտորածներով, ավարառություն-ավերածություններով: Քաղաքական անկայունության մեջ հայտնված պարսկական զինուժն ի վիճակի չէր կասեցնելու լեռնական ավազակախմբերի արշավանքները: Ընդ որում, Օսմանյան Թուրքիան հովանավորում էր իրեն դավանակից սուննի լեզգիների ասպատակիչ գործողությունները: Այդ ավարառություններից տուժում էին ոչ միայն քրիստոնյաները, այլև տեղի շիաները:

Լեռնական լեզգիների ոտնձգություններին դիմակայելու համար մինչ այդ հանգամանքների թելադրանքով դարաբաղյան մելիքություններում՝ լեռների վրա, հիմնվել էին ռազմապաշտպանական ամրություններ, որոնք հայտնի են **տղնախներ**¹⁵ անվանումով, մասնավորապես՝ Մեծ տղնախը Մոավի լեռներում՝ Թարթառ գետի վրա, և Փոքր տղնախը Վարանդայի գավառում՝ Շուշիի մոտ: Եսայի կաթողիկոսի գլխավորած Մեծ և Փոքր տղնախների միացյալ զորքի թիվը հասնում էր 12 հազարի: Տվյալներ կան, որ Արցախի տղնախներում կովոդների ընդհանուր թիվը հասնում էր 20 հազարի, սակայն նրանց մի մասը բավարար գեներ չի ունեցել¹⁶: Արցախի մելիքությունների պատմության խորագիտակ մասնագետ Ա. Մաղալյանի ներկայացրած տվյալները ևս հաստատում են, որ 1720-ական թթ. մելիքներն ի զորու էին կովի դաշտ դուրս բերելու ավելի քան 20 հազար զինվոր¹⁷: Բացի այդ երկու ամրացված բանակատեղիներից՝ հայկական զինված ուժեր կային Մյունիքում, որը կոչվել է նաև Փոքր Կասպան: Եթե հավատանք Եսայի կաթողիկոսի հաղորդած տեղեկությանը, ապա Դարաբաղի բոլոր տղնախների

մարտիկների ընդհանուր թիվը կազմել է 40 հազար¹⁸: Ավելին՝ Մինաս վարդապետի՝ 1723 թ. օգոստոսի 26-ին ռուսական հրամանատարությանն ուղղված մի գեկուցագրում հայկական զինուժի թիվը նշված է 50 հազար¹⁹: Այս թվերն, իհարկե, չափազանցված են: Հասկանալի է, որ նման ուռճացված թվեր էին ներկայացնում, որպեսզի մեծացնեին ռուսական կողմի հետաքրքրությունն ու վստահությունը հայկական զինուժի և կոիվներին նրա պատրաստ լինելու նկատմամբ:

Մերձկասպյան երկրամասերը գրավելուց զատ՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական պլանների մեջ էր մտնում նաև հայ-վրացական ազատագրական պայքարը հովանավորելը, և դրա համար առաջարկվեց, որ նրանց զինական ուժերը համախմբվեն և ընդառաջ գնան ռուսական բանակին: Միաժամանակ Պետրոս 1-ինը խորհուրդ էր տալիս վրաց թագավոր Վախթանգ 6-րդին հարձակվելու լեզգիների վրա: 1722 թ. սեպտեմբերի 22-ին Մինաս վարդապետը²⁰ տեղեկություններ է հաղորդում Պարսկաստանում տեղի ունեցող անցքերի մասին²¹: Իսկ սպասողական վիճակում գտնվող Եսայի կաթողիկոսը օգոստոսի 18-ին Թիֆլիսից հայտնում է, որ վրաց թագաժառանգ Վախթանգն իր 30-հազարանոց զորքով շարժվել է Գանձակ՝ լեզգիների դեմն առնելու²²:

Այդպիսին էր իրավիճակը, երբ Ռուսաստանի ռազմաքաղաքական բարձր ղեկավարությունը, պատճառաբանելով աննպաստ մի քանի հանգամանքներ՝ տեղի կլինային ռուսական զորքի սովոր չլինելը, համաճարակի տարածման ու հատկապես նավաբեկությունների հետևանքով ծագած պարենային խնդիրները և այլն, տեղում թողնելով կայազորը, Դերբենդից վերադառնում է Աստրախան՝ խոստանալով վերադառնալ հաջորդ տարի: Կայսրի՝ Աստրախան վերադառնալու լուրը ստանալուց հետո հայ զինուժը (նաև վրացականը) հոկտեմբերի կեսերին տխուր տրամադրությամբ վերադառնում և ամրանում է տղնախներում՝ փորձելով պարտիզանական-ապստամբական կոիվներով դիմակայել նոր-նոր Այսրկովկաս ու Դարաբաղ ներխուժած թուրքական զորքերին: Պետք է նկատել, որ թուրքերը, մասամբ նաև պարսիկները վրեժխնդիր էին լինում հայերից ռուսական ցարին հավատարմություն հայտնելու և տարածաշրջան հրավիրելու համար: Իսկ թուրքերի վրեժխնդրությունը դեռ այն ժամանակներից արտահայտվում էր հայության մեծ ու փոքր կոտորածներով: Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե Ռուսաստանը Այսրկովկաս մուտք էր գործում հայերի կամ վրացիների հրավերով: Թուրք-աղրբեջանական քարոզչամեթոդն ավելի էր լավ գիտակցի ու հանկանա, որ Ռուսաստանի մուտքը Անդրկովկաս պայմանավորված էր ոչ թե հատուկենտ հայերի նամակ-դիմումներով, այլ իր ծավալապաշտական շահերով (ռազմավարությամբ):

Իրականում պարզվում է, որ Կասպիական արշավանքի ընդհատման գլխավոր պատճառները ոչ թե նյութական ու ընակլիմայական աննպաստ պայմաններն էին, այլ Պետրոս Մեծի՝ Այսրկովկաս մուտքին Թուրքիայի կտրուկ հակադարձումը և նրա հետ ընդհարվելու վտանգը: Բանն այն է, որ Հյուսիսային

երկարատև (1700-1721) ու հյուծիչ պատերազմից հետո Պետրոս Մեծի համար շատ դժվար կլինեք մի նոր պատերազմ սկսել այս անգամ ոչ պակաս վտանգավոր թուրքիայի դեմ: Մինչդեռ Ղարաբաղի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները ակնկալում էին Ռուսաստանի մուտքն իրենց տարածաշրջան: Վավերագրերից հայտնի է Եսայի կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների 1722 թ. նոյեմբերի 1-ի ուղերձը Պետրոս 1-ինին՝ իրենց գինական օգնություն ցույց տալու խնդրանքով: Նամակը ստորագրել են Եսային և 9 մելիքներ: Վերջիններիս մի մասի գրագետ չլինելու պատճառով կնիքների կողքին դրված են նույն ձեռագրով ստորագրություններ²³:

Այնուամենայնիվ, 1723 թ. Պետրոս Մեծը, վերսկսելով գործողությունները կասպիական ափամերձ շրջաններում, գրավում է Ռեշան ու Բարուն: Ստեղծված իրավիճակում Պարսկաստանի հյուսիսային շրջաններում (Բորասանում) իրեն շահ հռչակած թագաժառանգ Թահմասպ 2-րդը Պետերբուրգ է ուղարկում իր դեսպան Իսմայիլ Բեկին, որն էլ սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում ռուսների հետ կնքում է հաշտության պայմանագիր (դաշնագիր), որով մերձկասպյան արևմտյան ափամերձ շրջաններն անցնում էին Ռուսաստանի տիրապետության տակ: Դրա դիմաց համառուսական կայսերական մեծությունը պարտավորվում էր պաշտպանել պարսկական շահական պետությունը թշնամի և ապստամբ ուժերի ոտնձգություններից²⁴:

Ռուսաստանի՝ Այսրկովկաս ներթափանցումը անհանգստացրեց թուրքիային: Վերջինս, պայմանավորված իր ծավալապաշտական նկրտումներով, փորձեց հանդես գալ Այսրկովկասի նոր հովանավորի ու տիրոջ դերում, և երկար բանակցություններից հետո՝ 1724 թ. հունիսի 12-ին, Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական (ռուսական կողմից Իվան Նեպլյուրը) գաղտնի պայմանագիր, որով Ռուսաստանը և թուրքիան Կովկասը բաժանեցին միմյանց միջև՝ ռուս-թուրք-պարսկական սահմանագիծը դարձնելով Արաքս և Կուր գետերի միախառնման տեղանքը: Ըստ վավերագրերի՝ Ռուսաստանի համար Անդրկովկասում կայուն բնական սահման էր **Կուր-Արաքս-Ախուրյան** ջրբաժան գիծը²⁵: Կ. Պոլսի պայմանագրով մերձկասպյան առափնյա շրջանները՝ Դերբենդից մինչև Մազանդարա, անցան Ռուսաստանին, իսկ Արևելյան Հայաստանը, Վրաստանը և Իրանի որոշ շրջաններ (փաստորեն ամբողջ Անդրկովկասը)՝ թուրքիայի հսկողության (ազդեցության) տակ²⁶: Ընդ որում, Ռուսաստանը և թուրքիան պայմանավորվում են, որ եթե պարսից շահը չհամաձայնի զիջել այդ մարզերը, ապա Ռուսաստանը և թուրքիան պետք է համատեղ հանդես գան Պարսկաստանի դեմ²⁷: Մինչդեռ, որքան էլ ցավալի է, ազատագրական պայքարի ելած և Ռուսաստանի օգնությանը սպասող Արցախը (նաև Սյունիքը) բնավ անտեղյակ էր ռուս-թուրքական հիսապփեցնող այդ գործարքից: Այստեղից էլ հասկանալի է, թե ինչ դժվարին օրեր էին սպասվում արևելահայ ապստամբ այդ երկրամասերին:

Ռազմաքաղաքական առումով ռուս-թուրքական

պայմանագրի հետևանքներից մեկն այն եղավ, որ թուրքերը ձեռքերի ազատություն ստացան՝ արշավելու դեպի Արարատյան դաշտ, գրավելու Երևանը: Այդ շրջանից պատմությանը հայտնի են Եղվարդի և Կարբիի հայ բնակչության ինքնապաշտպանական հաջող մարտերը: Շուրջ երեք ամիս էլ տևեց Երևանի հերոսական պաշտպանությունը: Թուրքական 30-հազարանոց բանակին Քյոնիքույու Արդուլլահ փաշայի գլխավորությամբ չհաջողվեց անմիջապես գրավել քաղաքը: Քաղաքի բնակիչները, որոնց մեջ հիշատակվում են հատկապես Կոնդ թաղամասի հայ բռշաները, համառ դիմադրություն ցույց տվեցին: Ի վերջո, մեծ զոհերի գնով թշնամուն հաջողվում է Ջորաբյուղով մտնել քաղաք և գրավել այն: Երևանի հերոսական պաշտպանությունը հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից է: Թուրքերի ռազմական նպատակներից մեկն էր Երևանը գրավելով, Արաքս գետի հոսանքով (Նախիջևանով) շարժվել դեպի Սյունիք ու Արցախ՝ հայերի ապստամբությունը խեղդելու համար:

Իսկ վերը նշված ռուս-թուրքական պայմանագրից անտեղյակ հայ ապստամբ շրջանները՝ Աղվանից (Գանձասարի) Եսայի և Ներսես Ջրաբերդցի կաթողիկոսները (եղել են հակաթուրք, բայց ազատագրական պայքարի հարցում գործակցել են²⁸) ու Ղարաբաղի մելիքները, 1724 թ. հոկտեմբերի 18-ով թվագրվող նամակ-խնդրագիր են հղել ռուսաց կայսրին՝ նշելով թուրքական ներխուժման սպառնալիքի մասին և խնդրելով խոստացված օգնությունը: Նամակում խնդրում և աղաչում էին դեպի Անդրկովկաս փոթանակի օգնության հասնել թուրքական հարձակման դեմն առնելու: Նամակագիրները նշում էին, որ մինչ այդ իրենք 3-4 անգամ օգնության խնդրանքով դիմել են Նորին մեծությանը, բայց պատասխան չեն ստացել, ուստի ստեղծված անել իրավիճակում նորից են դիմում, քանզի չգիտեն՝ ինչ պետք է անել: Հաղորդվում էր, որ թուրքերը գրավել են Թավրիզը, Նախիջևանը, Երևանը, Թիֆլիսը, Բորչալուն, Ղազախը և արդեն մտել են Գյանջա (Գանձակ) ու գալիս են իրենց դեմ: Այսուհետև նշվում էր, թե՛ Ձեր բանագնաց Իվան Կարապետը մեզ մոտ է և ուզում է մեր անունից գալ Ձեզ մոտ, սակայն ճանապարհները փակ են, և մենք խոնարհաբար խնդրում ենք՝ գթացեք և մեզ օգնության ձեռք մեկնեք: Կայսրին ուղղված նամակի վերջում դարձյալ կարդում ենք. «...խնդրեմք զմեզ քո խնամոց ներքոյ պահես և քո ողորմութիւն շուտով մեզ հասուցանես»²⁹: Երեք էջանոց խնդրագիր-նամակի ներքևում գրված են 7 յուզբաշինների, այդ թվում՝ Ավանի և Թարխանի, ինչպես նաև Պետրոս Մեծ կայսեր բանագնաց (սվիրակ) Իվան Կարապետի անունները՝ համապատասխան կնիքներով: Իր հերթին ռուսական կողմին շահագրգռելու և արշավանքի կազմակերպումն արագացնելու նպատակով Իվան Կարապետը 1724 թ. գարնանը զեկուցագիր էր ուղարկել գրաֆ (կոմս) Պյոտր Տոլստոյին՝ տեղեկացնելով, որ Ղարաբաղի լեռնաշխարհը (Հայաստանը) հարուստ է օգտակար հանածոներով՝ կապարով, պղնձով, երկաթով, արծաթով, սիլիտրայով և այլն³⁰:

Ի պատասխան հայոց կաթողիկոսների և մելիքների

րի նամակի՝ 1724 թ. նոյեմբերի 11-ի հրովարտակով ռուսաց կանցլեր (վարչապետ), կոմս Գավրիլ Գոլիկովը կայսերական մեծության անունից հանձնարարում է բանագնաց պրն Ի. Կարապետին, որ հասկացնի հայ մեծամեծներին, որ իրենք չեն կարող գործ ուղարկել օգնության, քանի որ օսմանյան Բարձր դռան հետ տրակտատ (պայմանագիր) ունեն կնքած (նկատի ունենի Կ. Պոլսի 1724 թ. հունիսի 12-ի պայմանագիրը), ուստի կայսերական մեծության անունից առաջարկում էր հայ ժողովրդին արտագաղթել ու բնակություն հաստատել ռուսական գորքերի գրաված մերձկասսայան շրջաններում՝ Գիլյան, Բաքու, Դերբենդ, Սուրբ Խաչ ամրոցը և այլն³¹: Արված առաջարկը հավանաբար չի բավարարել արցախահայ պայքարի համառ առաջնորդներին, և 1725 թ. մարտի 10-ով Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի մելիքներն ու յուզբաշինները օգնության խնդրանքով դարձյալ նամակ են ուղարկել Պետրոս Մեծին³²: Պարզվում է, որ նամակագիրներն անգամ տեղյակ չէին, որ Պետրոս Մեծն արդեն մահացել էր (1725 թ. հունվարի 28): Կաթողիկոսի խնդրագիր-նամակը բավական չհամարելով՝ նամակագրվանդակ մի խնդրագիր-նամակ էլ 1725 թ. հոկտեմբերի 28-ին ռուսաց կայսրի անունով ուղարկել էին Նովոսիի հայերը³³:

Հիշատակելի է, որ արցախյան ազատագրական պայքարի օջախը մարելու նպատակով 1725 թ. գարնանը (մարտին) թուրքերը մի խոշոր հարձակում ձեռնարկեցին հայոց (ղարաբաղյան) տղամանկների վրա, որը, սակայն, անվառնունակ վախճան ունեցավ: Սղնախների հրամանատարությունը, խորամանկ քայլի դիմելով, կեղծ հպատակություն ցույց տալով, ջարդում է Վարանդայի գյուղերում գիշերելու համար հարյուրյակներով տեղակայված թուրքական 4.700 հոգուց կազմված զորախումբը. սպանվում են նաև Շահին և Ալի փաշաները, իսկ Սալահ փաշան՝ գերեվարվում: Տվյալներ կան, որ փախչելով ազատվել է ընդամենը 100-200 ասկյար³⁴: Արցախցիները մի հաղթանակ էլ արձանագրել են 1726 թ. հունիսի սկզբներին (10-ին) Խաչնում³⁵: Դա երևում է Եսայի կաթողիկոսի և մելիքների՝ հունիսի 15-ի ամսաթվով վրաց թագավոր Վախթանգ 6-րդին ուղղված նամակից: Արցախահայությունը փոփոխակի հաջողություններով շարունակեց պայքարը՝ դարձյալ սպասելով ռուսական զորքի ժամանմանը: Դրա համար շարունակ նամակներ էին գրվում, ու բանագնացներ ուղարկվում, որոնք, սակայն, ձեռնունայն հետ էին դառնում: Այդպիսի մի հուսահատ նամակ էլ 1726 թ. նոյեմբերի 14-ի ամսաթվով ռուսական արքունիքին են հասցեագրել Քրիստոսի ծառաներ Ավան (Հովհաննես) և Օհան հարյուրապետները, որոնք նամակն ավարտում են հետևյալ խոսքերով. «...որ իմանամք, թագաւորն էս երկիրս չէ կալոյ, մե համար քօմակ ուղարկէք, որ մեք գամք թագաւորին դուլլող (ծառայություն – Ա. Հ.) անենք, որ մեր վերչն այս է»³⁶:

Ի վերջո, Արցախի ազատագրական պայքարը սկսում է մարել այն բանից հետո, երբ վշտերի, վիրավորանքների ու հուսահատության մեջ հայտնված արցախյան ազատամարտի ամենավառ ներկայա-

ցուցիչ, դրա ոգեշնչող ու կազմակերպիչ կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը 1728 թ. ինքնասպանությամբ կնքում է իր մահկանացուն: Կաթողիկոսի մահից հետո Ռուսաստանից օգնություն ստանալու հույսով 1729 թ. աշնանը ռուսական տերություն են մեկնում Ավան (Հովհաննես) և Թարխան հարյուրապետները, ընդ որում, Թարխանը մեկնում է Մոսկվա³⁷: Բայց երկուսն էլ, արդյունքի չհասնելով, այլևս չեն վերադառնում:

Այսպիսով՝ 1720-ական թթ. ապստամբ արցախահայությունը ոտքի էր կանգնել, ազատագրական պայքարի դիմել, տարիներ շարունակ բանագնացների միջոցով փորձել կապ հաստատել մերձկասսայան շրջանների ռուսական զորքերի և Պետրոս Մեծի արքունիքի հետ՝ խնդրել-աղերսելով զինական օգնություն: Հասկանալի է, որ Թուրքիայի հետ կնքած Կ. Պոլսի պայմանագիրը իրավական առումով թույլ չէր տալիս նման ռազմարշավ իրականացնել: Նման պայմաններում ռուսական կողմը իբրև հարցի լուծման մի տարբերակ առաջարկում էր, որ հայերն արտագաղթեն ու բնակություն հաստատեն Պարսկաստանից նոր նվաճած մերձկասսայան երկրամասերում: Օրինակ՝ կա Պետրոս Մեծի՝ 1724 թ. նոյեմբերի 10-ով թվագրվող հրամանագիրը՝ հայերին հող հատկացնելու Սբ Խաչ ամրոցի մոտ³⁸: Կա նաև նոյեմբերի 11-ի Նորին մեծություն կայսեր հրամանը, որ Իվան Կարապետը համոզի հայերին վերաբնակվելու նորանվաճ մերձկասսայան մարզերում և այլն³⁹:

Նույն վիճակը պահպանվեց նաև 1725 թ. Պետրոս Մեծի մահից հետո: Փաստահավաք Կ. Եզյանը, իր ժողովածուի ընդարձակ ներածականում խոսելով Պետրոս Մեծի արևելյան քաղաքականության և, ի մասնավորի, հայերի հետ հարաբերությունների մասին, իրավացիորեն առանձնացնում է նրա հետապնդած երեք նպատակները՝ 1) հայերի միջոցով զարգացնել առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, 2) հայերով բնակեցնել Պարսկաստանից խլված մարզերը և 3) ազատագրել հայերին մուսուլմանական լծից⁴⁰: Իսկ եթե հավատանք Պետրոս Մեծի խոսքերին, ապա, այն ժամանակների մտածելակերպով, քրիստոնյաների ազատագրումը մուսուլմանական լծից պիտի լիներ «Աստծո օրհնության գործը»⁴¹:

Այսպիսով՝ երեք դարի հեռավորությունից գնահատական տալով 1720-ական թթ. Ղարաբաղում ծավալված ազատագրական պայքարին՝ հարկ է արձանագրել, որ այն ոտքի հանեց արցախահայությանը՝ իր առաջնորդների գլխավորությամբ՝ առաջին հերթին ոգևորված Պետրոս Մեծի ծրագրած Կասպիական արշավանքից: Սակայն քաղաքական հանգամանքների ու սեփական շահերի թելադրանքով զինական աջակցություն չստանալով ռուսական բարձր իշխանությունների կողմից ու կրելով զուտ տեղային բնույթ՝ այն մարեց: Արցախյան ազատագրական պայքարը չստացավ համահայկական բնույթ: Բացի մեկ-երկու դրվագից՝ այն անգամ ընդհանուր գործակցության ու միասնականության եզրեր չգտավ այդ նույն ժամանակ ընթացող Սյունիքի (Կասպանի) ազատագրական պայքարի հետ: ■

Հղում

1. Տեն Արզումանյան Զ., Եսայի Հասան Զալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1979, № 5, էջ 56:
2. Տեն Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, Եր., 2010, էջ 27:
3. Տեն Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1973, էջ 108:
4. Զոն Г. А., Сношения Петра Великого с армянским народом. Документы, С.Петербург (СПБ), типогр. Импер. акад. наук, 1898, док. № 205, с. 316.
5. Տեն նույն տեղում, էջ 317:
6. Տեն նույն տեղում, փաստ. № 211, էջ 327-328:
7. Տեն նույն տեղում, փաստ. № 236, էջ 367: Նամակի ներքևում նշված են Ավան և Միրզա յուզբաշիների (հայրուրապետների) և մելիք Թամրազի անունները:
8. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 2, Եր., 1959, էջ 611:
9. Տեն նույն տեղում, էջ 527:
10. Տեն նույն տեղում, էջ 536:
11. «Արևոտ գիրք», Գորիս, 1921, էջ 33-34:
12. Տեն Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1917-1920 թթ., Եր., 2017, էջ 479:
13. Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 38-39:
14. Զոն Г. А., указ. соч., с. LIII.
15. Սղնախ նշանակում էր «ամրացված տեղ, ամրոց»:
16. Տեն Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти 18 века, М., 1954, էջ 161:
17. Տեն Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները 17-19-րդ դդ., Եր., 2007, էջ 212:
18. Տեն Армяно-русские отношения в первой трети XVIII века. сборник документов, под ред. А. Иоаннисяна, т. 2, ч. 2, Ер., 1967, док. 165, էջ 15:
19. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., էջ 359:
20. 1716 թ. Եսայի կաթողիկոսը Մինաս վարդապետին արքեպիսկոպոսի կարգավիճակով ձեռնադրել էր Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ (տեն Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 17-19-րդ դդ., Եր., 2006, էջ 24): Այս անչությամբ Վ. Գիլոյանը ևս նշում է, որ 1718 թ. Եսայի կաթողիկոսը հիմնում է ռուսահայ թեմ և Օրու գինակից Մինաս վարդապետին կարգում դրա առաջնորդ (տեն Գիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Եր., 1966, էջ 139):
21. Հայտնի է, որ Միր-Վեսի որդի Միր-Մահմուդ խանի գլխավորած աֆղանների արշավանքի հետևանքով գրավվեց Սպահան մայրաքաղաքը, շահ Սուլթան Հուսեյնը գահընկեց արվեց, իսկ հետո մահապատժի ենթարկվեց (գլխատվեց): Պարսից շահ հոջակվեց աֆղանների տիրակալ Միր-Մահմուդը, իսկ հետո՝ Աշրաֆը: 1722 թ. Սպահանի աֆղանական օղակումը մի կերպ ճեղքած, գահընկեց արված Սուլթան Հուսեյնի որդի, Սեֆյան տոհմի ժառանգորդ Թահմասպ 2-րդը (1722-1732) երկրի հյուսիսում՝ Գազվինում, իրեն շահ հոջակեց:
22. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., փաստ. № 213, էջ 332:
23. Տեն Армяно-русские отношения в первой трети 18 века, էջ 47-49: Տեն նաև Զոն Г. А., նշվ. աշխ., փաստ. № 232:
24. Տեն Договоры России с Востоком. политические и торговые. собрал и издал Юзефич Т., СПБ, 1869, էջ 168-189: Տեն նաև Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 143-144:
25. Տեն Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 6, ч. 2, Тифлис, 1877, էջ 123-124:
26. Տեն Соловьев С., История России с древнейших времен, т. 18, М., 1868, էջ 73:
27. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., էջ LX (60): Տեն նաև Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Եր., 1980, էջ 96:
28. Տեն Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գ. 2, Եր., 1973, էջ 132: Տեն նաև Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 99-100:
29. Այսպես՝ Աղվանից հակաթոռ Ներսես կաթողիկոսը 1724 թ. (գարնան) բնօրինակ նամակով դիմել է մելիք Թամրազին՝ խնդրելով տեղեկացնել, թե ինքն ունի արդյոք տեղեկություններ ռուսական զորքերի գալու մասին (տեն Армяно-русские отношения в первой трети 18 века, էջ 111): Զոն Г. А., указ. соч., док. № 248, с. 381-383. Տեն նաև Армяно-русские отношения в первой трети 18 века, էջ 200-202:
30. Տեն Армяно-русские отношения в первой трети 18 века, էջ 112: Տեն նաև Արրահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953, էջ 37-38:
31. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., փաստ. № 265, էջ 403-405:
32. Տեն նույն տեղում, փաստ. № 274, էջ 418-419:
33. Տեն նույն տեղում, փաստ. № 280, էջ 427-428:
34. Տեն Армяно-русские отношения в XVIII веке, т. 2, ч. 2, Ер., 1967, док. 309, էջ 233-234, док. 310, էջ 235-236: Տեն նաև Արրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 116-117:
35. Տեն Армяно-русские отношения в XVIII веке, т. 2, ч. 2, էջ 285:
36. Արրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 257:
37. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., փաստ. № 299, էջ 444-446:
38. Տեն Армяно-русские отношения в XVIII веке, т. 2, ч. 2, էջ 212:
39. Տեն նույն տեղում, էջ 215-218: Տեն նաև Զոն Г. А., նշվ. աշխ., փաստ. № 265:
40. Տեն Զոն Г. А., նշվ. աշխ., էջ LXXI (60):
41. Соловьев С. М., История России с древнейших времен, кн. VI, М., 1868, с. 79.

Չարենցը, «Երկիր Նաիրի»-ն ու Դաշնակցությունը (Մահվան 85-րդ տարելիցի առթիվ)

Անի Մելքոնյան
Պատմաբան

Այս տարվա նոյեմբերին կյրանա հայ գրականության վաղ դեմքերից մեկի՝ Եղիշե Չարենցի մահվան 85-րդ տարելիցը: Հայ հասարակության մեծ մասը Չարենցի մասին պատկերացում է կազմել խորհրդային քարոզչամեքենայի հրամցրած «ճշմարտության» շրջանակներում, որի համաձայն՝ Չարենցը «կարմիր» պոետ է, համոզված բոլշևիկ: Տասնամյակներ շարունակ սա էր խորհրդահայ հանրության համոզումը, սակայն բնական հարց է ծագում այդ դեպքում ինչու «կարմիր» պոետ և «համոզված բոլշևիկ» Չարենցը հավածվեց, կյանքն ավարտեց բանտում սոսկալի պայմաններում:

Չարենցի նկատմամբ «հավածանքները սկսվեցին 1933-ին՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի արգելանքով: Դրան հաջորդեցին հարցաքննությունները, այնուհետև նրան վտարեցին Գորդների միությունից, հեռացրին զբաղեցրած պաշտոնից, մեկուսացրին գրական կյանքից, դադարեցրին գրքերի տպագրությունը, այդ թվում՝ Մոսկվայում և Թիֆլիսում ռուսերեն թարգմանական ժողովածուները, հոչակեցին քաղաքականապես անվստահելի անձ, հսկողության պայմաններում հրամայեցին քաղաքից չբացակայել, մամուլում քննադատեցին թե՛ իրեն և թե՛ իր գրական խմբի անդամներին ու համակիրներին, թունավորեցին կենցաղը, մղեցին ծայրահեղ արարքների, ի վերջո, ձերբակալեցին, բանտում հարցաքննության փոխարեն դաժան հաշվեհարդար տեսան նրա հանդեպ, ուր և 1937 թ. նոյեմբերի 27-ին ավանդեց հոգին»¹:

Չարենցին հետադիմական նացիոնալիստ էին ներկայացնում և այլն: Հատկանշական է Երևանի «Գրական թերթի» 1937 թ. ապրիլի 23-ի համարում տպագրված Հայաստանի կոմկուսի ամբաստանագիրը. «Բակունց, Ալազան և ուրիշներ՝ գրականութեան մեջ գործել են որպես վսասարարներ, որպես հակայեղափոխականներ, որպես Տրոցկիստներ և Դաշնակներ, որպես միջազգային կապիտալի գործակալներ... Հետագայում Չարենցն ընկնում է հակայեղափոխական-նացիոնալիստների ազդեցութեան տակ: ... Նա (Չարենց) ստեղծում է մի գիրք՝ «Գիրք Ճանապարհի», որ ամբողջապես գրում է որպես հայ գրականութեան ազգային յատկանիշների խտացման թերթիայի իլյուստրացիա»²: Այս տխուր պատմության վերջակետը դրվեց այն ժամանակ, երբ Չարենցը միամտաբար վստահեց երկու ընկերների և պատմեց այն մասին, որ ժողովածուի բանաստեղծություններից մեկում «Պատգամ»-ում, յուրաքանչյուր տողի երկրորդ տառերով ակրոստիքոս է կազմել. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:³ Իսկ դա, ինչպես հայտնի է, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության նշանավոր կոչն էր՝ ժամանակին



ասված նաև Նժդեհի շուրթերով, որի նպատակը «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի» ստեղծումն է: Պատճառը, սակայն, միայն «Գիրք ճանապարհի»-ն չէր. խորհրդային հատուկ ծառայությունների ուշադրությունից չէր վրիպել նաև «Երկիր Նաիրի»-ն, որը լոկ վեպ կամ երգիծանք չէ, այլ պատմաբանների համար վաղուց շարժազերծված վավերագրություն: «Երկիր Նաիրի». այսինքն՝ անկախ և միացյալ հայրենիք. այս գաղափարապաշտության ցմահ ուխտավորն էր Եղիշե Չարենցը՝ որպես ազգային հավաքական հանճար, և Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ որպես ազգային հավաքական ուժ, ուստի դեպի Նաիրի տանող ճանապարհին նրանք կամա-ակամա պիտի խաչվեին այն կետում, որ տաճարն էր իրենց հավատամքի: Ապացույցը նաև «Երկիր Նաիրի»-ն՝ գրված 1921-1924 թթ.՝ Չարենցի ձախ որոնումների ամենաբուռն շրջանում: Ողբերգական, ահեղ, մահացու ճշմարտությունը թղթին հանձնելու համար Չարենցը գիտակցաբար պիտի գնար օրվա ճանապարհով: Ժամանակի գովքն անող անմուսա երկերի հանգույցում ոգու կանչով և պարտքով հառնում է պոետանման վիթխարի ասքը՝ «Երկիր Նաիրի»-ն»³:

Վեպի գրական-գեղարվեստական արժեքի շուրջ չծավալվելու համար խոսենք միայն պատմական անցքերի մասին, որոնց հիմքում Չարենցի ծննդավայր Կարսի անկումն է: Ինչո՞ւ և ինչպե՞ս ընկավ Կարսը: Հարյուր տարուց ավելի հայ գիտական ու քաղաքական շրջանակներին մտահոգող այս հարցի պատասխանն ամփոփված է «Երկիր Նաիրի» վեպում, որի առաջին գլխում նկարագրելով Կարսի հայտնի բերդը՝ Չարենցը գրում է. «Անտոկ է այդ բերդը — ամենքն այդ գիտեն,— և դավաճանությունն է, նենգ, ստոր, նաիրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր սրիկաներին»⁴: Այն մասին, որ Կարսն ընկավ դավաճանության հետևանքով, հետխորհրդային շրջանի պատմաբանները բազմիցս են խոսել, բայց խոսքը դարձյալ տանք Չարենցին. «...այն ժամանակ,



Ե. Չալոնյաց

երբ, ինչպես ասում են՝ քափ ու քրտինք կտրած՝ նախրյան ռազմիկներ էր ուղարկում գրավված վայրերը, այսինքն երկիր Նախրին պաշտպանելու համար, Տեղական Կոմիտեն, ոչ՝ տեղական, այսինքն նախրյան իշխանությունը, — երբ, մյուս կողմից, արդեն ստույգ լուրեր ուներ ստացած նախրյան իշխանությունը, որ, վերջին հորդաները հավաքած, թափթփուկ բանակներով մտադրություն ունի գրավված վայրերը խուժելու Հավիտենական Հիվանդը, — այդ ժամանակ ահա այդ ստոր, դավաճան, նախրուրաց մարդիկ դեգերտիրություն էին քարոզում նախրյան բանակում և խոսում էին հաշտության մասին, ո՞ւմ հետ. — հավիտենական ոսոխի ու Հավիտենական Հիվանդի, որին նախրցի մի ռազմիկի քացին անգամ բավական էր, — ինչպես ասում էր Մագույթի Համոն, — որպեսզի նա հավիտենապես փչեր իր շունչը, և նա, իհարկե, կփչեր իր շունչը, եթե չլինեին այդ նախրուրաց, ստոր, նախրադավաճան մարդիկ...»⁵: Պատերազմում դասալքությունից զատ՝ այդ նախրուրաց ու նախրադավաճան մարդիկ հաշտություն ու «խաղաղություն» էին քարոզում հայության դարավոր ոսոխի հետ, և այդ «խաղաղության» նախապայմաններից մեկը, եթե ոչ ամենազլխավորը, Արևմտյան Հայաստանից և Արևելյան Հայաստանի՝ Թուրքիայի հետաքրքրությունների տիրոջում գտնվող տարածքներից հրաժարվելն էր. «Եվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի էր ասել, որ կատարյալ հանգիստ ու խաղաղություն կտիրեր նախրյան այդ քաղաքում և շրջանում, եթե չլինեին մի շարք ստոր, անպատկառ, նախրադավաճան մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նախրապետության հանգիստը: Եվ ո՞վ գիտե՝ կկատարվեին արդյոք հետագա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ ստոր, անպատկառ, նախրադավաճան մարդիկ: Երևակայում եք՝ դրանք, այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ, դեմ էին «գրավված վայրերի» պաշտպանության, ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ ստոր, դավաճան, ազգուրաց մարդիկ, երբ դեռ չէր գետնահարված ոսոխը, ավելին՝ երբ իր վերջին հորդաները հավաքած՝ թափթփուկ բանակներով պատրաստվում էր «գրավված վայրերը» խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես ազատագրված երկիրը Նախրի...»⁶: Մեր օրերի համար

չափազանց ծանոթ այս պատկերն էր Հայաստանում 1920 թ.: Պետական դավաճանությունը կատարվում էր «խաղաղության» օրակարգով, և Չալոնյացը հստակ մատնանշում էր այդ ստոր, նախրուրաց մարդկանց. «...Եվ ովքեր էին դրանք, և ո՞վ էր դրանց ղեկավարը. — մի քանի լորճուկ սինլըքորներ... Եվ ո՞վ էր, ո՞վ էր, ինչպես ասացինք... «վերի գլուխը». — արյունարբու մի սկյուռ, ռուսացած մի մոնղոլ, մի գերմանական լրտես, որ պլոմբած վագոնով հայրենիք վերադարձած՝ չին գորքերու և անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունն ու հանձնել այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով իր այն խոստումը, որ տվել էր արյունարբու Վիլհելմ կայսեր... Ահա՛ թե ովքեր էին դրանք և ահա թե ո՞վ էր դրանց «ամենավերին գլուխը», այսինքն՝ ամենամեծ ղեկավարը»⁷: Արդեն հետխորհրդային շրջանում կաղապարագերծված հայ գիտական միտքը պետք է բացահայտեր, որ խոսքը բոլշևիկների մասին էր, որոնց առաջնորդ Լենինը, ինչպես արդեն գիտենք, թուրք-թաթարական ծագում ուներ (կովկասյան թուրք, արդի եզրույթաբանությամբ՝ ադրբեջանցի էր) և 1917 թ. հոկտեմբերին իշխանության էր բերվել Գերմանիայի կողմից հստակ ծրագրով, ու ամենևին էլ պատահական չէր, որ 1918 թ. մարտին կնքեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Ռուսական կայսրության գրաված բոլոր տարածքները զիջեց Թուրքիային, հետո էլ Ռուսաստանը ներքաշեց հյուժիչ քաղաքացիական պատերազմի մեջ, որում, իհարկե ի դժբախտություն հայերի, լենինյան ուժերը հաղթանակ տարան՝ ոչ առանց արտաքին միջամտության: Գրեթե նույն պատկերն է, ինչ 2018-2020 թթ. Հայաստանում:

Հայաստանում Լենինի թուրքամետ քաղաքականության սպասարկուները հայ բոլշևիկներն էին, որոնք, «համաշխարհային հեղափոխության» անիրական հովերով տարված, զոհաբերեցին Հայաստանն ու հայկական շահը Քեմալ-Լենին դաշնակցային շահերին: Այդ մասին է վկայում նաև Բաքվից նրանց հղված «Հույժ գաղտնի» վերնագրված հեռագիրը, որն այսօր պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այդ հեռագրում կարդում ենք. «Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոյրիներում և հարկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին անհար զինվորների շրջանում և առանձին հավաքություններում... ինչպես նաև թոռցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պարերազմի, հիմնական ինդիոր դարձնելով՝ Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկարմամբ ագրեսիվ նպատակներ չունի: Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ ինկերիայիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի): Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի ինկերիայիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվրանգի հեղափոխության

հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացումը: Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է կազմալուծել հայկական կոմունիստական բոլոր միջոցներով, դրանք են.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին,

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն ստաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք,

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխարավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից: Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների փրկապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիջոր կկապվի Ռուսաստանի հետ, ընդմիջոր վերջ կկրվի պարտազանցում և սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի:

Ծանոթություն - Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կուլ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Մոսվյան, Ա. Նորիջանյան, Շ. Ամիրխանյան, Բ. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան: Նո. 218, Բարու, 1920 ՄԵԳ. 20»⁸:

Եվ անհ «Երկիր Նաիրի»-ում Չարենցը պատմում է այս իրադարձությունների մասին՝ հակադրելով նաիրադավ ու նաիրուրաց բոլշևիկներին «Նաիրյան գործերի կենտրոնին»՝ «Ընկերությանը», ասել է թե՛ Դաշնակցությանը: Չարենցի հերոսը կամա թե՛ ակամա դառնում է Համո Համբարձումովիչ Աստվածատրյանը (Մագութի Համոն)՝ նույն ինքը՝ ՀՅԴ Կարսի կոմիտեի նախագահ Համբարձում Նոիրադյանը. «Նա եղել է Կարսի ծխական դպրոցի ուսուցիչ, հետագայում, հոր մահվանից հետո, դեկավարել է «Լույս» նավթարդյունաբերական ընկերությունը որպես կառավարիչ, որն ապահովել է նավթամթերքներով Բաթում-Կարս նահանգը: 1919 թ. Երևանում մասնակցել է ՀՅԴ Ընդհանուր ժողովին և ընտրվել Հայաստանի Քաղաքների Միության եռանդամ նախագահության անդամ»⁹: Համբարձում Նոիրադյանի որդին՝ Գևորգը, գոհվել էր դեռ Առաջին աշխարհամարտի տարիներին Կարսի ճակատում մղված մարտերի ժամանակ. «...սայր. 12-ին, Մագութի մոտ, նահանջի ճանապարհը պաշտպանելիս հերոսի մահով մեռավ Կարսի քաղաքագլխի որդին՝ կամավոր

Գևորգ Նոիրադյանը»¹⁰: Կարսի դավաճանական հանձնումից հետո Համբարձում Նոիրադյանը գերի է ընկել և տանջամահ արվել թուրքերի կողմից: Մագութի Համոյի մահվան տեսարանը Չարենցն այսպես է պատկերել. «Բերդը մտնելով, ոսոխի սպաները գտել են ընկ. Վառոդյանին, բժշկին ու Մագութի Համոյին՝ բերդի ամենաբարձր աշտարակի վրա, նաիրյան եռագույնի դոդոնջ փայտի մոտերքը, իրենց մագերը պոկոտելիս: Տեսնելով նաիրյան հրամանատարների այս անասելի վիշտը՝ խորին ակնածամքով մոտեցել են նրանց ոսոխի նենգ սպաները, մեծ պատիվ են տվել և մեծագույն շուքով տարել քաղաք: Պատմում են, որ ճանապարհին հանդիպած բոլոր ոսոխ-սպաները պատիվ են բռնել նրանց, և նույնիսկ ինքը, ոսոխի ամենամեծ փաշան սեղմել է նրանց ձեռքը և ցավակցություն հայտնել նրանց վշտի համար: Այսպիսի անհ մի չտեսնված վերաբերմունք են գտնում ընկ. Վառոդյանը, բժիշկը և Մագութի Համոն ոսոխի հրամանատարության կողմից, բայց, երկու օր անց, մի դաժան նենգությամբ հանձնվում են նրանք ոսոխի թափփուկ հորդանների ձեռքը, որոնք և կախում են նրանց ու ենթարկում զարհուրելի զանազանություն: Նրանք, ոսոխի այդ թափփուկ հորդանները աջից կախ են անում ընկ. Վառոդյանին, ձախից բժշկին, իսկ մեջտեղից— իրան, Մագութի Համոյին,— և սա չէ դեռևս ամենազարհուրելին ու ամենաքստմունքին: Ամենազարհուրելին ու ամենաքստմունքին այն է, որ նրանք, ոսոխի այդ թափփուկ հորդանները, ասում են, մի տախտակ են փակցնում երրորդ հեռագրայան մեջտեղը, Մագութի Համոյի գլխավերևը,— ու գրում վրան, երևակայմ եք— նաիրյան տառերով.

Մ. Հ. Ա. Ն.

որ նշանակում է՝

«Մագութի Համո՝ Արքա Նաիրի»¹¹:

Ինչպես տեսնում ենք, Համբարձում Նոիրադյանը, որի կերպարում ամփոփված է Դաշնակցության գաղափարախոսությունը, Հայաստանի ազատության ճանապարհին խաչին զամված այն հերոսն էր, որի չլինելով չկային, ցնորք ու միջ էին դարձել նաև Նաիրին և նաիրյան այն քաղաքը, որ նաիրցի վարպետները բացառիկ ամրությամբ էին կառուցել, և որի վրա այժմ օտարի դրոշն է ծածանվում, որովհետև այլևս այնտեղ չէ սիրեցյալ ժողովրդին կովի կոչ հողը ՀՀԴ-ն, ինչպես նշում է Չարենցը «Երկիր Նաիրի»-ում:

Ահա 1921-1924 թթ. «կարմիր պետ» Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի համառոտ պատմական ակնարկը, որին լրացնելու է գալիս 1933 թթ. գրված «Գիրք ճանապարհի»-ն, որում Չարենցը ներառել է նաև «Մահվան տեսիլ» շարքը: Այս շարքով նա իր հարգանքի տուրքն էր մատուցում հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչներին՝ Բաֆֆի, Խրիմյան Հայրիկ, Քրիստափոր Միքայելյան, Միմոն Զավարյան, Ռուստոմ Ստեփան Զորյան, Սիամանթո, Վարուժան, Ահարոնյան, Խաժակ, որոնց շատ հաճախ ստիպված էր եղել քննադատել խորհրդային մամուլի մեթոդային գաղափարական ճնշումների տակ: Ասվածի մասին են

վկայում հետևյալ տողերը.

Ես սրտի փոխարեն ունեի իմ կրծքում պողպատ գապանակ, Անծանոթ էր կյանքում ինձ համար ամենայն վարանում ու մահ,

Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մեծ մի բանակ, Եվ մեր սև դրոշի վրա գրեցի «Հայրենիք կամ մահ»:
Գնացին նոքա, այդ արի զինվորները, Երկիրն Ավերյաց, Տիրում էր այսպեղ բռնություն, և. ոճիր, և. կյանք անազար. Գնացին նոքա՝ սրբելու մեր դեմքից նախապրինք ու լաց, Բայց երկիրն արյամբ ողողեց տազնապատ Արքան այն գազան:

...Ես գրուիս դարձրի այնժամ դժոխքի մի գոռ մեքենա, Բայց դժբախտ փորձի ժամանակ Արքայից հեռու նա պայթեց,

Եվ խիեց-խորտակեց նա ինձ... Իսկ Արքան կենդանի մնաց,

Եվ, իբրև դևի փրփուր, նախճիրներ նյութեց ու ջարդեր... Եվ մնաց նա կենդանի... Կենդանի նա մնաց... Վսյ ինձ... Աշխարհից հեռացա ես այսպես՝ իմ ուխտը թողած անկապար...

...Եվ հանկարծ մտրեցան նրան երկու այր՝ դեմքով կալիճ Բուսնելով կարծես խավարից՝ մտրեցան նրան երկու այր, Երկու մարդ սևազգեստ, մուսլ, կրծքներին պղնձյա նշան.

...Եվ մեկը նրանցից, որ ուներ հայացքներ՝ մուսլ փայլով լի-

...Նա շարժում էր այդպես մի ոսկոր, կրկնելով անհայտ մի անուն

«ՀԸԴԱՅՈՒՆ, ՀԸԴԱՅՈՒՆ, ՀԸԴԱՅՈՒՆ» ձայնում էր կանչով շտապում

...«ԽԱՆ ԲԱՆ ՕՏ, ԽԱՆ ԲԱՆ ՕՏ, ԽԱՆ ԲԱՆ ՕՏ»...

Պատմությանը քիչ թե շատ ծանոթ մարդու համար պարզ է, որ խոսքը Քրիստափոր Միքայելյանի մասին է, որ մահափորձ էր կազմակերպում արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ և զոհվեց ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ Վիտոլ լեռան վրա, իսկ «ՀԸԴԱՅՈՒՆ» և «ԽԱՆ ԲԱՆ ՕՏ» ծածկագրված բառերից ակնհայտ է, որ խոսքը ՀՅԴ-ի մասին է, որը 1896 թ. կազմակերպել էր Բանկ Օտոմանի գրավումը, իսկ 1897 թ.՝ Խանասորի արշավանքը: Ահա այսպես խորհրդային բռնատիրության պայմաններում Չարենցը ապաշխարում է Դաշնակցության ու ազգային-ազատագրական պայքարի այլ անվանի գործիչների նկատմամբ իր երբեմնի վերաբերմունքի ու քննադատության համար և հայ ժողովրդին ներկայացնում իր իրական պատմությունը:

Ի հակադրություն այս ամենի՝ ունանք հաճախ հիշատակում են Չարենցի «Լենինն ու Ալին» ստեղծագործությունը, և տրամաբանորդ անհատը կարող է հարցնել, թե ինչու է հայ Չարենցի ստեղծագործության մեջ թուրք Ալին ողբում Լենինի մահը, ոչ թե, օրինակ, հայ Արմենը... Պատասխանը հստակ է. Լենինը հայկական հողերը բաժանել էր թուրքերին, վերացրել Հայաստանի՝ այդքան մեծ դժվարությամբ ձեռք բերված անկախությունը, և բնական է, որ Լենինի ձեռքով հայկական հողերը ստացած թուրք Ալին պետք է ողբար նրա մահը, ոչ թե

հայրենազրկված հայը: «Այս խոր ըմբռնումն ու ներքին պատկառանքը Չարենցն ուներ Դաշնակցության հանդեպ, ինչքան էլ հրապարակավ չխոստովաներ»¹²: Այս ամենի համար, բնականաբար, Չեկան չներեց Չարենցին, և նրան մեղադրեցին ժամանակի ամենամահացու «մեղքերում»՝ նացիոնալիստ ու դաշնակցական անվանեցին, մինչդեռ Չարենցը պարզապես մեծ հայրենասեր էր, որն անասելի ցավ էր ապրում բզկտված հայրենիքի համար: Իրական Չարենցին պետք է ճանաչել, բացահայտել ու վերադարձնել հայ ժողովրդին, որպեսզի վերջինս, կարողալով նրա հանճարեղ բանաստեղծությունները, կարողանա ընկալել ոչ թե դրանց արտաքին կաղապարը, այլ սյն, թե ինչ է դրված դրանց հիմքում: Չարենցի բանաստեղծությունների տողատակերը հասկանալը չափազանց կարևոր է հայ հասարակության գաղափարական ճիշտ կողմնորոշման համար, որպեսզի Կարսի օրինակով Արցախն էլ կեղծ խաղաղությանը զոհաբերած նախրադավ ու նախրուրաց մարդկանց պատճառով հերթական անգամ Հայաստան-Նախիրն մի՛ք ու ցնորք չդառնա: ■

Յղումներ

1. Գասպարյան Դ., Ստալինյան բռնաճշմունքները և հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը, «Գրական թերթ», 17.11.2017, <https://www.grakanter.am/archives/10720> (մուտք՝ 24.07.2022):
2. Եղիշե Չարենց - Սողոմոնեան (1879-1938), «Հայրենիք», Մարտ 13, 1974, N 18649, [http://tert.nla.am/archive/HGG%20TERT/hayreniq%20boston/1974/1974\(18649\).pdf](http://tert.nla.am/archive/HGG%20TERT/hayreniq%20boston/1974/1974(18649).pdf) (մուտք՝ 24.07.2022):
3. Հովհաննիսյան Ն., Եղիշե Չարենցը և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, «Ապաստ», 04.04.2018, <https://bit.ly/3PHCAwG> (մուտք՝ 24.07.2022):
4. Չարենց Ե., Երկիր Նախիր, Եր., 1977, էջ 10:
5. Նույն տեղում, էջ 150:
6. Նույն տեղում, էջ 148:
7. Նույն տեղում, էջ 149:
8. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
9. Զիլինգարյան-Նոհրադյան Ն., Ով է Մազուրի Համոն, Եր., 2016, էջ 4:
10. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 117:
11. Չարենց Ե., նշվ. աշխ., էջ 172:
12. Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ.:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

- ա) Աղբյուրներ
1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
- բ) Գրականություն
1. Չարենց Ե., Երկիր Նախիր, Եր., 1977:
 2. Զիլինգարյան-Նոհրադյան Ն., Ով է Մազուրի Համոն, Եր., 2016:
 3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:
- գ) Համացանցային նյութեր
1. Գասպարյան Դ., Ստալինյան բռնաճշմունքները և հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը, «Գրական թերթ», 17.11.2017, <https://www.grakanter.am/archives/10720> (մուտք՝ 24.07.2022):
 2. Եղիշե Չարենց - Սողոմոնեան (1879-1938), «Հայրենիք», Մարտ 13, 1974, N 18649, [http://tert.nla.am/archive/HGG%20TERT/hayreniq%20boston/1974/1974\(18649\).pdf](http://tert.nla.am/archive/HGG%20TERT/hayreniq%20boston/1974/1974(18649).pdf) (մուտք՝ 24.07.2022):
 3. Հովհաննիսյան Ն., Եղիշե Չարենցը և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, «Ապաստ», 04.04.2018, <https://bit.ly/3PHCAwG> (մուտք՝ 24.07.2022):

Հայկական հարցը «Մշակի» էջերում («Մշակ» օրաթերթի 150-ամյակի առթիվ)

Մարիամ Հովսեփյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, քան. գիտ. թեկնածու

150 տարի առաջ Թիֆլիսում Գրիգոր Արծրունու խմբագրմամբ սկսում է հրատարակվել «Մշակ» օրաթերթը, որն իր հետագիծն է թողել ոչ միայն հայ մամուլի պատմության մեջ, այլև ազգային, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Որոշակի ընդմիջումներով և ունենալով տարբեր խմբագիրներ՝ 1872-1921 թթ. ընթացքում՝ իր հրատարակության բոլոր շրջափուլերում, պարբերականը ներկայացնում էր ընթերցողներին հուզող խնդիրներն ու դրանց պատճառները, ինչպես նաև հասարակության առաջնության սեփական պատկերացումներն ու ծրագրերը¹: Ընդ որում, հետաքրքրությունների շրջանակը չէր սահմանափակվում միայն այսօրվա: Չկար որևէ բնագավառ, որ դուրս մնար խմբագրակազմի ուշադրությունից՝ քաղաքականությունից մինչև տնտեսություն և մշակույթ:

Թերթն ունեցել է հրատարակության մի քանի փուլ՝ Գրիգոր Արծրունու, Ալեքսանդր Քալանթարի, Համբարձում Առաքելյանի, Լեոյի խմբագրությամբ, թեև Լեոյից առաջ՝ մի կարճ ընթացք, խմբագրական գործը վստահվել է Հ. Առաքելյանի, Ա. Քալանթարի որդիներին ու Ալեքսանդր Շիրվանզադեին: Բնորոշ է եղել այն, որ առաջնահերթ հիմնահարցերի ու խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ հայացքներն ու մտտեցումները հիմնականում մնացել են նույնը: Աշխատառճի հիմքում Արծրունու առաջարկած նշանաբանն էր՝ քննական ու մտրակողական մտտեցում հանդես բերել ազգային խնդիրների նկատմամբ, զբաղվել ինքնաճանաչողությամբ, հանդես գալ առաջարկներով՝ աշխատելով դրանք կյանքի կոչել²:

Կարելի է վստահ պնդել, որ «Մշակը» կարողացել էր նվաճել հանրային լայն շերտերի համակրանքը՝ հրապարակումներով դառնալով առաջամարտիկ տարբեր ոլորտներում եղած հիմնահարցերի լուծման ուղիներ գտնելու փնտրտուքում, ինչպես և հաջողության էր հասել խմբագրության կորիզի շուրջ հասարակական առողջ ուժերի, անվանի մտավորականների համախմբման գործում:

«Մշակը» թեև տպագրվում էր ոչ հայկական քաղաքում, բայց այն օրերին հայաշունչ և հայաշատ Թիֆլիսը կարծես դարձել էր մեր ժողովրդին համախմբող և ուղղություն տվող հոգևոր կենտրոն: Գ. Արծրունին նպատակադրվել էր հողվածների միջոցով զարկ տալու զանազան հարցերի շուրջ հանրային քննարկումներին՝ այդպիսով ձևավորելով կարծիքներ ու առաջարկներ: Խմբագրի մտահղացմամբ՝ թերթը վերածվելու էր հայ հասարակական մտքի անդաստանն ակոսող մտավոր մշակի: Լիբերալ-ազատական ուղղվածության հետևորդ այս պար-



բերականը հիմնականում նախընտրում էր հիմնախնդիրների լուծման ոչ հեղափոխական մեթոդները՝ ապավինելով Ռուսական կայսրության կողմից անցկացվելիք կամ խոստացված բարենորոգումներին: Դա չէր առնչվում Հայկական հարցին վերաբերվող զարգացումներին: Այս առումով պետք է փաստել, որ խմբագիրն ու աշխատակիցները հատկապես ոգևորվել էին բալկանյան պատերազմների հետևանքով միջազգային ասպարեզում Արևելյան հարցի արծարծումներից և հույս էին փայփայում, որ ռուսական զենքի օգնությամբ Օսմանյան կայսրության ճիրաններում գտնվող քրիստոնյա ժողովուրդները կարող էին ստանալ բաղձալի ազատությունը: Կարծում էին նաև, որ արևմտահայությունը Ռուսաստանի աջակցությամբ ձեռքբազատվելու էր իր խնդիրներից: Նշենք, որ դեռևս 1876 թվականից Արծրունին «Մշակում» սկսել էր վարել «Հայոց խնդիր» խորագիրը, որի ներքո բարձրացնում էր ողջ հայությանը մտահոգող ազգային-քաղաքական խնդիրներ: Դրանց մեջ առաջնային էր արևմտահայերի ազատագրության հարցը, որի լուծումը պարբերականի հիմնադիր խմբագիրը կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ՝ գրելով, թե «ուրիշ ճանապարհ չկայ, եթե ոչ զենքը ձեռքին արին թափելով» հասնել Հայկական խնդրի լուծմանը³: Հետագայում նույնպես մշակականները այս հարցում չփոխեցին իրենց դիրքորոշումը՝ արևմտահայության փրկությունն ու ճակատագիրը կապելով Ռուսաստանի հետ, որին չմիանալու պարագայում անգամ համաձայն էին նրա աջակցությամբ ստանալ ինքնավար կարգավիճակ, միայն թե արևմտահայերը թողափեին թուրքական լուծը⁴: Հրատարակության գրեթե բոլոր փուլերում օրաթերթն առաջ է տարել այս գիծը, որը

խմբագրակազմի՝ ինչ-որ առումով ռոմանտիկական մոտեցումների արտահայտությունն էր: Դա ցայտուն կերպով դրսևորվել է Համբարձում Առաքելյանի խմբագրական գործունեության շրջանում: Աշխարհաքաղաքական շահերը կարծես անտեսվում էին այս պարագայում, թեև թերթը գրում էր, որ հայոց խնդիրը քաղաքական խաղերի առարկա էր դարձել Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի ձեռքին⁵: Պետք է արժանին մատուցել «Մշակի» պատմության մեջ անվանի գրող, հասարակական գործիչ Բաֆֆու կատարած անգնահատելի աշխատանքին՝ Գրիգոր Արծրունու խմբագրության շրջափուլում: Նա իր հրապարակախոսական հոդվածներով և ծրագրային-քաղաքական վեպերով ընթերցողներին էր ներկայացնում օսմանյան լծից ազատագրվելու հստակ ճանապարհ՝ նրանց հոգիներում վառելով ու բորբոքելով ազատագրական պայքարի կայծերը⁶: Այդ տարիներին մեծ ժողովրդայնություն էին վայելում Բաֆֆին «Մշակի» և «Մշակը» Բաֆֆու շնորհիվ: Ազատագրության ուղիների շուրջ Արծրունու և Բաֆֆու միջև առաջացած տարաձայնությունները կարճ ժամանակ անց վերջ են դնում նրանց համագործակցությանը: Հիմնական տարբերությունն այն էր, որ թերթի խմբագիրը հակված էր պետական բարեփոխումների և ոչ թե հեղափոխությունների միջոցով հարցերին լուծում տալուն: Այս ամենով հանդերձ՝ թղթակցական լայն ցանցն արդեն ցեղասպանության շրջանում պարբերականին հնարավորություն էր ընձեռում ամբողջական պատ-

կերացում տալու Հայկական հարցի զարգացումների և այն մասին, թե ինչ էր կատարվում Արևմտյան Հայաստանում:

Առաջին աշխարհամարտը բեկումնային եղավ արևմտահայության ճակատագրի համար: Օգտվելով աշխարհաքաղաքական նպատակներ հանգամանքներից՝ երիտթուրքական իշխանություններն սկսեցին հայերի տեղահանության և կոտորածների քաղաքականության իրականացումը⁷: Նրանց հեռահար և հիմնական նպատակները հայության ոչնչացումն ու Արևմտյան Հայաստանի, Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերի հայաթափումն էին:

Տեղեկատվական վակուումի պայմաններում արագորեն իրականացվում էր հայրենագրկման հայաջինջ ծրագիրը: Բուն Արևմտյան Հայաստանում կյանքը կարծես կանգ էր առել, և բնական էր, որ հաստատված գրաքննության աչալուրջ հայացքի ներքո անհնար էր արդեն միայն մայրաքաղաք Կ. Պոլսում հրատարակվող հայկական (և ոչ միայն) թերթերի էջերում անդրադառնալ հայերի հանդեպ իրականացվող եղեռնագործությանը: Առավելապես օտարերկրյա լրատվական գործակալությունների, բարի կամքի տեր դեսպանների, հյուպատոսների և ցեղասպանության մատակցից մազապուրծ վերապրողների շնորհիվ էին մամուլի հայկական ու օտարալեզու օրգանները տեղեկանում և իրենց լսարաններին տեղեկացնում մեր ժողովրդի հետ կատարվածի մասին՝ ձևավորելով համապատասխան հասարակական կարծիք:


Հայոց պետականության բացակայության պայմաններում խնդրո առարկա ժամանակահատվածում Ռուսական կայսրության մեջ գտնվող Թիֆլիս քաղաքում կենտրոնացած հայության մտավոր սերունդը փորձում էր ինչ-որ կերպ աջակցել փախստականներին ու այդ նպատակի շուրջ համախմբել կարող ուժերին: Այս գործում առանձնահատուկ դեր էր խաղում պարբերական մամուլը՝ ընթերցողների հոժ բանակով: Տեղին է մեջբերել պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Մարտիչյանի հետևյալ դիտարկումն այս առիթով. «Միսաված չենք լինի, եթե նշենք, որ 1915 թվականի հայալեզու մամուլի նյութերը տեղեկատվական մի հսկայական շտեմարան են, որոնք արխիվային վավերագրերի հետ մեկտեղ հիրավի ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Այլ աղբյուրների և ուսումնասիրությունների հետ հայալեզու մամուլի նյութերը համադրելու պարագայում հեշտությամբ կարելի է վերականգնել 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցավոր քաղաքականության ամբողջ պատկերն ու ժամանակագրությունը, անշուշտ՝ հաշվի առնելով մամուլի նյութերի ամսաթվերի՝ հին տոմարով լինելու հանգամանքը»⁸:

Թիֆլիսի «Մշակ» օրաթերթն առաջիններից մեկն էր, որ տեղեկացրեց թուրքական իշխանությունների կողմից իրականացվող արևմտահայերի կոտորածի մասին: Պարբերականը դրան անդրադարձել է բազմակողմանիորեն: Խմբագրակազմը կարողանում



Գրիգոր Արծրունի

Էր ամբողջականորեն արձագանքել հայության կոտորածներին՝ անաչառությամբ և ժամանակի թույլ տված օպերատիվության սահմաններում լուսաբանելով դեպքերի ընթացքը: Բազմաթիվ հրապարակումներում անթաքույց արտահայտված է «Մշակի» խմբագրակազմի այն՝ ինչ-որ առումով ոչ քաղաքական ու ռոմանտիկական կարծիքը, որի համաձայն՝ Ռուսական կայսրությունն իր գործով և հայ կամավորականների հետ ամեն միջոց գործադրել է Արևմտյան Հայաստանը կործանումից ու արևմտահայությանը բնաջնջումից փրկելու համար, սակայն անկարելի է եղել անհնարինը հնարավոր դարձնել⁹: Այսինքն՝ Առաջին աշխարհամարտում Ռուսական կայսրությունը ներգրավվել էր առավելապես հենց այս պատճառով և ոչ թե իր աշխարհաքաղաքական շահերից ելնելով: Իբրև ավաճի վկայություն պարբերականը հիշատակում էր նաև թուրքական կառավարությանն ուղարկված՝ Ռուսաստանի և դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի համատեղ հայտարարությունը, որով նրանք դատապարտում էին հայության կոտորածները որպես մարդկության դեմ ուղղված ոճիր, ինչի պատասխանատվությունը դնում էին իշխող կարիներտի բոլոր անդամների վրա¹⁰: 1915 թ. դեկտեմբերի 27-ի խմբագրականում Հ. Առաքելյանը հիշեցնում էր, որ Ռուսաստանը և եվրոպական երկրներն այդպես էլ կյանքի չէին կոչել Պետրոս Մեծի ու Եկատերինա թագուհու այն ծրագիրը, որով պետք է ստեղծվեր Թուրքիայի ավերածությունները և ջարդերը կանխող պատվարի դեր կատարող հայկական պետություն¹¹: «Մշակը» տպագրել էր անգլիական պառլամենտում լորդ Բրայսի ելույթը, և դրա շուրջ խորհրդածություններով էր հանդես եկել թերթի խմբագիրը¹²: «Գլադստոնից յետոյ սա առաջին անգամն է, որ անգլիական մի պետական անձն այսպես անվերապահությամբ խօսում է յօգուտ Հայաստանի և հայերի և խոստովանում է, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը բարոյապես և իրաւագիտապես պարտական են լուծել Հայկական հարցը և վերջ տալ մի բազմաշարժար ժողովրդի մարտիրոսագրութեանը»¹³, կարդում ենք թերթում: Պարբերականը գրում էր, որ հայությանը պատած հուսահատությունից հետո լորդ Բրայսի ճառը, որում նա նորից բարձրացնում էր արդեն «թաղված» համարվող Հայաստանի ինքնավարության հարցը, կարծես հույս, հավատ էր ներշնչում և մխիթարում արևմտահայությանը, «եթե միայն նրանք այժմ որևէ բանով կարող են մխիթարվել»¹⁴: Հ. Առաքելյանը հիշեցնում էր դեռևս 1913 թ. գարնանն Արևմտյան Հայաստանում շրջագայած և հողվածաշարը «Մշակ» թերթում տպագրած Տ. Օլգենիսի¹⁵ «Անհետացող Հայաստան» խորագիրը. «Չարագուշակ այդ մարգարէութիւնը այսօր կատարված իրողութիւն է... Այսօր այլևս ոչ մի կասկած չունենք, որ անհետացող Հայաստանը արդէն անհետացել է: Հայաստանը ջնջված... Սոսկալի է արտասանել այս բառերը, բայց որքան և սոսկալի լինի, դա կատարված իրողութիւն



«Մշակ» թերթը

է»¹⁶: Պարբերականը նաև փաստում էր, թե Արևմտյան Հայաստանը դարձել էր ավարատության, հրկիզության և կոտորածների դաշտավայր, իսկ հայ ժողովուրդը «Թիւրքաց Հայաստանում բնաջնջ լինելու իրողութեանն է դատապարտված, եթե ռուսական զենքը յաղթող չը հանդիսանայ»¹⁷:

«Մշակը» առաջարկում էր չուսահատվել և ազգովի միաբանվել¹⁸: Մրանք խմբագրակազմի առաջարկներն էին, որոնք, ինչպես թերթն էր վկայում իր վերլուծականներում և առաջնորդող հոդվածներում, մնացել էին «ձայն բարբառոյ յանապատի»¹⁹: Պարբերականն արձանագրում էր, որ ազգային մեծ աղետի առաջ հայ ժողովուրդն այդպես էլ չէր մեկտեղել համընդհանուր ջանքերը. «Փոքրոզի ազգ լինելով՝ մենք չը կարողացանք մեր կուսակցական շահերը գոհել ընդհանուր ազգային շահերին և գլուխ բերել ազգային ընդհանուր միութեան գործը»²⁰:

Տարագիր արևմտահայերի դրության, տեղաբաշխման, նրանց համար իրականացվող օգնության գանազան ծրագրերի մասին լուրերը, թղթակցությունները, ռեպորտաժներն սկսեցին ավելի հաճախադեպ դառնալ «Մշակի» էջերում՝ արդեն 1915 թ. օգոստոսի առաջին տասնօրյակից սկսած, իսկ հոկտեմբերի երկրորդ տասնօրյակից չի եղել թերթի որևէ համար, որում այդ թեմաներին անդրադարձ չիներ, ընդ որում, դրանց կցվում էին վերլուծականներ և նկատվող թերություններն ու բացերը վերացնելուն ուղղված խորհուրդներ:


Իրենց կարևորությամբ կարելի է առանձնացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և անձամբ Գևորգ V Սուրենյանցի նախաձեռնությամբ սկսված ազակցության ծրագրերի ընթացքը, Էջմիածնի գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի, Հայ նպաստամատույց ընկերության, Թիֆլիսում աշխատող Կովկասյան և Հայկական կենտրոնական կոմիտեի, Կովկասի հայոց բարեգործական ընկերության ծավալված ազգափրկիչ գործունեությունը լուսաբանող հոդվածներն ու թղղ-

թակցությունները: Դրանք հիմնականում զետեղված էին «Փախստականների վիճակը», «Հօգուտ հայ փախստականների», «Հրատապ սփոփանք Մայր-հայաստանցիներին», «Հայ գաղթականների դրությունը», «Որբերի համար», «Գաղթականների վիճակը» խորագրերի ներքո:

Նկատելի է այն, որ սկզբնական շրջանում տարագիր հայերի կարգավիճակը դիտարկվում էր՝ նկատի առնելով Առաջին աշխարհամարտի հետևանքով հայրենի բնակավայրերը ժամանակավորապես լքած մարդկանց, իսկ արդեն 1915 թ. ապրիլի վերջից կամ մայիսի սկզբից նրանց փախուստը կամ գաղթը և խնդիրները «Մշակի» հրատարակումներում ներկայացվում էին արդեն թուրքական ցեղասպանական գործողությունների ծիրում: Գաղթականների կենսապահովման և կյանքի փրկության խնդիրն էր առաջնահերթ թերթի աշխատակիցների, Թիֆլիսում և այլուր կենտրոնացած հայկական կառույցների և ընդհանրապես աշխարհասփյուռ հայության համար: «Ժամանակակից հայ կենսի իրականությունն մեջ ամենահրատապ հարցը հայ փախստական-գաղթականների հարցն է»²¹, - գրում էր «Մշակը»:

Թերթը լուսաբանել է բարեսիրական ծրագրերի ընթացքը, դրանց համատեղման, մեկ ընդհանուր մարմնի կողմից կառավարման աշխատանքները, առաջացած դժվարությունները: Այդ առումով առանձնահատուկ ընդգծվել է 1915 թ. մարտի 1-3-ը կաթողիկոսի հանձնարարությամբ Էջմիածնում տեղի ունեցած համաժողովը, որտեղ հայ փախստականների օգնության գործի կազմակերպումը դրվել էր «բացիօսալ» հիմքերի վրա²², մշակվել, վերջնական տեսքի էր բերվել և հաստատվել նրանց օգնելու ծրագիրը, ինչպես նաև ձևավորվել էր Գևորգ V Սուրենյանցի անսփռական ղեկավարության ներքո ստեղծված «Եղբայրական օգնության» գլխավոր կարգադրիչ կամ կենտրոնական հանձնաժողովը²³: Այն հոգևորական (4) և աշխարհիկ (8) ներկայացուցիչների միջոցով իր ձեռքում էր կենտրոնացնելու այդ աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը, թեև Կովկասի հայ բարեգործական ընկերությունը և նրան կից Հայկական կենտրոնական կոմիտեն ու Հայ գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությունն իրենց ազատ էին համարել նվերներ ստանալու և բաժանելու հարցում, ինչը մնացած բարեգործականների կողմից չէր ողջունվել²⁴:

«Մշակը» բավական մանրամասն է ներկայացրել «Եղբայրական օգնության» գլխավոր կարգադրիչ կամ կենտրոնական հանձնաժողովի նիստերը, որոշումները, ծավալած գործունեության արդյունքները և ֆինանսական հաշվետվությունները: Այս առումով բավական է հիշատակել, ասենք, «Էջմիածնի համագումարը փախստականների մասին» եռամսս թղթակցությունը, որում արտացոլված են բարեսիրական հայկական տարբեր կազմակերպությունների սերը տարագիրների և գործուն մտահոգությունը նրանց ճակատագրի ու խնդիր-



Րաֆֆի

ների շուրջ²⁵: Բացի այդ՝ կուպեկ-կուպեկ նշված էր, թե ինչի վրա էին ծախսվել հանգանակված կամ իբրև նվիրատվություն ստացված դրամական միջոցները²⁶, ինչն ապահովում էր կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը և մեծացնում հասարակության ու Ռուսական կայսրության պետական կառույցների վստահությունը նրանց աշխատանքի նկատմամբ: Այդ թղթակցության մեջ բերված էին տվյալներ հայ գաղթականների թվի, տեղաբաշխման վայրերի, ստացած և առաջիկայում նախատեսված աջակցության տեսակի ու ծավալների մասին: «Մշակը» իր հրատարակումների միջոցով օրըստօրե կարծես ամբողջական տեղեկատվություն է տվել արևմտահայերի կոտորածների ու տեղահանության, ջարդերից փրկված բեկորների սփռման աշխարհագրության, տարագիրների տեղաբաշխման, նրանց համար իրականացվող բազմազան ծրագրերի մասին: Եթե այլ պարբերականներ տարբեր կերպ չներկայացնեին այդ ամենը, միայն «Մշակը» բավական կլիներ, որ այսօր մենք ամբողջական պատկերացում կազմեինք հիշյալ խնդիրների վերաբերյալ: 1915 թ. տարեվերջյան համարում, ամփոփելով կատարած աշխատանքը, թերթը փաստում էր, որ միայն տեսականորեն չէր ծառայել հայ ժողովրդին, այլ դա արել էր նաև գործնականորեն²⁷: Թերթի խմբագրությունը հանուն հայ փախստականների հիմնել էր ընկերություններ ու հանձնաժողովներ, կատարել հանգանակություններ, կազմակերպել ուղևորություններ և այցելություններ, մասնակցել փախստականներին օժանդակելու նպատակներ հետապնդող ձեռնարկների: «Միայն յոգուտ փախստականների՝ «Մշակը» կարողացաւ հանգանակել մօտ 83000 րուբլի, բացի յոգուտ կամաւորների ստացված գումարից, որ հասաւ մօտ 50000 ր. գումարի»²⁸, - կարդում ենք տարեվերջյան

առաջնորդողում: Պարբերականը գրում էր, որ աշխատել էր «Խոսքի հետ գործ» նշանաբանով²⁹: «Մշակը» շտրիակալություն էր հայտնում իր բոլոր աշխատակիցներին ու վստահեցնում նրանց. «Քաջ իմացեք, որ ապագայ սերունդները, պատմությունը գնահատելու են ձեզ: Մի՛ մոռացեք, որ հունձը շատ է, իսկ մշակները՝ սակաւ: Վերսկսենք քաշել մեր լուծը, ծանր, բայց քաղցր լուծը վաղվանից՝ 1916 թ. ևս»³⁰:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել հետևյալը:

• «Մշակն» իր ուրույն տեղն ունի հայ մամուլի պատմության մեջ և ազգային կյանքում: Հրատարակման բոլոր շրջափուլերում այն ներկայացրել է համայն հայությանը հուզող թնջուկներն ու դրանցից ձերբազատվելու սեփական պատկերացումները:

• Օրաթերթը վերածվել էր առաջադիմության և լուսավորության համազգային կենտրոնի:

• Հրատարակության տարիներին պարբերականը նպաստել է տարբեր ոլորտներում նկատվող թերությունների և բացերի վերացմանն ու առաջընթացին, հայոց մտավոր ներուժի համախմբմանը համահայկական հիմնականային լուծման գործում:

• «Մշակը» անդրադարձել է Հայկական հարցի զարգացումներին, դիվանագիտական խաղերին՝ ոչ միայն արձագանքելով հայության նկատմամբ իրականացվող տարաբնույթ եղեռնագործություններին, այլև արժևորելով 1918 թ. մայիսյան հերոսամարտերը: Թերթի խմբագրակազմը համոզված էր, որ Սարդարապատում կանգնեցվել էր թուրքական զորքերի անկասելի թվացող առաջխաղացումը: Չէ՞ որ 1918 թ. հունվարից անցնելով հակահարձակման՝ թշնամու զինված ուժերն անընդհատ առաջ էին շարժվել, գրավել էին ու կոտորել՝ առաջացնելով խուճապ: Ըստ թերթի հրապարակումների՝ Սարդարապատում հայ ժողովուրդն ապացուցել է, որ թուրքերն ամենևին անպարտելի չէին, որ միավորվելու, իր առջև հաղթելու նպատակը դնելու դեպքում կարող էր պարտության մատնել թշնամու զորքին:

• Չպետք է մոռանալ, որ Սարդարապատից հետո թուրքական ռազմաքաղաքական իշխանությունները բանակցությունների մեջ էին մտել Բաթումում գտնվող հայկական պատվիրակության հետ, իսկ 1918 թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագրով ստիպված էին ճանաչել Հայաստանի անկախությունը: Մայիսյան հաղթանակները նպաստել են Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրմանը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաբաղի ճակատամարտերում գրանցած հաղթանակներով հայ ժողովուրդը ստիպեց թուրքական իշխանություններին հաշվի նստել իր շահերի հետ: Այս ամենն արտացոլված է նաև «Մշակի» էջերում նրա հրատարակության բոլոր փուլերում: ■

Աղբյուրը

1. Տե՛ս [https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B7%D5%A1%D5%AF_\(%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9,%D4%B9%D5%AB%D6%86%D5%AC%D5%AB%D5%BD\)](https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B7%D5%A1%D5%AF_(%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9,%D4%B9%D5%AB%D6%86%D5%AC%D5%AB%D5%BD)) (մուտք՝ 30.09.2022):
2. Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1872, թիվ 1 և 2:
3. Տե՛ս նույն տեղում, 1877, թիվ 63:
4. Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր», հ. I, Կահիրե, 2006, էջ 354:
5. Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1922», հ. II, Եր., 2017, էջ 15:
6. Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր», էջ 361-364:
7. Տե՛ս «Հայոց պատմություն», հ. III, գ. II, Եր., 2015, էջ 478-493:
8. «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թվականի մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)», հ. I, Եր., 2018, էջ II:
9. Տե՛ս «Մշակ», 1915, թիվ 159 («Անհետացած Հայաստան»):
10. Տե՛ս նույն տեղում:
11. Տե՛ս նույն տեղում, թիվ 288 («Լորդ Բրայսի ճառը Հայաստանի մասին»):
12. Տե՛ս նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում:
15. Տ. Օլգենիևը Պետերբուրգի «Биржевые ведомости» թերթի հրապարակախոս Անտոնան Բերեզովսկի-Օլգինսկու կեղծանուն էր (տե՛ս՝ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B6%D5%BF%D5%B8%D6%82%D5%A1%D5%B6_%D4%B2%D5%A5%D6%80%D5%A5%D5%A6%D5%B8%D5%BE%D5%BD%D5%AF%D5%AB-%D5%95%D5%AC%D5%A3%D5%AB%D5%B6%D5%BD%D5%AF%D5%AB (մուտք՝ 26.08.2022), տե՛ս նաև Ջաքարյան Ա., Ռուս հրապարակախոս Տ. Օլգենիևը Հայաստանի և Հայկական հարցի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1989, № 4, էջ 67-84):
16. «Մշակ», 1915, թիվ 159 («Անհետացած Հայաստան»):
17. Նույն տեղում, թիվ 127 («Չպետք է հուսահատվել»):
18. Տե՛ս նույն տեղում:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում, թիվ 102 («Եվրոպան և հայկական ջարդերը»):
21. Նույն տեղում, թիվ 45 («Այսօրվա համագումարը»):
22. Տե՛ս նույն տեղում, թիվ 50 («Ողջունում ենք Էջմիածնի համագումարի արդյունքը»):
23. Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև թիվ 53 («Էջմիածնի համագումարը փախստականների մասին»):
24. Տե՛ս նույն տեղում:
25. Տե՛ս նույն տեղում, թիվ 51, 52, 53 («Էջմիածնի համագումարը փախստականների մասին»):
26. Տե՛ս նույն տեղում:
27. Տե՛ս նույն տեղում, թիվ 291 (««Մշակը» 1915 թվին»):
28. Նույն տեղում:
29. Տե՛ս նույն տեղում:
30. Նույն տեղում:

Մեր մամուլի խճճանկարը

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի ասագ խմբագիր

Քանի մը յստակացում ի սկզբանէ:

Առաջին՝ վերնագրին մէջ ատելորդ տառ չկայ, և «ճ»-ի կրկնութիւնը արկածով չէ՛ եղած, մեկնաբանութեան չի՛ կարօտիր. մեր մամուլի ներկայ խճճեալ վիճակէն կը յառաջանայ այդ նոր բառը:

Երկրորդ՝ մամուլ ըսելով այստեղ կը հասկնանք բոլոր այն միջոցները, որոնցմով հասարակութեան հետ հաղորդակցութիւն կը ստեղծուի՝ որևէ տեղեկութիւն, որևէ գրական-վերլուծական կամ այլ նիւթ, որևէ լուսանկար և այլն տարածելու համար: Այդ միջոցները կ'ընդգրկեն թերթ ու պարբերաթերթ, ձայնասփիտ ու պատկերասփիտ, ինչպէս նաև համացանցային ընկերային հարթակները, ուր ոչ միայն հաւաքական, այլև անհատական հաղորդումներ կը կատարուին:

Երրորդ՝ այդ «մեր»-ը: Այդ դերանունը կը վերաբերի բոլոր անոնց, որոնք իրենց գիրենք տէրը կը զգան այդ մամուլին: Անոնք կրնան ըլլալ կուսակցութիւնները, միութիւնները, հաստատութիւնները և անհատները, որոնք կը կատարեն այդ հաղորդումները: «Մեր»-ը կ'առնչուի նաև համայն հաւաքականութեան՝ ազգին: Առանց տիրութեան այդ զգացումին՝ ո՛չ այդ «մեր»-ը իմաստ կ'ունենայ, ո՛չ ալ այս յօդուածը ընդհանրապէս:

Արդ ի՞նչ հարցեր կը ցցուին մեր մամուլին առջև, մե՛ր առջև:

Իրերու բերումով ուշադրութեանս առարկան դաշնակցական մամուլն է, սակայն այստեղ արծարծուող հարցերը, համոզուած եմ, որ կը վերաբերին բոլորին՝ անկախ մամուլի պատկանելութենէն:

Առաջին հարցը նպատակի ճշտումն է՝ մինչոչինչ առեն ճշտելով նաև, թէ որո՞ն ուղղուած է տուեալ հաղորդակցական միջոցը, նոյնիսկ տուեալ հաղորդումը, այսինքն՝ ի՞նչ է թիրախը՝ հայ հասարակութիւնը, անոր մէկ հատումը՝ կուսակցականները, երիտասարդները, մասնագէտներու խմբը մը և այլն, թէ՛ ոչ



հայ հասարակութիւնը, անոր մէկ հատումը՝ մեր բարեկամները կամ թշնամիները, մտաւորականները և այլն: Այս բոլորին նոյն ձևով, նոյն լեզուով, նոյն տրամաբանութեամբ, մանաւանդ նոյն դերակատարներով կարելի չէ մօտենալ, ինչ որ կը նշանակէ, թէ կարիքը ունինք մասնագիտական ներդրումի, որպէսզի մշակուին իւրաքանչիւրին «համապատասխան ռազմավարութիւն ու մարտավարութիւն», ինչ որ կը հաստատէր նաև ՀՅԴ մամուլը վերջին խորհրդածողովը՝ գումարուած 2021 թ. հոկտեմբերին Երևանի մէջ:

Նկատի պիտի առնուի նաև այն, որ կը գտնուի մրցակցային իրադրութեան մը մէջ, իսկ խօսքը տեղ հասցնելու համար պիտի կարենաս թիրախիդ ուշադրութիւնը գրաւել խօսքիդ նպատակայարմարութեամբ, իւրայատկութեամբ և որակով, այլև ճիշտ ատենին ըսելու փութկոտութեամբ:

Երկրորդ հարցը կազմակերպութեանն է: Շատ ընդարձակ նիւթ է ասիկա, առանձին համապարփակ քննարկման արժանի, բայց այստեղ կարելի է նշել կարիքը տեղեկատուական վստահելի շտեմարանի ստեղծման, մամուլի հին ու նոր արխիւներու մատչելիութեան, լրատուական տարբեր միջոցներու համադրման, անոնց միջև շտապ փոխանակութեան և այլն: Եւ ի հարկէ կը կարօտի հաւաքական աշխատանքի, քանի որ որևէ թերթ կամ հաղորդակցական այլ միջոց առանձին չի կրնար ապահովել այս բոլորը: Այսինքն՝ կայ կարիքը լրատուական գործակալութեան մը, որ կրնայ նեղ, ըսենք՝ կուսակցական, կամ նախընտրաբար լայն՝ համասփիտքեան, եթէ ոչ համահայկական պատկանելութիւն ունենալ: Այս մէկը կը ներառէ ի հարկէ առկայ մարդուժի լուսագոյն օգտագործումը, մանաւանդ նորերու պատրաստութիւնը և նիւթական եղած միջոցներու տնտեսումն ու յաւելեալ կոտաններու ստեղծումը: Նորերու պատրաստութիւնն ալ (խմբագիր, հրապարակագիր, լրագրող, թղթակից, լուսանկարիչ, նկարահանող և ընդ-





ՀՅԴ մամուլի խորհրդածողովը: Երևան 19ր հոկտեմբերի 2021 թ.

հանրապետ աշխատակից պատրաստելը) ինքնին առանձնաբար արժարժեղի նիւթ է:

Կազմակերպութեան մաս կը կազմէ տեղեկատուութեան և այլազան նիւթերու պատշաճ պատրաստութիւնն ու հասանելիութիւնը, տեղական բնոյթի ըլլան անոնք, տարածաշրջանային թէ համաշխարհային՝ հայկական թէ ոչ հայկական ոլորտներու վերաբերեալ: Յատկապէս այս վերջինը կը բացակայի մեր մամուլէն ընդհանրապէս՝ այն տպատրութիւնը ձգելով, թէ կարծես կ'ապրինք մենք մեզի, առանց որևէ առնչութեան մեր շրջապատին հետ:

Եւ ասկէ կ'անցնինք երրորդ հարցին, որ նոյնպէս կ'առնչուի կազմակերպութեան, կազմակերպութեան՝ ոչ միայն մամուլի ասպարէզին մէջ: Այդ լեզուի հարցն է: Մամուլի խորհրդածողովը իրաւամբ դիտել կու տար, թէ «Սփիւռքի պայմաններում հայերէնի իմացութեան նահանջին զուգահեռ նուազում են նաև հայախօս մամուլի պահանջն ու ազդեցութեան շրջանակը», ինչ որ կրնանք նկատել որպէս «ինքնիրացող մարգարէութիւն» (self-fulfilling prophecy). նաև երկար ժամանակի վրայ մեր թերացումներու հետևանք է այս նահանջը: Իսկ արևմտահայերէնի անտեսումին դէմ յանդիման՝ խորհրդածողովը հարկն ալ կը զգար նշելու, թէ «անհրաժեշտ է նաև արևելահայերէն լուրերի կենտրոնացումը վերածուի արևմտահայերէնի և դրանց տրամադրումը արևմտահայ մեր մամուլի ներկայացուցիչներին»: Տեղին չէ՞ յիշել Լևոն Շառոյեանի սա դիպուկ մատնանշումը. «Ամէն օր խորապէս կը տխրիմ ու կը ցախիմ՝ տեսնելով, որ սփիւռքահայ մեր թերթերը հետզհետէ կը հեռանան ԱՐԵՒՄՏԱՀԱՅ դասական մամուլի դիմագծութենէն,

նկարագրէն: Անոնք անզգալաբար կ'իյնան արևելահայերէնի ծանր ազդեցութեան տակ՝ թէ՛ բառապաշարով, թէ՛ դարձուածքներով, թէ՛ ոճով, թէ՛ լեզուական-քերականական ըմբռնումներով»¹: Բայց ասոր համար ոչ միայն մամուլի վիճակը, այլև ընդհանրապէս արևմտահայերէնի ուսուցումը կը դառնայ խնդիր, որ անմիջական ու ընդհանրական լուծման կը կարօտի:

Համոզուած եմ, սակայն, որ մամուլի անմիջական բարելաման ոլորտները չեն պակսիր, օրինակ՝ լուրերու և տեղեկատուութեան, արտասանուած խօսքերու կամ բանախօսութիւններու ամբողջական ներկայացումներու կողքին՝ նաև անոնց ամփոփումը մատչելի դարձնել լեզուական բարձր որակով, նոյնպէս օտար մամուլէն ու գրականութենէն կատարել անհրաժեշտ թարգմանութիւնները՝ քայլ պահելով աշխարհի ու մանաւանդ իմացական աշխարհի յառաջընթացին հետ, խմբագիրներուն, մանաւանդ երիտասարդ խմբագիրներուն ու անոնց անմիջական օգնականներուն համար վերաորակատրման հնարարութիւններ ընծայել և այլն: Կը մնայ ունենալ կամքը և ստեղծել անհրաժեշտ նիւթական կռուանները յաղագս բարելաման:

Անդրադառնանք, թէ մեր մամուլը իր դերը խաղալու համար կարիքը ունի մեր անսակարկ հոգածութեան ու խոր գուրգուրանքին: ■

1- «Արևմտահայերէնի կարօտով...», «Նոր յառաջ», 2022-07-28:

Ուղերձ-կոչ (Մասնակի կրճատումներով)

Միտերի հայրենակիցներ,

Մայր հայրենիքում և աշխարհի տարբեր երկրներում ապրող քույրեր ու եղբայրներ,

Այսօր՝ 2022 թ. սեպտեմբերի 2-ին, մենք՝ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հանրահավաքի մասնակիցներ, դիմում ենք ձեզ մեր ընդհանուր Հայրենիքի պատմական մի հատվածի՝ Արցախի ու նրա ժողովրդի համար ճակատագրական մի ժամանակահատվածում, երբ մեր միասնական ջանքերից ու մտածված գործողություններից է կախված պետության ու պետականության ապագան:

Երեսուներեկ տարի առաջ՝ ուղիղ այս օրը՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին, այս նույն հրապարակում մեր հազարավոր հայրենակիցներ «միացում», «ազատություն» և «անկախություն» էին վանկարկում՝ հորդորելով արտահերթ նստաշրջանի հավաքված նախկին մարզային խորհրդի ժողովրդական պատգամավորներին ճիշտ որոշում ընդունել հայկական երկրամասի ապագայի հարցում: Պահը վճռական էր, ինչպես հիմա. ազատության համար չպայքարող ազգերը կարող էին մնալ աշխարհաքաղաքական վերադասավորումների ընթացքում քանդվող տերությունների փլատակների տակ:

Այդ օրը, ընդհանուր գնալով Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի ազգաբնակչության ցանկությանն ու կամքին, հոչակվեց Լեռնային Ղարաբաղի Արցախի անկախ հանրապետությունը: Պատմական այդ որոշմանը հաջորդեցին միջազգային իրավունքի սկզբունքներին և դեռևս գործող միջազգային պետության օրենսդրությանը համապատասխան իրավական ու քաղաքական գործողությունները՝ համաժողովրդական հանրաքվե և ինքնիշխան պետության օրինական իշխանությունների ընտրությունները:

Ռ-ազմի դաշտում գրանցած հաջողություններին զուգահեռ ակտիվացավ նաև 1992 թ. գարնանից դարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով մեկնարկած և Մինսկի խմբի ձևաչափում կենտրոնացվող բանակցային գործընթացը, որի ամփոփումը հանդիսացավ 1994 թ. դեկտեմբերին ԵԱՀԿ բուդապեշտյան գագաթաժողովի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտող կողմի արձանագրումը:

Հետպատերազմյան տարիներին Արցախի Հանրապետությունը, հաղթահարելով բազմաթիվ նոր դժվարություններ, ձեռնամուխ եղավ միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից իրավական ու ժողովրդավարական պետության կառուցմանը, և այդ ջանքերի հանրագումարում 2006 թ. ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին սահմանադրությունը:

Ցավոք, մեր բոլոր զգուշացումները միջազգային կազմակերպություններին և կարգավորման գործընթացում ներգրավված դերակատարներին սպասված արդյունքներ չունեցան, և հակառակորդը, օգտվելով թողությունից, մշտական սադրանքներ էր ստեղծում Արցախի սահմանին:

Այդ ամենի կիզակետը պետք է համարել 2016 թ. քառօրյա պատերազմը, որի ընթացքում Ադրբեյջանը, օգտվելով միջազգային կառույցների ոչ հասցեական արձագանքներից, դիմեց հերթական արկածախնդրությանը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի ձեռնարկած հերթական լայնամասշտաբ պատերազմը ծանր ու աղետաբեր հետևանքներ ունեցավ մեր ժողովրդի համար: Օգտվելով մեր սխալներից և վերջին տարիներին իր կուտակած սպառազինությունների առավելություններից՝ թշնամու հաջողվեց ոչ միայն լքողներ փնտրել մեր անվտանգային ու պաշտպանական համակարգը, այլև զգալի մարդկային ու տարածքային կորուստներ պատճառել մեզ՝ տիրանալով հայկական Շուշին, Հադրութի ողջ շրջանին և պատմական Արցախի այլ ավանդական բնակավայրերի: Հազարավոր մեր հայրենակիցներ հայրենազրկվել և ունեզրկվել են՝ ստիպված լինելով ապաստան գտնել Արցախի և Մայր Հայաստանի առավել անվտանգ բնակավայրերում: Այն հանգամանքը, որ մեր երկրամասում ծրագրված հերթական ցեղասպանությունը կանխվել է Ռուսաստանի Դաշնության նախագահի անմիջական միջամտությամբ ու խաղաղապահ ուժերի՝ Արցախ մուտք գործելով, որևէ կասկած չի կարող հարուցել: Միաժամանակ մենք համոզված ենք, որ Արցախի անվտանգության ապահովման համար կարևորագույն բաղադրիչ է մեր սեփական պաշտպանական համակարգի կատարելագործումը:

Հայրենակիցներ,

Այսօր մենք կանգնած ենք լուրջ մարտահրավերների առաջ, որոնք վտանգում են մեր ազգային ինքնությունն ու հայկական պետականության ապագան:

Եվ որպեսզի կարողանանք հաղթահարել մեզ համակած պարտվողական տրամադրությունները և վերագտնել 1988 և 1991 թվականների ՀԱՅԻ նպատակապահ տեսակը, ինչպես նաև համաձայնեցված ու համակարգված աշխատանքներ նախաձեռնել ստեղծված իրավիճակը փոխելու համար, խիստ անհրաժեշտ է, որ մենք ազգովի համախմբվենք միասնական հայկական օրակարգի շուրջ:

Իսկ դա նշանակում է.

1. Հենց այսօր՝ պատմական 1991 թ. սեպտեմբերյան օրերից 31 տարի անց, արտահայտելով ողջ արցախահայության տեսակետն ու կամքը, այս նույն հարթակից մենք հայտարարում ենք, որ մեր ռազմավարական նպատակը՝ Արցախը Մայր հայրենիքին միավորելու գաղափարը, չի փոխվել, և, որ շատ կարևոր է, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը այդ ռազմավարական նպատակին մտնեցնող անհրաժեշտ քայլերից մեկն է:

2. Մենք ազդարարում ենք ի լուր աշխարհի, որ Արցախի ժողովրդի համար անընդունելի է Արցախի պետական համակարգը խաթարող ցանկացած կարգավիճակ, և ինքնիշխան պետությունը Արցախի ժողովրդի անվտանգության և իրավունքների պաշտպանության անհրաժեշտ նախապայմանն է:

3. Արցախի ապագայի շուրջ բոլոր ներկա և գալիք բանակցողները պարտավոր են հիմք ընդունել վերոնշյալ արձանագրումները և զգուշանալ այն կարմիր գծերից, որոնք նշվել են Արցախի Ազգային ժողովի ս. թ. ապրիլի 14-ի հայտարարության մեջ: Մենք պահանջում ենք առաջնորդվել միմիայն հնչեցված օրակարգի դրույթներով:

4. Միջազգային իրավասու կառույցներից և առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներից պահանջում ենք հավատարիմ մնալ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ամենաբարձր մակարդակով իրենց ստանձնած մանդատին և առաջնորդվել Մինսկի խմբի շրջանակներում ընդունված սկզբունքներով:

5. Համայն հայությանը, մեր քույրերին ու եղբայրներին կոչ ենք անում շարունակելու ապրել Արցախով, բոլոր հնարավոր միջոցներով օժանդակելու Արցախի վերականգնմանը և Արցախին վերաբերվելու որպես համազգային ձեռքբերում ու հպարտություն: **Սահմանները կապանքներ չեն, շղթաներն էլ կփշրվեն: Արցախը շարունակելու է պայքարը, և մենք դեռ տունելու ենք նոր հաղթանակներ:**



ԴՐՈՇԱԿ

Հանրահավաք նվիրված ԼՂՀ
անկախության հռչակման օրվան
Ստեփանակերտ 02.09 2022